Դուք պետք է ամբողջ ուշադրությամբ ոգեշնչով ձեր աշխատանքը կազմակերպական հատուկ ուշադրությամբ, արտադրական գործընթացի բոլշևիկների հատուկ ուշադրությամբ, բոլոր ուժերով ոգնեք դյուղական կոմունիստներին, ոգնեք դյուղական կոմերիտականներին և մեր կուսակցիկներին՝ այդ աշխատանքը տանելու ինչպես պետք է:

Ըստ էության պետք է նկատի առնել հետևյալը. մենք միշտ խոսում ենք դասակարգային պայքարի անհրաժեշտության մասին, կուլակության դեմ պայքարի ուժեղացնելու մասին, կուլակության սպառնացը հաղթահարելու համար միջոցներին կազմակերպելու մասին, սխոտեմատիկաբար ասում ենք, որ անհրաժեշտ է մաքրել կոլխոզները սոցիալապես խորթ տարրերից, կուլակային և հակահեղափոխական տարրերին հայտնաբերելու մասին, որոնք խցկվել են մեր կոլխոզները, որոնք պայքարում են մեր դեմ:

Բայց գործը նրանումն է, որ այդ կարևորագույն աշխատանքը մի շարք ռայոններում, մի շարք դեպքերում հանդիսանում են որպես մի ինչ-որ կամպանիա, չհասկանալով, որ այդ կարևորագույն միջոցառման կիրառումը պահանջում է մշտական սիստեմատիկ համառ պայքար:

Վոմանք արտասես են մտածում — դե, ինչ կա, հիմա պետք է կազմել գոտումը, ավարտել եմ կուլակներին կոլխոզներից և դրա համար կարող եմ հանդիստ կերպով բաշխը դնել տակը դնելով ավելի քնել: Այդպես կարող են մտածել և գործել մեր կուսակցության հետ ընդհանուր ոչ էլնչ չունեցող ոպորտունիստները:

Կոլխոզների գոտումը պետք է լինի սիստեմատիկ, պետք է միշտ կապակցված լինի այն բոլոր միջոցառումների հետ, որ մենք անց ենք կացնում դյուղում, կոլխոզում՝ և վարի ժամանակ, և ցանքսի ժամանակ, և մոտորմանը, և մշակման, և բերքահավաքի, և ամենման պլանները կատարելու ժամանակը:

Ցնեմ վարը վատ է անցել, հեմ ցանքսը վատ է արվել, պետք է պահել դրա պատճառը՝ դասակարգային թշնամու

վնասարարական աշխատանքը չերևան հանելու առաջադրումով: Տրակտորների, քարհավերների ու չրհորների նորոգման վատ վորակի, վատ վար ու ցանքսի մեջ պետք է դասակարգային թշնամու և նրա գործակալ ամբ ոպորտունիստների և «ճախ» ծուղակների ձեռքը վորոնել:

Վարի ժամանակ դասակարգային թշնամին աշխատում է ագիտացիա տանել, վոր ինչքան կարելի չի քիչ ու վատ վարել: Ջրելու ժամանակ նա աշխատում է այնպես անել, վոր ինչքան կարելի չի՝ վատ ջրեն: Ցանելու ժամանակ նա աշխատում է այնպես անել, վոր սերմը չեներ մեջ ցանեն, վոր սերմը քիչ ցանեն, վոր սերմը ցեխի մեջ ցանեն, գնչերը ցանեն, վոր սերմը քիչ լանկի:

Ահա թե ինչու անհրաժեշտ է, վոր կոմունիստներն ու բոլշևիկ-ստալինյան հարվածայինները ցանքսային կամպանիայի վճռական ուղղություններում դասավորվեն՝ կուսակցության վնասատարական աշխատանքը ժամանակին չերևան հանելու համար:

Չի կարելի խոսել կոլխոզների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման, կոլխոզներում աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու, կոլխոզներում դասակարգային թշնամու դեմ հաջող պայքար մղելու մասին, առանց դյուղում բարձրացնելու ՄՏԿ-ի քաղաքական դերն ու աղդեցությունը:

Այստեղից էլ ՄՏԿ-ների դյուղում կուսակցության կենտրոնական խորհրդային կազմակերպությունների առաջնորդման խնդիրը:

Պատահական չէ, վոր մեր կուսակցության կենտկոմն ու կվՀ հունվարյան պլենումը վորոշում է կայացրել ՄՏԿ-ների ու սովխոզների վից քաղաքական բաժիններ կազմակերպելու մասին:

ՄՏԿ-ներին վից քաղբաժիններ կազմակերպելով և քաղբյուջ, վորպես քաղբաժիններին դեկավարներ, ուղարկելով առաջավոր լավագույն կոմունիստների, ՄՏԿ-ները դյուղում կուսակցության և կառավարության իսկական նեցուկներ կը դառնան կոլխոզային շինարարության հետագա զարգացման, ամրապնդման ու դասակարգային թշնամու դեմ բոլշևիկյան հակահարված տալու գործում:

Այդ բոլորի հետ միասին՝ քաղաքժիննեները կոչված են իրականացնելու մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի լոզունգը,— ունևոր դարձնել բոլոր կոլխոզնիկներին:

Ընկերներ, ինքն ըստ ինքյան հասկանալի չե, որ այդ քաղաքժիննեների համալրումը տեղի կունենա բացառապես բազմիլիոնանոց վերցրած լավագույն առաջխաղ ենթերի – բոլշևիկների հաշվին:

Ամբողջ Անդրկովկասում գտնվում են մեծ թվով դիտաշխատող բազմիլիոնանոց կազմակերպությունը պետք է և պարտավոր է այն աղբյուրը հանդիսանալ, որտեղից կարելի չե գյուղի համար լավագույն պրոլետարական կադրերը առանալ:

Թույլ տվեք ընկ. Բերիան, որը բազմիլիոնանոց առաջ. —

«Բազվի ակտիվը, — դա լավագույնն է, ինչ որ ունի Անդրկովկասի (բ) Կենտկոմը: Բազվի կազմակերպությունը պետք է ամուր կերպով բռնեի Անդրբեջանի գյուղին, պետք է հաստատուն կերպով և յերկար ժամանակով այնտեղ նստի և այն ժամանակ, անկասկած, գյուղում կապահովվի բոլշևիկյան ուղիղ աշխատանքը»:

Ահա թե ինչու մենք, բացի մի քանի հարյուր ընկերներ ուղարկում մշտական աշխատանքի՝ ուժ յոնանման գյուղական և կոլխոզային դեկավարության ամրապնդելու համար, հատկապես մի շարք լավագույն առաջադիմած կոմունիստներ ենք ջոկում քաղաքժիննեների դեկավար կազմը համալրելու համար:

ՉՄՈՌԱՆԱԼ ՄԵՆԱՏՆՏԵՍԻ — ՎԱՂՎԱ ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ, մենք չարունակ բամբասկի մասին, գյուղում մեր այս կամ այն անելիքի մասին խոսելիս՝ միշտ ուշադրության մեծ մասը կոլխոզների վրա ենք կենտրոնացնում, կոլխոզների մասին խոսում յեվ դա ճիշտ է, բայց չատ քիչ ուշադրություն ենք դարձնում մենատնտեսներին, յերբեմն էլ նրանց մոռանում ենք:

Դուք հիշում եք, թե ինչ է ասել ընկ. Ստալինը, կոլխոզնիկների համաժողովում.

«Մենատնտեսների մասին այստեղ քիչ խոսեցին. բայց դա դեռ չի նշանակում, թե նրանք այլևս աշխարհում չկան: Վոչ, այդ չի նշանակում: Մենատնտեսները կան և նրանց հաշվից դուրս գցել չի կարելի, վորովհետև նրանք մեր վաղվա կոլխոզնիկներն են»:

Մենատնտեսները դեռ ևս Ադրբեջանում բնդհանուր տնտեսությունների 48–49 տոկոսն են ընդգրկում:

Ճիշտ է, թամբակային ռայոններում կոլեկտիվացման ավելի մեծ տոկոս ունենք,— 68–70 տոկոս, սակայն այնտեղ էլ մենատնտեսները թամբակի հողերի 20–22 տոկոսն ունեն, իսկ Ադրբեջանում, ամբողջությամբ վերցրած, նրանք սպրին տարածության կեսը մենատնտեսների ձեռքին է դրած երևում: Հետևաբար նորանց հաշվից դուրս գցել չենք կարող վոչ մի դեպքում: Սակայն Ադրբեջանում վորոշակի կերպով թեքագնահատում են մենատնտեսությունները, իսկ յերբեմն էլ ուղղակի ոպորտունիստորեն անդիտանում են մենատնտեսին, վորը դեռ ևս, մանավանդ հացահատիկային ռայոններում չատ մեծ դեր է խաղում:

Դա յել պարտավորեցնում է ձեզ չմոռանալ, վոր կոլխոզում, կոլխոզային բջիջում, կոլխոզի բրիգադում աշխատելու հետ միասին՝ անհրաժեշտ է վորոշ աշխատանք տանել մենատնտեսների չարքերում, ուշադիր, զգայուն լինել դեպի նրանց կարիքները, նրանց հետ չարունակ հաղորդակցություն ունենալ և այլն:

Սակայն մենատնտեսների մասին խոսելով՝ պետք է նկատի ունենալ, վոր այստեղ բնդհանուր մոտեցում դեպի նրանց լինել չի կարող: Մենք նրանց պետի դիֆֆերենցացրած մոտեցում ունենանք: Հողի վրա ապրելուն աշխատող մենատնտեսների հիմնական մասսայի կողքին կա և մենատնտես, վորը առևտրի մեջ է խրված, իրեն ապահովագրելու, կուլակի մոտ գնացել և այլն: Նրա մասին խոսք լինել չի կարող: Իսկ ահա այն մենատնտեսը, վորն աշխատում է, նա պետք է մեր ուշադրության և մեր ապրեցության կենտրոնում լինի: Յեթե այդ բանը մենք չանենք, յեթե այդ մենատնտեսին մեր ապրեցության, մեր դեկավարության տակ չառնենք, ապա նրան կուլակն իր կողմը կքաշի:

Ինչպես պետք է այդ բանն անել: Պետք է դյուրում տար մեր բացատրական աշխատանքը, մեր ագիտացիոն աշխատանքը, մեր մասսայական աշխատանքը նրանց վրա ևս տարածել: Դա նշանակում է կոլխոզներում դարձնացանի կամպանիան պատրաստելու տեսակետից մի ջոգացառումները ամենալուրջ կերպով ղեկավարելով՝ միաժամանակ և դրանք վիճ մենատնտեսներով —ինչպես են պատրաստում սերմը, ինչպես են պատրաստում հրվիզ դյուրատնտեսական ինվենտարը, ինչպես են վարում, ինչպես պետի ցանանն, ինչպես պետի բամբակը խնամեն և այլն:

Մենատնտեսների շարքերում աշխատանք տանելու անհրաժեշտությունը պետք է բացատրել կոլխոզնիկներին՝ կոնկրետ որինակներով ցույց տալով, որ նրանք անմիջականորեն շահագրգռված են մենատնտեսների տնտեսությունը բարելավման գործում:

Ցնծե, ասենք, կոլխոզային դաշտը մաքրված է մոլախոտերից, իսկ նրա կողքին մենատնտեսի դաշտը մոլախոտով ծածկված է, ապա այդ մոլախոտը վաղը կոլխոզային դաշտ կանցնի:

ԲԱԳՎԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅԵՆ ԱԳՐԲԵՋԱՆԻ ԳՅՈՒՂԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ընկերներ, այս տարվա ցանքսային կամպանիան որևիկ տեղումեն ավելի բարեհաջող պայմաններում ենք տանում, քան անցյալ տարի: Տեխնիկապես մենք զգալիորեն ավելի ենք պրնված: Այս տարի կուսակցությունն ու կառավարությունը մի շարք նոր միջոցառումներ են ձեռք առել, որոնք յեզակի կերպով են խոչոր դեր են խաղում կոլխոզնիկների ու մենատնտեսների տնտեսությունների բարձրացման գործում: Այս տարի բամբակի պայմանագրումը շատ ավելի յե նյութապես հատուցում բամբակագործներին, քան անցյալում: Հացատնտեսական կուլտուրաների մթերումները հարկի ուժ ունեն ցոլ պարտադիր մատակարարումով փոխարինման ահագին չափով լթման և հանդիսանում կոլխոզնիկների ու մենատնտեսների տնտեսությունների բարձրացմանը:

Մենք կառավարության վորոշման ունենք, որ կոլխոզ ներին պարտավորեցնում և տուգանել սլրոդուլ անողներին,

կոլխոզից դուրս վռնդել լոդրներին, ձրիակերներին, դատարկապորտաներին, պնակալիզներին և այլն:

Դրանք բոլորը հզոր լծկաններ են, որ յեթե ազնվաբար կյանքի մեջ մտցրվեն, կանոնավոր կերպով բացատրվեն կոլխոզնիկներին ու մենատնտեսներին, դյուրատնտեսական պրբանի լրատործումը կապահովվի:

Հետևաբար՝ ամբողջ գործը մեղնից է կախված, թե վոր քան ազնվաբար ու բարեխղճությամբ կկատարենք կուսակցության ու կառավարության հրահանգները:

Մենք Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի ու Աղրկոմկուսի (բ) կենտկոմի մի շարք կարևոր պրոշումներն ունենք, վորոնք գարնան ցանքսային կամպանիան տանելու մի անդամալի կոնկրետ հրահանգներ են պարունակում: Սակայն ամբողջ հարցը նրանում է, թե ինչպես են կենսագործվում այդ հրահանգները, ինչ չափով ենք յերաշխավորված, վոր նրանք կոլխոզնիկներին են հասնում: Վատ և, ընկերներ, գործի այդ կողմը: Այդ բանը վատ է և մեր մի քանի կենտրոնական կազմակերպություններում:

Որպեսզի համառոտ վերցնենք նախկին Կոլխոզցենտրի կենտրոնական ապարատի՝ այժմյան Հողժողկոմատի ապարատը: Այդ ապարատն այսօրվա՝ բազմում ճևերի, կոլխոզների արտադրական – ֆինանսական պլանների բրանինների մշակման, այդ ճևերի համաձայնեցման, նրանց տպագրության համար 108 որ և գործադրել, իսկ անմիջականորեն ոայոնների արտադրական պլաններ կազմելու, այսինքն՝ ոպերատիվ աշխատանքի համար — մնացել է 10 որ: 108 որ հանցավոր կերպով շռայլվել է կանցելյարիական քաշքշուկների վրա, իսկ ոպերատիվ աշխատանքների համար 10 որ թողնվել:

Ահա թե մեղնում ինչպես են իրականացվում Համկոմկուսի (բ) կենտկոմի, Անդրյերկոմի և Աղրկոմկուսի (բ) կենտկոմի ամենակարևոր վորոշումները:

Մոտերքս մի քանի ոայոններում կատարված ստուգումը ցույց է տվել, վոր մի շարք ոայոններում գործն ավելի վատ է:

Բամբակի գարնան ցելը թեև տեմպերի կողմից ավելի բարձր է յեղել անցյալ տարվանից, սակայն հետ է մնում

պլանային առաջադրություններից: Իսկ ի՞նչպես է վարվի վորոշակի դրությունը: Պետք է ասել, վոր մեզնում վարվի վորոշակին պատշաճ ուշադրություն չեն դարձնում, ոպորտունիստորեն թեթևամտությամբ են բերքատվության բարձրացման այդ կարևոր գործոնից մեկը:

Կուսակցությունը մեր առաջ է դրել բամբակային սովխոզները բամբակային գործի տեխնիկայի իսկական որինակ նեը դարձնելու խնդիրը: Կուսակցության այդ հրահանգի վրա պետք է առանձնապես ուշադրություն կենտրոնացնել և նրա համար, վոր մեր սովխոզներն այս տարվա գարնան կամպանիայի նախապատրաստական աշխատանքների առաջին մասը չափազանց անբավարար են կատարել: Ջնայած, վոր այս տարի սովխոզներում բամբակ ցանելու պլանային տարածությունը քչացրված է, այն ուամենայնիվ աչքի վարի պրանը 23 տոկոսով է կատարված, ճմռան արտերը՝ 35 տոկոսով, պարարտանյութերը մտցրված են պլանի 15 տոկոսով, մինչդեռ մարտի մեկը վոռոշչական ցանցը մաքրելու վերջ տոկոսն է կատարված: Սա ի՞նչ է ցույց տալիս: Այն, վոր մեր բամբակի սովխոզների ու Խլոպկոտռեստի դեկավարությունը վորոշ չափով հանգստացել է նրանով, վոր սովխոզները լրիվ կատարել են 1932 թվի բամբակը հանձնելու գործը և անուշադրություն են սկսել 1933 թվի կամպանիայի նախապատրաստությունը:

Անհրաժեշտ է անհապաղ և վճռականորեն բեկում ապահովել: Պետք է Միլլի և Կարա – Ջալալյի սովխոզներին ապահովել բարվական քանակությամբ կուսակցական կուռ անտեսավարներով, ագրոնոմներով, տեխնիկներով:

Մենք մի շարք միջոցառումներ ենք նշել և պետք է տեղում տուժել, թե ինչպես են դրանք կյանքի մեջ մտցվում:

Ի՞նչ են ցույց տալիս այս փաստերը: Այն, վոր մեր ընկերներից շատերը վճռած են, վոր կենտրոնական ապարատի մեր դեկավարներից շատերին պետք է արթնացնել, արթնացնել շատ ղել տաղնապալի սուլիչներով, վոր քնած են և վորոշ ռայոնական կամպակերպությունների աշխատողները:

Ձեր այնտեղ դնալու հիմնական և գլխավոր խնդիրներից մեկն այն է, վոր արթնացնեք ռայոններում քնածներին, կոլ խոզներում քնածներին, վոր դուք չարժուն դրության մեջ դնեք ռայոնը, դյուղը, կոլխոզը: Մենք միշտ ուժեղ ենք եղել և մնում ենք ուժեղ ներանով, վոր կարողանում ենք փոքրիկ քանակությամբ, բայց լավագույն մարդկանցով՝ չարժուն դրության մեջ դնել մասսաները, բանակը:

Վերջին յերկու յերկք ամսում մենք ռայոններ ենք ուղարկել բավականաչափ ու շատ լավ բոլշևիկներ՝ մշտական աշխատանք կատարելու համար: Այժմ մենք հանրապետական ակտիվից 150 հոգի յենք նշել, մշտապես աշխատելու, վորպես ռայոնական դեկավարներ: Մենք, ընկերներ, մեր լավագույն աշխատողներին բաղվից վերցնում և այժմ դյուղ ենք ուղարկում, վորովհետև հասկանում ենք և մեղ պարտավոր դդում՝ այժմ ամրապնդել սոցիալիստական շինարարության ֆրոնտի այդ կարևորագույն տեղամասը: Այժմ սոցիալինարարության ֆրոնտի կարևորագույն տեղամասը, վորտեղ խոշորագույն դասակարգային պայքար է բորբոքվում— դյուղն է: Այդ ուղարկվող 150 ընկերների թվում կան մի շարք ժողկոմներ, Կենտկոմի և Բաղվի Կոմիտեի բաժիններին մի շարք վարիչներ:

Բացի նրանցից, մենք մտադիր ենք մոտ որերս մինչև մայիսի 400 հոգի ուղարկել դյուղում, կոլխոզներում աշխատանք կատարելու համար: Սակայն այդ բոլորը քիչ է, վորովհետև Ադրբեջանի դյուղը մեծ քանակությամբ մարդկանց կարիք ունի, բայց նրանց մեջ չէ, վոր կարելի է գտնել: Ուստի մենք ստիպված ենք դիմել մեր լավագույն աշխատողներին, Բաղվի կազմակերպության լավագույն անդամներին պահելուն՝ ժամանակավոր աշխատանք տանելու համար, ինչպես վոր այժմ մենք անում ենք ձեզ հետ:

Մենք բոլորս պետք է հասկանանք ու զգանք, վոր ամենից առաջ դյուղի համար պատասխանատու յենք մենք՝ կոմունիստներս:

Ահա թե՛ ընկ. Ստալինն ինչ է ասել մեր պատասխանատվության,— կոմունիստների պատասխանատվության մասին.

«Ձեր թվում վոչ միշտ է հաջողվում կոլխոզներում գործն այնպես տանել, ինչպես վոր լենինիզմն է պա-

հանջում, ցնթե մենք հանախ մի շարք կոպիտ, անվերնդի սխալներ ենք անում, ապա դրանում մենք չենք միայն մենք ենք մեղավոր ... Գյուղացիների մեջ չպետք է վորոնել հացամթերումներում ունեցած դժվարությունների պատճառները, այլ մեր սեփական շարքերում։ Վորովհետև մենք ենք իշխանության գլուխ կանգնած, մե՛ր տրամադրության տակ են պետության միջոցները, մենք ենք կոչված կոլխոզները դեկավարելու և մենք պետք է գյուղում տարվող աշխատանքի ամբողջ պատասխանատվությունը կրենք»։

Այդ դեկտեմբերյան գյուղ ենք նետում մեր բոլշևիկյան ուժերը, վորովհետև չի կարելի գյուղական կիսադրպետ, կիսբեմն ել բոլորովին անդրադետ, պրոլետարական դարպասը չանցած կոմունիստներին ու կոմերիտականների վրա դնել ամբողջ պատասխանատվությունը, մինչև վոր մենք նրանց չսովորեցնենք, մինչև վոր նրանց մենք չդեկավարենք, մինչև վոր նրանց մենք չսղեղնենք գործում, մինչև վոր նրանց չդաստիարակենք։

Ցեխ մենք, Բոլշևիկների կազմակերպության անդամներս, մենք, Բոլշևիկ բոլշևիկներս կարող ենք մեզ առանձավոր համարել միայն այն դեպքում, յերբ մենք գյուղական կոմուներ ենթանք հավասար, նույնիսկ նրանից ավելի պատասխանատու կլինենք գյուղի դրության համար։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԴԻՄԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈԼԽՈԶՆԻԿԻ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍԻ

Ընկերներ, մեր աշխատանքի հաջողության կարևորագույն, վճռական պայմանն և հանդիսանում հենց իրենց՝ ռայոնի կուսակազմակերպությունների դրությունը։

Դուք պետք է մանրամասնորեն ուսումնասիրեք, թե կուսակազմակերպությունը գյուղում իրենից ինչ է ներկայացնում, ինչպես և դրված ներկուսակցական աշխատանքը, ինչ կազմ ունի բջիջը, այդ բջջի ակտիվը, կոլխոզային բջիջի չուրջը յեղած անկուսակցական ակտիվը, ինչպես են զաստավորված բջիջի ուժերը վճռական տեղամասերում։ Գնաք և ստուգեք, թե ի՞նչ է կուսակցական ժողովների բովանդակությունը, ի՞նչով են զբաղվում մեր կոմուներները, ի՞նչպես և դրված ստացմբցման ու հարվածայնության դործը, ագիտացիոն – բացատրական աշխատանքը, մասսայական աշխատանքը։ Կուսակցական այդ բոլոր հարցերով դուք պետք է ընդհուպ զբաղվեք։

Ընկերներ, պետք է հիշել, վոր վատ հերկը, վատ ցանքը, տրակտորի վատ նորոգումը, առվի վատ մաքրելը վերջին հաշվով առաջ է գալիս այդ ռայոնի կոմունիստների վատ հատկությունից, այդ ռայոնի կուսակազմակերպության վատ հատկությունից, ռայոնի կուսաշխատանքի անբավարար դրության։

Ընկերներ, պետք է նկատի ունենալ, վոր մեր շինարարության ամեն մի վորոշ ետապում մենք միշտ ամենից առաջ վերանայում ենք մեր կուսաշխատանքը, հարմարեցնում ենք մեր կուսաշխատանքը մոմենտի խնդիրներին։ Կուսաշխատանքը, կուսակազմակերպությունը մեր սոց շինարարության մեջ վճռական դործոն է, մեր ամբողջ շարժման առաջատար սկիզբը։ Նա չպետք է կտրված լինի իրական կյանքից, անտեսական կոնկրետ խնդիրներից։ Կուսակցական վերացական աշխատանք չի կարող լինել։ Ընկ. Կազանովիչը կուսմասսայական աշխատանքի հերթական խնդիրների մասին արտասանած իր ճառում ասել է.

«Դա հարցի դուռ սխեմատիկ դրումն է, վորպես թե կա վերացական կուսաշխատանք, կամ արդիլիպլան, կարված մասսայական աշխատանքից»։

Դժբախտաբար մեր շատ կուսաշխատողները այդ դրությունը չեն յուրացրել։

Մեր ռայոններում կուսաշխատանքը պետք է այդ տեսակետով կառուցվի։

Ահա ինչու մեր ուշադրությունն եմ դարձնում ստուգման անհրաժեշտության վրա, թե կուսակցական ժողովները ի՞նչպես են անցնում դյուղում, այդ կուսակցական ժողովներն ի՞նչ բովանդակություն ունեն, նրանք ի՞նչ հարցեր են քննարկում, իրենք կոմունիստներն ի՞նչպես են անցկացնում մասնակցում գարնանացանի կամպանիային՝ ո՞րինակներ ցույց տալով, աշխատանքի լավագույն որինակ

հեր ցուցահանելով, թե կուսաշխատանքը ո՞րքան լայն կոլխոզային մասսաներ է ընդգրկում:

Ընկ. Ստալինն ասել է.—

«Կուս – մասսայական ամբողջ աշխատանքը, քաղաքական ագիտացիան և պրոպագանդը պետք է բոլշեվիկորեն այնպես կազմակերպել, որ նրանով ամբողջովին ընդգրկվի ամբողջ բանվորական մասսան և ամեն մի բանվորը, ամեն մի աշխատավորն առանձնապես:

Դրա համար գլխավոր ուշադրությունը պետք է ուղղել անմիջապես ցեխերում, մասսաների մեջ կուսմասսայական աշխատանքն ու ագիտացիան կազմակերպելուն»:

Այդ դիրեկտիվն Ադրբեջանում զանազան դյուղատնտեսական կամպանիայի պայմանների, մեր կոլխոզների պայմանների նկատմամբ նշանակում է, որ կուսմասսայական ագիտացիոն աշխատանքը պետք է այնպես դնել, որ այդ աշխատանքն ամբողջ կոլխոզը, առանձնապես ամեն մի կոլխոզային բրիգադ, բրիգադի ամեն մի անդամին, մի կոլխոզային ընտանիքին ընդգրկի: Կուսակտիվական աշխատանքն այնպես պետք է դնել, որ նրանով ընդգրկվի կոլխոզնիկների ու աշխատավոր մենատնտեսների ամբողջ մասսան:

Մենք չենք կարող միմիայն մեր ուժերով՝ առանց կոլխոզային լայն մասսաների, աշխատավոր մենատնտեսների ակտիվ մասնակցության տանել զարնանացանի կամպանիան: Մեր ուժը նրա մեջ է, որ մենք կարողանում ենք խանդավառության կրակ վառել միլիոնավոր բանվորների ու աշխատավոր մենատնտեսների շարքերում: Դուք պետք է առուղեք և առուղելով՝ դրծի ընթացքում ուղղեք, վերակառուցեք բջիջների կուսաշխատանքն այնպես, որ ապահովված լինի մեր դյուղի կոլխոզնիկների ու աշխատավոր մենատնտեսների շարքերում խանդավառության այդ կրակը:

Ահա, ընկերներ, ինչ տեսակետով դուք պետք է մոտենաք կուս – մասսայական աշխատանքին դյուղում: Ըստ էության պետք է նկատի ունենալ, որ իհարկե, չկա և չի կարող լինել առանձին հատուկ դրված հրահանգ, հատուկ դրված ծրագիր, հաշվի առնելով բոլոր մանրուքները, բոլոր դետալները, թե դուք ինչպես պետք է աշխատանք տանեք դյուղում: Ձեր գլխավոր հրահանգը — այդ ձեր բոլշևիկյան հոտառությունն է, ձեր բոլշևիկյան ըզգաստությունն է, ձեր բանվորական արտադրական փորձը, ձեր ստեղծագործական նախաձեռնությունը:

Մենք էլ ձեզ՝ Ադրբեջանի դյուղը դնացողներիդ այս պահանջներն ենք առաջադրում: Պետք է բազմակողմանի կերպով կշռադատելով ամեն մի հարդ առանձին՝ ինքներդ նախաձեռնություն ցույց տաք, ինքներդ սկսեք այն ուղղել և վոչ թե կրկնել այտեղից յերբեմն ուղարկված լիազորների վատ որինակները: Մի քանի ընկերներ նորոդման կամպանիայի ժամանակ լիազոր լինելով ռայոններում, կամ վոչինչ չեն արել, կամ իրենց մասին այնպես են հաս կացել, որ ամեն որ արբինանոց հեռագրեր են ուղարկել— «պահեստամասեր չկան, ամեն ինչ տապալվում է, ազդանշանում ենք»: Այդ լավ որինակ չէ և դուք դրան չպիտի հետևեք:

Հաշված որեր, մի քանի որ է մնում մինչեվ բամբակի ցանքի տենդոտ շրջանը: Ամեն մի րոպե, ամեն մի ժամ թանկ է: Վորքան էլ ցանկանանք մենք մինչև այժմ ուղարկածներից դուրս, լրացուցիչ նյութեղեն այնտեղ ուղարկել չենք կարող: Ուստի պետք է զարկ տանք մոբիլիզացիայի յենթարկելու ներքին ուժերը, տեղն ու տեղն ուղղենք նկատված պահեստությունները հենց տեղական ուժերով, հենց տեղական ռեսուրսներով: Ընկերներ, այդ բոլոր միջոցառումները կիրառելիս դուք բավական մատչելի կերպով մեր դյուղական կոմունիստներին պետք է բացատրեք (դժբախտաբար նրանցից շատերը և՛ կարդալ չգիտեն և՛ քաղաքականապես անգրագետ են) մեր կուսակցության կենտկոմի վերջին վորոշումը՝ կենտրոնական Սև վահող. շրջանի և Ուկրայինայի Դնեպրոպետրովսկի շրջանի կոլխոզային յերկու բջիջների աշխատանքի մասին: Դուք պետք է ամենապարզ կերպով, առանց ջղայնանալու և չտապալելու, հանդիստ վիճակում կարդաք ու նրանց բացատրեք այդ վորոշումը: Ամեն մի դյուղական կոմունիստ

պետք է այդ վորոշումն անդիր իմանա, ըստ վորում միայն թե մեքենայորեն իմանա, այլ պետք է գիտակցաբար հասկանա, թե այդ վորոշումն ինչ է նշանակում:

Ահա, ընկերներ, թե ինչ պետք է առանձնապես արմատացնել մեր գյուղական կոմունիստների գիտակցության մեջ: Ըստ վորում ձեր ամբողջ աշխատանքում գյուղական կոմունիստներին, գյուղական կոմյերիտականներին, մանավանդ անկուսակցական կոլխոզային մասսային, առանձին մենատեսներին մոտենալիս դուք ձեզ միայն հրամանատարի դերում պետք է պահեք, այլ վորպես ամենապարզ ընկեր, ոգնական, վորը յեկել է նրանց ոգնելու: Չպետք է ամենադեմո տոն վերցնել, այլ պետք է ամենահանգիստ կերպով ականջ դնել նրանց ամեն մի հայտարարությանը, նրանց ամեն մի պահանջին, մանավանդ անկուսակցական կոլխոզնիկների ու աշխատավոր մենատնտեսների նկատմամբ: Քիչ խոսեք, շատ ականջ դրեք և լսածի հիման վրա խորհրդակցելով տեղական ընկերների հետ, հանեք համապատասխան յեզրակացություններ այնպես, ինչպես կթելադրի ձեր բոլշևիկյան բանականությունը, բոլշևիկյան հոտառությունը:

Գյուղացիների իմացած շատ բաները դուք չգիտեք: Այն բանը, վոր դուք լավ գիտեք արտադրությունը, իսկ նրանք չգիտեն, վոր դուք գիտեք կուսակցական ադիտացյիաները, իսկ նրանք վատ գիտեն, վոր դուք գիտեք ներկուսակցական դեմոկրատիան, մեր կուսակցական կարգերը, այդ վատ է, բայց նրանք մեզնից ավելի լավ գիտեն, թե ինչպես կարելի յե ավելի լավ բերք ստանալ, ինչպես ավելի լավ ցանել, ինչպես ավելի լավ խնամել ձիուն, ավելի լավ բժշկել հիվանդ ձիուն: Ահա ինչու պետք է ուշադրությամբ ականջ դնել նրանց խոսքին:

Գյուղական ընկերների նկատմամբ դուք ձեզ պետք է պահեք վորպես ավագ ընկեր, անկուսակցական կոլխոզային մասսայի, աշխատավոր մենատնտեսների նկատմամբ դուք պետք է ձեզ պահեք վորպես ուսուցիչ, իսկ ուսուցիչը յերբեք վորպես ադմինիստրատոր չի դործում, չի հրամայում, այլ դաստիարակում է, սովորեցնում է:

Վորպեսզի մեր կուս – մասսայական կազմակերպչական աշխատանքը հաջող լինի, ազդու լինի, պետք է հղմատորեն այդ բանը կատարել: Ամեն մի ադիտատոր, կուսակցության ամեն մի անդամ պետք է շատ լավ հիշի ընկ. Կազանովիչի վայլուն ցուցմունքներն այն մասին, թե ինչպես պետք է տանել ադիտացիոն աշխատանքը.—

«Բանվորների հետ պետք է խոսել ըստ էության, կեղծ բանվոր մի ձևմտաք: Ամենից ավելի խուսափեք հաճոյական խոսքից: Բանվորը հաճոյական խոսք չի սիրում: Խոսեցեք ըստ էության և լրջորեն:

Մի սկսեք Ադամից, մի մտնեք պատմության խորքերը: Խոսքն այն հարցից սկսեք, վոր ամենից ավելի յե կպչում բանվորին, հետաքրքրում նրան ավյալ մոմենտում: Ադիտացիան — այդ քաղդրագիտության դպրոց չէ. ադիտացիայի ժամանակ չպետք է չհեռանալ որվա հրատապ հարցերից:

Ձեկուցումն այնպես կազմեցեք, վոր մասնավորից, պրակտիկ որվա հրատապ հարցերից դնաք դեպի ընդհանուր յեզրակացությունը, լոզունգը: Ադիտացիայի ժամանակ ղեկուցման պատիերավոր կառուցումը սխուտ նի չէ: Պատրաստվեցեք միշտ առարկությունների համար: Ձեկուցումն այնպես կազմեցեք, վոր նա անխոցելի լինի ամենաբծախնդիր քննադատների համար, մինչև իսկ դեմագոգների համար: Կողքը մի տաք դեմագոգի ձեռքը: Յերբեմն ոգտակար է իր ճառում մեջ բերել հակառակորդի մտքերը բառնխղճորեն նրանց ձևափոխելով, բայց և տեղն ու տեղը պետք է ջախջախել նրանց»:

Այդ ցուցմունքներն ինչ են նշանակում դյուղում տանելիք ձեր առաջիկա աշխատանքի նկատմամբ: Այդ նշանակում է, պետք է խոսեք կոնկրետ կերպով, ամենից պարզ այն հարցի մասին, վոր անմիջապես կոլխոզնիկին և հետաքրքրում: Դրանից սկսեք: Մի վախենաք, յերբ նա ձեզ հարցեր կտա մեր դժվարությունների մասին: Այդ դեպքում պետք է նրան բացատրել, թե այդ ինչու յե այդպես: Այլ խոսքով միտինգներում, ժողովներում, կոլխոզներում և այլն ձեզ տված ամեն մի հարցին պետք է կա-

ղողանաք բոլշևիկյան պատասխան տալ: Վոչ մի հարց ան պատասխան, առանց բացատրության չպիտի թողնեք, վորովհետև չպիտի մոռանալ, վոր մեր բոլոր տարակուսանքներից, տատանումներից կուլակը վորձում է ոգտվել, դեպի իր կողմը գրավել տատանվող տարրերին:

Ընկերներ, յես համոզված եմ, վոր ձեռքում ունենա լով այնպիսի ուժեղ և սուր զենք, ինչպիսին մեր կուսակցության կենտկոմի ու ԿՎՀ հունվարյան պլենումի վորոշումներն են, ինչպիսին ընկ. Ստալինի վերջին յելույթներն են, հարվածային — կոլխոզնիկների համամիութենական համագումարի դիմումն է, ձեռքում ունենալով մեր Սդրբեջանի կոլխոզնիկների հաջող վերջին դիմումը, տի բասխեսելով ձեր պրոլետարական, բոլշևիկյան հոտառությանը, դուք կարող կլինեք կենտկոմի կողմից դյուղում մնալու համար սահմանված ձեր ժամկետում վոչ միայն ուղղել տեղերում մինչև ցանքի ավիդը թուլատրված սըխալները, վոչ միայն հաջողությամբ անցկացնել գարնանային կամպանիան, այլ և դյուղում ստեղծել այն բոլոր պայմանները, վոր այս տարի հաջողությամբ կատարվեն դյուղատնտեսական բոլոր աշխատանքները և պատրաստ կա տարվեն ամբողջ Սորհ. Միության առաջ հանձն առած մեր պարտավորությունները դյուղատնտեսական մթերումների բնագավառում: (Աղմկալից, յերկարատև ծափահարություններ):

ԳԱՐՆԱՆՑԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

(1933 թ. ապրիլ ամսում Համկոմկուսի (բ) Անդրյերկրամի և Անդր. Յերկ. վեր. Հանձնաժողովի պլենումում արած զեկուցումը)*

Ընկերներ, մեզ բոլորիս լավ հայտնի յե, վոր 1932 թվին Սդրբեջանը չէր կատարել իր պարտավորությունները բամբակի մթերումների նկատմամբ: Բավական չէ, վոր պլանը չէր կատարվել, այլ և մենք յերկրին ավելի քիչ բամբակ ևրք տվել, քան թե Սդրբեջանում 1931 թվին հավաքածը:

1933 թվի գարնան գյուղատնտեսական կամպանիայի խնդիրը պետք է քննել յերկրորդ հնգամյակի մեր ընդհանուր խնդիրների լույսի տակ, վորի հիմնական դրությունը հանդիսանում է նոր ձեռնարկների և նոր տեխնիկայի յուրացումը, բերքատվության բարձրացումը, աշխատանքի վորակի բարելավումը՝ բոլոր բնագավառներում, մանավորապես գյուղական տնտեսության բնագավառում:

Ինչպես տված և Համկոմկուսի (բ) կենտկոմի և ԿՎՀ հունվարյան միացյալ պլենումի վորոշման և այդ պլենումում ընկ. Ստալինի արտասանած ծրագրային ճառի մեջ՝ մեզ տալիս են գլխավոր ուշադրությունը սլուտի դարձնենք կոլխոզներին, սովխոզների կազմակերպչա-տնտեսական, քաղաքական ամրապնդման, ՄՏԿ քաղաքական աղդեցության ուժեղացման, նորագույն գյուղատնտեսական տեխնիկայի լիովին տիրապետման մրա, այն տեխնիկայի, վորը մասսայական մասշտաբով մենք արմատացնում ենք գյուղական տնտեսության մեջ:

---

*) Հակիրճ սղագրությունը.

1933 թվի գարնանացանի պլանը վորոշված է 416·450 հեկտար, վորից բամբակ — 191 հազար հեկտար, մյուս տեխնիկական կուլտուրաներ — 17·340 հեկտար, հացահատիկ — 129·990 հեկտար և այլն:

Գարնանային ցանքսերի ընդհանուր տարածությունը 1932 թվի համեմատությամբ վոչքացվում է 17·610 հեկտարով, իսկ Ադրբեջանի առաջատար կուլտուրայի — բամբակի ցանքսը 40,130 հեկտարով, այսինքն 1932 թվին փաստորեն ցանածից 17,4 տոկոս պակաս:

Ցանքսի նվազեցումն այս տարի նախագծված է այն պայմանով, վորպեսզի դվհասվոր ուշադրությունը դարձվի բերքատվության բարձրացման վրա, մանավանդ բամբակի նկատմամբ: Այդ բանը չշափելի կերպով նկատելի կե հետևյալ աղյուսակից:

Մշակությունների անունները	93 թ. փաստական բերքատվությունը ցենտներով				93 թ. պլան ցենտներով
	Ստեղծ	Կրեզով	Ուսումնական տնտեսություններում	Մի ջրված բերքը	
Բամբակ			—	5 6	7,0
Գարնան ցորեն	6.7	5,2	5.1	5,3	7,2
Գարնան գարի	9 4	6 6	5,7	6 1	7 8
Բազմածաղ	8 5	6 8	6 4	6 6	7 1
Ջաղցուկ	7 6	14.5	9,5	12,9	18,0

1933 թվի համար բամբակի մեջին բերքատվությունը Մուղանում սահմանված է անցյալ տարվանից 8 տոկոսով ավելի, իսկ Ադրբեջանում մենք հաստատել ենք բերքատվության պլանը 25 տոկոսով ավելի անցյալ տարվանից (մի հեկտարից 7 ցենտներ՝ անցյալ տարվա 5,6 ցենտների դիմաց):

Վերջին տարիներս Ադրբեջանում պարզապես ոպորտունիստորեն թերագնահատել են գյուղական տնտեսության մյուս ճյուղերը, մանավանդ հացահատիկները: Մի տարվա ընթացքում Ադրբեջանում հացահատիկների ցանքսը կրճատել են 146·000 հեկտարով, բերքատվությունը հեկտարից մոտ

10 վոսկի իջեցրել՝ 1931 թվի համեմատությամբ, այդ բանը պատճառաբանելով նրանով, իբր թե հատուցում են բամբակով: Սուտ է ու ավել, վոր այդ բանում վոչ մի հատուցում չի կա:

Ընկերներն, ինչպես երեվում է չեն հասկացել այն բանը, թե բամբակ ցանել, ուշադրությունը դվհասվորապես դարձնել այդ մշակության վրա, չի նշանակում արհամարհել մնացած մշակությունները: Բամբակը պետք է սերտորեն շաղկապվի գյուղական տնտեսության մյուս բոլոր ճյուղերի հետ: Ընկերները պետք է իմանային, վոր բամբակը չի կարելի անջատել գյուղական տնտեսության մնացյալ ճյուղից, վորպեսզի անտանտապահությունն և, վորովհետև հենց անտանտարուժությունը բամբակարուժության դարդացման գործոններից մեկն է:

Այդ, ինչպես և հացահատիկային հարցում, բացահայտ ոպորտունիստական թերագնահատություն է կեղել: դրա հետևանքով այս տարի մեր սեպհական կշիռն վրա կրել ենք հացահատիկային մշակությունների նկատմամբ այդ ոպորտունիստական վերաբերմունքի բացասական հետևանքները:

Ընկերները, բամբակի բերքատվության վերջին տարիների դինամիկան ցույց է տալիս, վոր այս տարվա համար հեկտարից յոթ ցենտներ մեր նշած բերքատվությունը մեզանից մեծ պատասխանատվություն է պահանջում, պահանջում է մեր բոլոր ուժերի և հնարավորությունների մոբիլիզացիան՝ ինչ եղ վոր լինի բամբակի պլանը կատարելու, բերքատվությունը բարձրացնելու համար:

Այստեղից էլ՝ պատահական չե այն ջերմ, անմիջական, կոնկրետ — ոպերատիվ դեկավարությունը, վոր ցույց է տալիս Ամբողջկոմը զարնան գյուղատնտեսական կամպանիան պատրաստելու գործում՝ Ադրբեջանում:

Այստեղից, պատահական չե, այն զգայուն վերաբերմունքը, ժամանակին արձագանքելը մեր հարցումներին, մեր հեռագրերին, վոր ցույց է տալիս ընկ. Բերիան անձամբ: Ճիշ առանձնապես չեշտում եմ Անդրբյուրոյի այդ զգայուն ուշադիր վերաբերմունքը մեր հարցումներին, անմիջական գործառնական մշնամատությանը և ջերմ, ուշադիր մասնակցությանը, վորովհետև դրա հետ միասին մեր

Անդրկովկասյան խորհրդային և տնտեսական կազմակերպությունները մեզ բավականաչափ չեն տալիս: Մեր հացահատիկները յերբեմն ուշացումով են, յերբեմն մենք ժամանակին չենք ստանում պատասխանները և այլն:

Անդրկովկասյան խորհրդային և պետական կազմակերպությունները պետք է լիովին և ամբողջովին վերցնեն Անդրյերկրամասի դիծը վարելս հիմք և հետեվելով նրա արժանի որինակին՝ մեզ գործնական – գործնական ոգնություն ցույց տան այս տարի Ազրբեջանում մեր առաջ դրված լրջագույն խնդիրները կատարելու:

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՍԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ

Ընկերներ, անցնելով գարնան գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստության միջոցառումներին, յես ուզում եմ սկսել կոլխոզների 1932 թվի յեկամուտների բաշխման հանրագումարից:

Կոլխոզների յեկամուտների բաշխման մասին վերջնական տվյալները դեռ ևս մենք չունենք: Հողժողկոմատում յեղած տվյալները դեռ վերջնականապես մշակված չեն, վերլուծման են յենթարկված: Այդ տվյալների նախնական քննարկումը վկայում է, որ կոլխոզների ամրապնդման բնագավառում մեծ նվաճումների հետ միասին, որ աշխատավոր գյուղացիների հիմնական մասսայի համար, մեր կոլխոզնիկների համար կոլխոզային շինարարության միանգամայն հասկանալի և հարատատ դառնալու հետ միասին՝ մի շարք աղաղակող խայտառակություններ, թերություններ կան, որոնք լուրջ ուշադրություն են պահանջում՝ այդ թերությունների անհապաղ վերացումն ապահովելու համար:

Վորպես կանոն, 1932 թ. ամենուրեք աճել է աշխատորների վճարումը կոլխոզներում՝ 1931 թվի համեմատությամբ: Իսկ շատ որինակելի կոլխոզներում մենք ունենք աշխատորների վճարման հսկայական թիվ:

Մենք ունենք և՛ լավ, և՛ վատ կոլխոզներ: Ուզում եմ մի քանի որինակներ բերել:

Ջալյուլի կոմունաճ (Ղազախ) բամբակի պլանը կատարել է 140 տոկոսով: Կոլխոզնիկներին բաժանել է յեկամտի 74 տոկոսը, աշխատորի արժեքը 1932 թ. յեղել է 10 ռուբ. 13 կոպեկ:

«Անդրկովկաս» (Ադդաշ) — բամբակի բերքատվությունը 1932 թվին 6,3 ցենտներ մի հեկտարից, ըստ աշխատորների բաշխված է յեկամտի 76 տոկոսը: Մի աշխատորմա վճարումը — 3 ռ. 63 կոպ.:

«Միլյուտին» կոլխոզ (Իսմայիլլի) — ցորենի բերքատվությունը մի հեկտարից 9 ցենտներ: Ըստ աշխատորների բաշխված է յեկամտի 74 տոկոսը: Աշխատորի վճարումը 1932 թվին 4 ռ. 35 կոպ.:

Կազմակերպչա – տնտեսության ամրապնդված և չահարեր դարձված այդպիսի կոլխոզների որինակներ շատ կարելի է բերել բոլոր ոլայոններից, մանավանդ բամբակային ոլայոններից:

Վատ (թույլ, կազմակերպչա – տնտեսապես չամրապնդված) կոլխոզների որինակ են հանդիսանում.—

1. Ադդաշի ոլայոնի «Հոկտեմբեր» կոլխոզը, բամբակի բերքը 1,8 ցենտներ, աշխատորի վճարում՝ 7 կոպեկ:

2. «Գյոնելու»—Ադդաշի ոլայոն, բամբակի բերքատվությունը՝ 1,1 ցենտներ, աշխատորի վճարումը՝ 8 կոպեկ:

3. Բունյաթ – Զաղելի անվան կոլխոզ—Ադդաշի ոլայոն, բամբակի բերքատվությունը՝ 2,1 ցենտներ, աշխատորի վճարումը՝ 11 կոպեկ:

Ադդաշի ոլայոնի այդ և մի շարք այլ կոլխոզներում կան կոլխոզնիների անհատական ցանքեր և բանող անասուններ, որոնք դանդաղ են նախկին տերերի մոտ, փաստորեն չեն համայնացրված:

Ինչո՞ւմն է կայանում այդպիսի վատ աշխատանքի, կոլխոզների յեկամուտների բաշխման վատ արդյունքների, աշխատորմա վճարման իջեցման պատճառը: Բանից դուրս է գալիս, որ Ադդաշի ոլայոնում, որտեղ կանոն, կոլխոզնիկներն ունեցել են հացաբուսերի անհատական ցանքեր կոլխոզային հողերում մեկական ու մեկ ու կեսական հեկտար՝ բրիգադներն երբեք մինչ բաժանել են յեկամուտները՝ առանց կոլ-

խաղերի վարչությունները: Ցեխ ուրիշ շատ պատճառներ, որոնց մասին յես հետո կխոսեմ:

Ցեխամուտների բաշխումը շատ բնորոշ փաստեր է ցույց տվել՝ Ադրբեջանի կոլեկտիվացման դրության նկատմամբ: Մինչև վերջին ժամանակները դանում էին, որ Ադրբեջանում կոլեկտիվացված է տնտեսությունների 51,4 տոկոսը: Սառուցումը ցույց է տվել, որ այդ թիվը ճիշտ չէ, որ այդ մեծացրված է: Փաստորեն մենք ունենք 43–44 տոկոսից վոչ ավելի՝ համաձայն հաշվեմոտական տվյալների: (Ծանոթություն — և 2 տարի դրա մասին չդիտեցիք), (ընկ. Բերիա.—վոչ վոք չի սառուցել, որի հետևանքով այդ է սառցվել):

Ինչո՞ւմն է գործը: Ռայոններն ուղղակի աչքակապությամբ են դրաղվել, խաբել են կենտրոնին: Ահա ձեզ մի օրինակ. — Ղազախի ռայոնը կոլխոզներում ցույց է տվել 5·939 տնտեսություն, իսկ սառուցման ժամանակ դուրս է եկել 4·641 տնտեսություն:

Կոլխոզների եկամուտների բաշխումն ավելի ցայտուն ձևով մերկացրել է և այն փաստը, որ առանձին ռայոններում, առանձին կոլխոզներում տիրություն է անում կուլակը:

Որինակ՝ Կալա — Մաշտաղայի ռայոնի համարյա բոլոր կոլխոզներում աշխատաորերը սկսել հաշվելու հետևանքով հարկ եղավ կրճատել ցույց տված աշխատորերի քանակը 50 տոկոսով, որովհետև մնացած 50 տոկոսն ուղղակի գրել էր վարչության նախագահը:

Այդ ամենը հետևանք է դասակարգային զգոնության բթացման, կոլխոզների նկատմամբ բոլշևիկյան դեկավարության, կուսակցական աչքի բացակայության մի շարք ռայոններում: Այդ բոլորը բացատրվում է կոլխոզների կազմակերպչա – տնտեսական ամրապնդմամբ, կոլխոզներից դասակարգային խորթ, հակախորհրդային, կուլակային տարրերին դուրս վռնդման շուրջը մասսաների կազմակերպման ու մոբիլիզացիայի բացակայությամբ:

Դա դեռ քիչ է. մի շարք դեպքերում կոմունիստները վոչ միայն չեն կարողանում մերկացնել դասակարգային թշնամու վնասարարական աշխատանքը՝ չնորհիվ իրենց դասային զգաստության բթացման, այլև մենք դեպքեր ունենք, երբ կոմունիստներն ուղղակի ձուլվում են կուլակային տարրերի հետ, ուղղակի մասնակիցակցում են կոլխոզային, հասարակական սեփականության հափշտակմանը:

Այս բոլորը չէր կարող չաղդել կոլխոզներում եկամուտները բաշխելու վրա և չստեղծել անբավականություն առանձին կոլխոզնիկների միջեվ և այդպիսով ջուր չածել դասակարգային թշնամու ջրաղացին:

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ

Յերկրորդ հարցը, վոր պակաս կարևոր չե 1933 թվի գարնան ցանքսային կամպանիայի նախապատրաստության և հաջող տարման գործում՝ դա կոլխոզներում արտադրական պլանների կազմելն է:

Ինչպե՞ս են մեր կենտրոնական կազմակերպությունները պատրաստվել այդ կարեվոր կամպանիային: Դուրս է գալիս, վոր արտադրական բլանկներ պատրաստելու և կազմելու համար մեր ժողկոմատներն ու կենտրոնական հանրապետական կազմակերպությունները 108 որ են գործադրել և իրենց արտադրության տակ միայն 10 որ է մնացել՝ այդ աշխատանքը տեղերում գործնականորեն կատարելու համար:

Ճիշտ է, վերջին ժամանակներս այդ կողմից առաջադիմություն է նկատվում: Աշխատելը, կարծես թե փոքր ինչ հեշտանում է:

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ադրադոտխոլոդկի ձեռքի տակ եղած տեղեկությունների համաձայն՝ պայմանագրված է 122·449,1 տոն՝ հնդավոր բամբակ, վոր պայմանագրական սեկտորի ցանքսի պլանային տարածության 97,7 տոկոսն է կազմում:

Պայմանագրման թերություններ: Մի շարք ռայոններում պայմանագրումը ձգձգվել է՝ կոլխոզներում արտադրական պլաններն ուշացնելու պատճառով և տարվել է առանց արտադրական պլանների և առանց կոլխոզների արտադրական պլանները ՄՏԿ–ների հետ համաձայնեցնելու:

Այդ պատճառով վոչ բոլոր պայմանագրերում է մատնանշվել հնդամյոր բամբակի քանակությունն ու ցանքսի տարածությունը: Պայմանագրեր կան, վորտեղ ապրանքայ նացման և դրամական նորմաներ չկան:

Դրա կապակցությամբ՝ Ադրկոմկուսի (բ) կենտկոմն ու Ադժողկոմխորհն ապրիլի յերկուսից սկսած՝ կնքված պայմանագրերի կանոնավորության համատարած ստուգումն են կազմակերպել, վորտեղ անպայման պետք է ուղղվեն պայմանագրման ժամանակ կատարված սխալները:

Վերջին ժամանակներս, սկսած դրխաղորատես հունվար ամսից՝ ուժեղացել է հոսանքը դեպի կոլխոզները: Այսպես, Գյոկչայի ռայոնում դեկտեմբերը, հունվար, վերոբվար ամիսների ընթացքում կոլխոզ են մտել 1680 տնտեսություն, Շամխորի ռայոնում—2101 տնտեսություն, Ասորեխան-Բաքարի ռայոնում — 1260 տնտեսություն, Խիզիի ռայոնում — 1063 տնտեսություն և այլն:

Չնայած կոլեկտիվացման մասին կուսակցության տված ազատող հրահանգներին, առանձին ռայոնական կուսակցական կազմակերպություններ լինքնահոս են թողել տալ դեպի կոլխոզները յեղած ներհոսման դործում, չեն կարողացել բոլշևիկորեն դլխավորել մենատնտեսների կողմից դեպի կոլխոզները յեղած նոր մասսայական հոսանքը և նոր կոլխոզների կազմակերպումը չեն ղեկավարել:

Այդ պատճառով վորոշ կոլխոզների մեջ խցկվել են կուլաքական-տարրերը, կուլակական տարրերի կողմից կոլխոզի աշխատանքային դիսցիպլինան, կազմալուծելով սոցտնտեսությունը, կոլխոզները քայքայում են ներսից, ակնառու աշխատանք են տանում, ընդդեմ տրակտորների կոլխոզների կազմակերպչա – տնտեսական ամրապնդման, դարնանային ցանքսային կամպանիայի պատրաստման նկատմամբ մեր ձեռք առած միջոցների:

Վորոշ ռայոններում մեր ընկերները չեն հասկացել, վոր ներկա մոմենտում դլխավոր և վճռական խնդիրը հանդիսանում է վոչ թե նոր կոլխոզների մասսայական կազմակերպումը, այլ պայքարը կոլխոզների կազմակերպչա–տնտեսական ամրապնդման համար և այդ հիման վրա կոլեկտիվացման հետագա աճումը:

Ահա թե ինչու Ադրկոմկուսի (բ) կենտկոմը վորոշում է հանել — «մենատնտեսների հոսանքը դեպի կոլխոզները և նոր կոլխոզներ կազմակերպելը դարնանացանի նախապատրաստման շրջանում»: Այդ վորոշման մեջ կենտկոմը մի անդամ յեվս նախազդուշացրել է Ադրկոմկուսի (բ) բոլոր ռայկոմներին՝ թույլ չտալ ինքնահոս կոլլեկտիվացման դործում և վորպես կենտրոնական խնդիր չնչտել է, թե անհրաժեշտ է պայքարել կոլխոզների կազմակերպչա – տնտեսական ամրապնդման համար և բոլշևիկորեն ղլխավորել դեպի կոլխոզ յեղած հոսանքը:

Անհրաժեշտ է չեչտել դատակարդային թշնամու վորձերը՝ պայմանագրությունն իր նպատակին ծառայեցնելու համար: Այդ կողմից բնորոշ է, վոր չնայած մեր նախազդուշացումներին, մի շարք ռայոններում տեղի յե ունեցել կոլխոզային տարածությունների չափազանց աճումը բամբակի պայմանագրման ժամանակ (Շամխորի, Սարբր–Աբադի, Ասորեխան – Բաղարլի ռայոններում), վոր միանդամանակ բնորոշում է խնամարկյալ վճռելու տրամադրությունների դոյությունը:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մենք դիտենք, վոր անցյալ տարի ագրոտեխնիկական միջոցառումների դործը չափազանց վատ է յեղել դրված: Ամեն մեկը, ով փոքր ի շատե ծանոթ է բամբակի հետ, դիտե, վոր դիշերը բամբակ ցանել չի կարելի, վոր դա վնասակար է և անթույլատրելի, իսկ բամբակը ցանել են դիշերը: Բաղարլին հայտնի յե, վոր ցեխով բամբակ ցանել չի կարելի, բայց անցյալ տարի ցանել են ցեխով, միայն թե ձեվականորեն կատարեն ցանքսի պլանը, չհամակառավով, վոր դա կորստաբեր կլինի բամբակի բերքատվության համար:

Այս տարի մենք զբաղվել ենք այդ հարցերով բավականին մանրամասը և այդ դործը մենք սկսել ենք շատ ավելի առաջ, քան թե նախորդ տարինները: Այնուամենայնիվ շատ հարցերի նախապատրաստման դործում կան մի շարք թերություններ:

Տարածությունների ընդհանուր պլանը հաստրվել է տեղերը 1933 թ. հունվարի չորսին: Ցեղիպատական և սածիլա-

յին բամբակի սլանը վերջնականապես հաստատուել և տեղերն է հասցրուել փետրուարի 15–ին: Ուշացել է չնորհիվ տարածութիւնների բազմիցս վոչնչման (3–4 անգամ):

Անցեալ տարի դեղեստական բամբակին հատկացուել է 9 հազար հեկտար, այս տարի մենք վերցրել ենք 25 հազար հեկտար: Մենք չահագրգռուած ենք, վորպեսզի մեր դերկի բրն ազատենք ոտարերկրյա բամբակից կախում ունենալուց:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Աշնան ցել· — Պլանը չկատարելու պատճառը — կենդանի լծկան ուժերի թուլ ոգտագործումը, արտադրային պարկի աշխատանքի ցածր արտադրողականութիւնն է:

Աշնան ցելի վորակը· —Համաձայն տասը ռայոններից ստացված տեղեկութիւնների (մյուս ռայոններից դեռ տեղեկութիւններ չկան), մինչև ապրիլի 1–ը ստուգուել է 40621 հեկտար և գտնուած է 3773 հեկտար վատ վորակի ցել, վոր պետք է նորից վարել:

Վատորակ հերկի առանձնապես մեծ տոկոսն յերեվան է բերուած հետևյալ ռայոններում՝ Սալյան — ստուգուած է 14·800 հեկտար, վատորակ յեղել է 1·600 հեկտար, Ղազախի ռայոն ստուգուած է 5450 հեկտար, վատորակ է յեղել 1237 հեկտար, Գյոքչայի ռայոն — վատորակ 213 հեկտար, Ֆյուրդամիրի ռայոն — վատորակ 208 հեկտար, Կարյագին — վատորակ 228 հեկտար:

Ստուգումն ավարտուում է, յերեվան հանուած անպետք տարածութիւնները նորից մի վարում:

Տրակտորների և գյուղատնտեսական ինվենտարի նորոգումը·—Ապրիլեանում 29 ՄՏԿ–ներ կան, 1160 տրակտոր ունեցող պարկով:

Ընդամենը պետք է նորոգուելին 1031 տրակտոր, վորոնց յուից 846–ը՝ բամբակի ռայոններում:

Մինչև ապրիլի 5–ը նորոգուած է 1,111 տրակտոր, վորոնցից 830–ը, կամ 98 տոկոսը՝ բամբակի ռայոններում:

Նորոգումն ապահովելու համար հունվարի վերջին և փետրուարի սկզբին Բագուից ուղարկուած է 165 վագոն, 27 դարբին, 20 խառատ: Մենք ամրացրել ենք ՄՏԿ–ները նաև կենտրոնի լուսորդներին:

Տրակտորների նորոգման վորակը մի քանի է:

Մարտի մեկից մինչև տասը Բագուից ուղարկուած վորակյալ մեխանիկական աշխատողները նորոգման հատուկ բաժուդում են կատարել: Այս տարուա մարտի 20–ին համաձայն Մոլոտովի Հողժողկոմատի վորոշման, յերկրորդ անգամ է ստուգուել նորոգման վորակը: Մի շարք թերութիւններ ու նորոգման վատ վորակ է յերեվան հանուած մի շարք ՄՏԿ–ներում: Որինակ՝ Բարդաջում նորոգուած տրակտորների 80 տոկոսը նորից նորոգման է տրուած:

Բարդալի, Լյաքու, Նորաշենի, Ալի–Բայրամլուի կայաններում վնասատարութիւն է յերեվան հանուած: Նորոգման մի շարք աշխատողներ քրեական պատասխանատուութեան են յենթարկուած:

ՄՏԿ–ների կցան ինվենտարի նորոգումն ավարտուած է:

Հիմնականում ավարտուած է նաև նախկին կոլտնտեսային ինվենտարի նորոգումը:

Բամբակի ցանիչներ ու շղթաներ մատակարարելը· — ՄՏԿ–ները լիովին մատակարարուած են ցանիչներով, շղթաներով: Կոլտնտեսների և մենատնտեսների համար ներմուծուած են 2050 խոտհարքի մեքենաներ, վորը լիովին բավարարում է պահանջը:

Մինչև ապրիլի մեկը ռայոնական պահեստների համար բաշխուած է 119·800 ողակ, 117·000 պահանջի դիմաց: Բագուում ուղեկցուում կա 19·000 ողակ:

Դաշտերի նախապատրաստութիւնը բամբակ ցանելու համար· — Պայմանագրական եկտորներում գարնան ցելի պլանը 74·447 հեկտար է:

Մինչև ապրիլի 2–ը համաձայն տվյալների՝ հերկուած է 54·667 հեկ., տոկոսը՝ 75,4 տոկոսը, վորից կոլտնտեսները հերկել են 49,544 հեկտար — պլանի 90 տոկոսը:

Գարնանահատկի հերկը լիովին ավարտել են՝ Սալյանի, Շամխորի, Ֆյուրդամիրի և Աղդաշի ռայոնները:

Առանձնապես չատ հետ ևն մնում Բելյաուսլարի ռայոնը — 46,3 տոկոս, Աղջաբեդու ռայոնը — 67 տոկոս, Սաբիր – Աբադի ռայոնը — 69 տոկոս: Մինչև ապրիլի մեկը բոլորովին հերկ չի սկսված Նախ. Հանրապետությունում:

Ընդամենը մինչև ապրիլի մեկն աշնան ցել և գարնան հերկ և արված 160·228 հեկտար, կամ 89 տոկոսը:

Նախահաղթանակեան ամսվան ընթացքում 20 տրակտոր այն ՄՏԿ–ներից, որոնք հերկի վերաբերմամբ ամենից նախատեսված պայմաններում են:

Ջմրան արաբի ցաքոնումը· — Պլանն է 55·600 հեկտար, մինչև ապրիլի 5–ը ցաքոնված է 39·750 հեկտար, այսինքն՝ 72 տոկոս: Ցաքոնումը վերջացել է 7 ռայոնում:

Առանձնապես հետ են մնում հետևյալ ռայոնները· — Սալյանը — 34 տոկոս, Սաբիր–Աբադը — 27 տոկոս, Ղարադոնլուն — 19 տոկոս, Ալի–Բայրամլուն — 66 տոկոս, Ֆյուրդամլրը — 50 տոկոս, Ուջարը — 59 տոկոս:

Ջրված աշնանացանի ցաքոնումը· — Այս տարի առաջին անգամն է այդ մշակոցաումը կիրառվում: Ցաքոնումը չատ թույլ է առաջ գնում: 53·000 հեկտար ջրված աշնանացանից մինչև ապրիլի 5–ը ընդամենը 4·000 հեկտար է ցաքոնված:

Հանքային պարարտանյութեր· — Ազոտային պարարտացումների պլանը կրճատված է մինչև 2·646 հեկտարի:

Տարված է կոլխոզները 1·869 հեկտարի համար:

Հողի մեջ է մտցրված — 1·239 հեկտար:

Գոմաղբի պարարտանյութ· — Մինչև ամսի 5–ը գոմաղբ է տրված 5·996 հեկտարի — 100 տոկոսը:

Բանող անասունների նախապատրաստությունը· — Ադրբեջանի բոլոր ռայոններում բանող անասունների դրությունը մինչև վերջին ժամանակները չափազանց անբարենպաստ է մնում. դա բացատրվում է գլխավորապես նրանով, որ տեղերում չափազանց սահմանափակ է կերի ֆոնդը:

Մինչև ապրիլի 3–ը բամբակի գործարանները վառոդներն ուղարկել են նշանակված տեղերը 893 տոննն բամբակի սերմ. քուսպ և թեփ ուղարկված է լրիվ: կճեպ ուղարկելը կատարվում է ապրազոյրած տեմպերով:

Ցանքսպահպանություն մտցնելը· — Ադրկոմխոզը (բ) դենտկոմի և Ադրժողկոմխորհի 1933 թվի հունվարի 24–ի որոշման համաձայն՝ բամբակի ռայոններում ցանքսպահպանություն մտցնելը պետք է լիովին ավարտվեր գարնանացանի սկզբին: 1800 բամբակային կոլխոզներից միայն 331–ում, այսինքն 17,3 տոկոսում է մշակվել և ընդունվել ցանքսպահպանության ուրվագիծը:

ՄՏԿ կադրերը· — ՄՏԿ–ներն ամրապնդելու համար ուղարկված են՝ 17 դյուզատնտես, 65 ագրոտեխնիկ, 19 հիդրոտեխնիկ, 12 հաշվետար, 17 մեքենագետ վարպետ, խառատ, ՄՏԿ–ների վարիչներ:

Չնայած այդպիսի ոգնությանը, որ հասցվել է ռայոններին, ՄՏԿ–ների կադրերի հարցը մինչև այժմ մնում է ամենացավոտ տեղը:

Զրատնտեսական միջոցառումներ· — 1932 թվի համեմատությամբ՝ այս տարի Ղշհանները ժամանակին սպառված են յեղել, չնորհիվ այն բանի, որ գրեթե բազմի բոլոր գործարանները լծվել են մասերի նորոգման ու մոնտաժային գործերն ավելի կազմակերպված ձևով են կատարել:

Համարյա բոլոր ինժեներական սխեմաներով նչված աշխատանքները կատարվել են ժամանակից առաջ — մարտի 25–ին, բոլոր առումներով վորձնական կերպով ջուր է բաց թողնված:

Մենք պետք է մինչև գարնան ցանքսային կամպանիան ինժեներական սխեմի գլխավոր և միջռայոնական ջրանցք ներում 308 հազար քառակուսի մետր հողային աշխատանք կատարեյինք: Այդ պլանը գերակատարված է, այսինքն — 430·308 քառ. մետր:

1933 թվի պլանով պետք է նորոգվի 85 քյահրիզ, վորտեղ պետք է 40·584 քառ. մետր հողային աշխատանք կատարվի: Այդ աշխատանքից պետք է մինչև գարնան ցանքսային կամպանիան կատարվեր 13·531 քառ. մետր կատարված է 14·123 քառ. մետր:

Բամբակի ցանքսային սերմ· —

Ադրբեջանին հարկավոր սանդերիկական և յեղիպտական տեսակների սերմերի պահանջը, համապատասխան ցանելու

սերմի նորմայի և ցանքսի տարածության, լիովին ծածկվում է Ազխլոպկոմի մթերումներով:

ՄԵՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՆԱՆԱՅԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Գրեթե բոլոր ռայոններում մենատնտեսական սեկտորի վերաբերմամբ թերագնահատություն դոյություն ունի, էը նայած, վոր Ադրբեջանում, վերջին տվյալներով, մենատնտեսական սեկտորը 52–53 տոկոս է կազմում, թեև ճիշտ է, վոր նա բամբակի ռայոններում չատ քիչ տեսակարար կշիռ ունի: Ռայոնները մենատնտեսների մեջ կազմակերպչական և մասսայական – բացատրական աշխատանք չեն կերպչական և մասսայական – բացատրական աշխատանք չեն տարել՝ նրանց պարզնան ցանքսային կամպանիայի չուրջը համախմբելու համար:

Պատահական չէ, վոր մենատնտեսների հերկած 4316 հեկտարը, յերբ ստուգել են, պարզվել է, վոր 1414 հեկտար պակասում է:

Պլաններն ու ապրոմիջոցառումները մենատնտեսություններին հասցված են ձևականորեն, դրանք չեն տպահովված կատարման գործատնական ստուգմամբ (ինվենտարի նորոգում, հերկ, սերմերի առանձնացում և այլն): Հարի նորոգում, հերկ, սերմերի առանձնացում և այլն): Հարաբերական լծակները (կոլխոզային ակտիվ, դյուղխորհուրդ, պատավիրատվային ժողովներ, մամուլ և այլն) նույնպես մոռացել են մենատնտեսին:

Մոռ որերս Ազրկոմկուսի (բ) կենտկոմն այդ հարցի վերաբերմամբ հետևյալ վորոշումն է կայացրել.—

«Մատնանշելով բամբակային ռայոնների մեծ մասի բամբակաբուծության մեջ մենատնտեսի ունեցած նշանակության մոռնդամայն անհանդուրժելի թերագնահատումը, Ազրկոմկուսի (բ) կենտկոմն առաջարկում է կուսակցության բոլոր ռայկոմներին և ռայկոմի և կուսակցության բոլոր ռայկոմներին և ռայգործկոմներին՝ ցանքսային կամպանիայում մենատնտեսական սեկտորին կոնկրետ ղեկավարություն ապահովել: Պարտավորեցնել Ազխլոպտրակտորոցենտրին, վոր այն դեպքերում, յերբ կոլխոզները վերջացած են նրանց հետ կապած պայմանագրային աշխատանքները, տրակտորային պարկն ոգտագործել՝ մենատնտեսների դաշտերը վարելու և ցանելու համար, իսկ Հողժողկոմատը պետք է ապահովի աշխատավոր մենատնտեսների բոլոր տնտեսությունների ապրոսպասարկումը»:

ԳՅՈՒՂՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Հավահովեն դուք կարդացել եք ընկ. Ստալինի ու ընկ. Մոլոտովի հեռագիրը 1933 թվի բամբակի կամպանիայի մասին:

Այդ հեռագրում մատնանշվում են մեր անցյալ տարվա թերությունները ու սխալները, թե անհրաժեշտ է լավացնել հերկի վորակը, միջոցներ ձեռք առնել մասսայական քոչի դեմ, բարելավել տրակտորային պարկի աշխատանքը, թե անհրաժեշտ է ցանքսի ճշդրիտ ժամկետը սահմանել: Ըստ վորում, մասնավորապես, դլխավոր ուշադրությունը պետք դարձնել յեգիպտական բամբակի, կաղրերի ուժեղացման, սովխոզների և կոլխոզների ամրապնդման վրա և այլն:

Այդ հեռագրի կապակցությամբ վերջին ժամանակներս մենք երբեմն լրացում մեր նախկին մի քանի միջոցառումների՝ մի քանի նոր վորոշումներ ենք կայացրել:

Ռայոններն են ուղարկվում մոբիլիզացիայի յենթարկված հանրապետական ակտիվից 150 հոգի՝ ռայոնական դեկավար կազմակերպությունները ուժեղացնելու համար: Բջջային ու ռայոնական մասշտաբի 400 հոգի ուղարկվում են քաղաքային կազմակերպություններից՝ հիմնական դյուղխորհուրդներում ու կոլխոզներում դեկավարությունը ուժեղացնելու համար:

Մոբիլիզացիայի յեն յենթարկված 120 բժիշկ, 37 դյուղտնտես, տեխնիկ և այլն՝ ռայոններն ուղարկելու համար: Առաջներն ուղարկած բրիգադներից բացի՝ Բաքվի կազմակերպություններից ուղարկված են 600 կուսակցականներ՝ կուսմասսայական աշխատանքի համար մեկ ու կես ամիս ժամանակով և այլն և այլն:

Այդ բոլորով հանդերձ պետք է ասել, վոր մեզ մոտ դեռ նման. դյուղատնտեսական կամպանիայի համար պատրաստվելու գործում բազմաթիվ թերություններ, բացեր կան:

Այդ չի բացատրվում նրանով, որ մենք չենք նկատում և ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք չենք առնում, — այլ նրանով, որ ամբողջ մանրամասն ուսումնասիրելով՝ դրությունն Ադրբեջանում, մանավանդ ռայոններում, ավելի վատ է, քան մեզ թվում էր 2–3 ամիս սրանից առաջ:

Ձես ուշադրությամբ դիտել, հետաքրքրվել եմ, թե ին չո՞ւ գյուղական շատ մասսաններ մեջ այդքան վատ են ար մատացել կուսակցության ու կառավարության միջոցառումները և տեսել եմ, որ այդ բանում ամենից առաջ հանդես են եկել մեր հանրապետական կազմակերպությունները:

Մենք ժողկոմներին գործից հանում և նշանակում ենք ռայպործկոմների նախագահ ու ասում, — դու մինչև այժմ ուշք չես դարձրել այս ռայոնի վրա, նայիր, նայիր, թե գեղ վրա ինչպես ուշք կդարձնեն: Բայց դժբախտությունը նրա մեջ է, որ մենք այս կամ այն միջոցառումը կիրառելով «վիրավորվածների» յուրաքանչյուր դիմադրության ենք հանդիպում, ըստ որում նրանցից մի քանիսը յերբեմն հնարավորություն են ունենում գալ ու դանդատվել, որ իբրև ից վրա ճնշում են գործ դնում: Ընկերներ, դրանից վոչինչ դուրս չի գա:

Մենք վորոշել ենք, որ ամենից լավ և վիրավորել այսպես կոչված կուսակցականներին, քան վազը մեղքից նեղա նա կոլխոզային դյուղացությունը և մեր պլանը տապալվի (ձայներ — ուղիղ է):

Պետք է նշել, որ ռայոններն ուղարկվողներից չատերը ռայոն գնալով պատասխանատվություն չեն զգում, չեն թա վանցում մանրամասնություններին, գործի էության մեջ:

Այդ դրությունը սրվել էր ելի նրանով, որ գեկավար կադրերի կազմը ռայոնում թույլ էր, ռայոնական կազմակերպությունների ապարատն աղտոտված էր:

Այդ ժամանակի ընթացքում արդեն գործից հանված են՝ ռայկոմների 18 քարտուղարներ, 18 կազմբյուրո վար, 6 ագիտմասբաժնի վար, 7 կուլտպրոպբաժնի վար, 9 կինեֆիկատորավար, 20 ռայՎՀ, 11 Ադրլենկոմների նախագահ:

Ինչպես հայտնի է 1932 թվին բամբակային պլանը չկատարելու գլխավոր ու հիմնական պատճառներից մեկն էր

կուլակային դիմադրությունը և կուլակային սաբոտաժը, նրա վնասարարությունն ու քայքայիչ աշխատանքը:

Վոչ մի կասկած չկա, որ դասակարգային թշնամին հարմարվելով դյուղի փոխված պայմաններին, զանազան ձևերով շարունակում է իր դասակարգային պայքարը:

Կուլակությունն այս տարի յել դարնանացանի կամպանիայի նախապատրաստության դործի մեջ կատաղի դիմադրություն ցույց տալով՝ տրակտորների, դյուղատնտեսական ինվենտարի, ջրհանների, քաշհերկների և այլն նորոգման դործում մեզ վնասելով փորձում է այս տարի յել տապալել մեր պլանները:

Կուլակությունը խզիվելով կոլխոզները՝ ագիտացիա է տղում բատրակներին, չքավորներին և աշխատավոր — միջակներին կոլխոզ ընդունելու դեմ:

Իբրեվ որինակ կբերեմ մի քանի փաստեր. — Ղազախի ռայոնի Գրյունֆիլդ դյուղում կուլակները դրավելով կոլխոզի դեկավարությունը՝ կոլխոզ չեն թողնում այդ դյուղում ապրող բատրակներին և այդ բանը պատճառաբանում են կոլխոզի սակավահողությամբ և դերբնակչությամբ:

Նուխինսկի դրությունն ունենք նաև Ալեքսեյեվկա դյուղում:

Կոլխոզների վարչական դեկավարման չնորհիվ, թե ռայկոլխոզմիության և թե ռայոնական կազմակերպության կողմից, ի դեմս նախկին կուսդեկավարության, 1932 թ. հոկտ. 1–ից մինչև 1933 թ. փետրվ. 1–ր կոլխոզներից հեռացել են 116 չքավորա – միջակական տնտեսություններ:

Մի շարք ռայոններում կոլխոզները կազմակերպվել են աղդակցական սկզբունքով, «թայֆայի» սկզբունքով:

Թե ինչպես են վերաբերվել դատական որդաններըը կուլակային հանցագործություններին, յերևում է Նուխու ռայդատախազի վարմունքից. ռայդատախազությունում ամիսներով ընկած եյին կոլխոզների դույքի հանցավոր հափշտակման ակտերն ու յեղրակացությունները, իսկ դատախազը սառնասիրտ վերաբերմունք է ցույց տվել այդ բոլորին:

Հեղափոխական զգաստության ուժեղացումը, կոլխոզնիկ ի զոհը դասակարգային խորթ տարրերից, պվղոններից,

Այդ չի բացատրվում նրանով, որ մենք չենք նկատում և ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք չենք առնում, — այլ նրանով, որ ավելի մանրամասն ուսումնասիրելով՝ դրությունն Ադրբեջանում, մանավանդ ռայոններում, ավելի վատ է, քան մեզ թվում էր 2–3 ամիս սրանից առաջ:

Ցնս ուշադրությամբ դիտել, հետաքրքրվել եմ, թե ին չո՞ւ գյուղական շատ մասսաների մեջ այդքան վատ են ար մատացել կուսակցության ու կառավարության վորոշումները և տեսել եմ, որ այդ բանում ամենից առաջ հանդես վոր են մեր հանրապետական կազմակերպությունները:

Մենք ժողկոմներին գործից հանում և նշանակում ենք ռայդործկոմների նախագահ ու ասում, — դու մինչև այժմ ուշք չես դարձրել այս ռայոնի վրա, նստիր, նայիր, թե քեզ վրա ինչպես ուշք կդարձնեն: Բայց դժբախտությունը նրա մեջ է, որ մենք այս կամ այն միջոցառումը կիրառելով «վերակազմակերպիչների» յուրացնական դիմադրությանն ենք հանդիպում, ըստ վորում նրանցից մի քանիսը յերբեմն հնարավորություն են ունենում գալ ու դանդատվել, վոր իբրեց վրա ճնշում են գործ դնում: Ընկերներ, դրանից վոչինչ դուրս չի գա:

Մենք վորոշել ենք, որ ավելի լավ և վերակազմել այսպես կոչված կուսակցականներին, քան վազը մեղնից նեղա նա կոլխոզային գյուղացիությունը և մեր պլանը տապալվի (ձայներ — ուղիղ է):

Պետք է նշել, վոր ռայոններն ուղարկվողներից շատերը ռայոն գնալով պատասխանատվություն չեն զգում, չեն թա վանցում մանրամասնությունների, գործի էության մեջ:

Այդ դրությունը սրվել էր ելի նրանով, վոր ղեկավար կադրերի կազմը ռայոնում թույլ էր, ռայոնական կազմակերպությունների ապարատն աղտոտված էր:

Այդ ժամանակի ընթացքում արդեն գործից հանված են՝ ռայկոմների 18 քարտուղարներ, 18 կազմբյուրո, 6 պրոմատբաժնվար, 7 կուլտպրոպբաժնվար, 9 կինսեկտարներ, 20 ռայՎՀ, 11 Ադրբենկոմների քարտուղարներ:

Ինչպես հայտնի է 1932 թվին բամբակային պլանը չկատարելու գլխավոր ու հիմնական պատճառներից մեկն էր

կուլակային դիմադրությունը և կուլակային սաբոտաժը, նրա վնասարարությունն ու քայքայիչ աշխատանքը:

Վոչ մի կասկած չկա, վոր դասակարգային թշնամին հարմարվելով դյուղի փոխված պայմաններին, զանազան ձևերով չարունակում է իր դասակարգային պայքարը:

Կուլակությունն այս տարի յել դարնանացանի կամպանիայի նախապատրաստության գործի մեջ կատաղի դիմադրություն ցույց տալով՝ տրակտորների, դյուղատնտեսական ինվենտարի, ջրհանների, քյահրիզների և այլն նորոգման գործում մեզ վնասելով փորձում է այս տարի յել տապալել մեր պլանները:

Կուլակությունը խցկվելով կոլխոզները՝ ագիտացիա յե մղում բատրակների, չքավորների և աշխատավոր — միջակներին կոլխոզ ընդունելու դեմ:

Իբրեվ որինակ կբերեմ մի քանի փաստեր. — Ղազախի ռայոնի Գրյունֆիլդ դյուղում կուլակները դրավելով կոլխոզի ղեկավարությունը՝ կոլխոզ չեն թողնում այդ դյուղում ապրող բատրակներին և այդ բանը պատճառաբանում են կոլխոզի սակավահողությամբ և գերբնակչությամբ:

Նույնպիսի դրություն ունենք նաև Ալեքսեյեվկա դյուղում:

Կոլխոզների խաթարտակ ղեկավարման չնորհիվ, թե ռայկոլխոզմիության և թե ռայոնական կազմակերպության կողմից, ի դեմս նախկին կուզեկավարության, 1932 թ. հոկտ. 1–ից մինչև 1933 թ. փետրվ. 1–ր կոլխոզներից հեռացել են 116 չքավոր – միջակյին տնտեսություններ:

Մի շարք ռայոններում կոլխոզները կազմակերպվել են ազգակցական սկզբունքով, «թայֆայի» սկզբունքով:

Թե ինչպես են վերաբերվել դատական որգաններն կուլակային հանցագործություններին, յերևում է Նուխու ռայդատախազի վարմունքից. ռայդատախազությունում ամիսներով ընկած եյին կոլխոզների գործի հանգամանորեն հետաքննման ակտերն ու յեզրակացությունները, իսկ դատախազը սառնասիրտ վերաբերմունք և ցույց տվել այդ բոլորին:

Հեղափոխական դատաստության ուժեղացումը, կոլխոզների դեմը դատակարգային խոչընդոտներից, վնասարարներից,

արիկաներից և հատարտական – կոլխոզային սեփականությունը հավիտյանհողներից, անողոք պայքարը կուլակային տղեցության դեմ, կուլակային դիմադրությունն ու սաբոտաժը վճռականորեն հաղթահարելը, անհաչտ պայքարը կուլակության ագենտների, այդ ոպորտունիզմի, վորպես սվյալ ետապում գլխավոր վտանգի, «ձախ» ծուռմի դեմ, հանդիսանում է պարտնատացանը հաջող կատարելու վճռական պայմանը:

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ դրության մեջ է կուսակցական աշխատանքը ռայոններում: Ինչպիսի՞ տեսք ունի կուսակազմակերպությունն Աղբրեջանի ռայոններում:

Մի շարք ռայոնների, մի շարք կոլխոզային բջիջների տատագությունից երևում է, վոր չկա կուսակցության անդամների ու թեկնածուների ճշգրիտ հաշվառում (Աղջաբեդի, Սալի – Բայրամլի): Շատ հաճախ մինիստրի դյուղում աշխատող կոմունիստներն իրար բավականաչափ չեն ճանաչում:

Կոլխոզային բջիջները ձևականորեն դոյություն ունեն: Որինակ Բարդայի ռայոնում վատատորեն դոյություն չունեն կոլխոզային բջիջները: Կուսուժերի կանոնավոր գետեղում չկա բրիգադներում, կոլխոզներում: Բոլոր բջիջները դյուղական են համարվում: Բարդայի ռայոնի Շելոմանլուի բջիջում 32 կոմունիստից կոլխոզային արտադրության մեջ աշխատում են միայն 13 հոգի: Կուսմբաևի բացակայության պատճառով բրիգադներում հնարավորություն չի տրվել ուսումնասիրել նրանց աշխատանքը:

Ընկերներ, մենք շարունակ խոսում ենք կոմունիստների ավանգարդային դերի մասին արտադրության մեջ, մեր կոմունիստների ու կոմերիտականների որինակների մասին կոլխոզային արտադրության մեջ: Ես կարող եմ հարյուրավոր որինակներ ու վկայություններ բերել այն մասին, վոր մեր կոմունիստները, այդ հենց ընդհակառակը կուսակցականները անկուսակցականների պոչից են քաշ գալիս:

Կրասնոկամենսկում մի քանի որինակներով. —

Ջանգելանի ռայոնում. — Ազգան դյուղի «Պրոլետարսկո» կոլխոզում 18 կոմունիստներից արտադրության մեջ աշխատում է 6 հոգի:

Վարդաշենի ռայոնում. — կուսակազմակերպությունը դյուղական ու կոլխոզային բջիջներում ունի 281 կոմունիստ, վորոնցից անմիջապես կոլխոզային արտադրության մեջ աշխատում է միայն 111 հոգի: Վոչ բոլոր կոմունիստները են կոլխոզ մտել: Կոմունիստ մենատնտեսները — 95 հոգի չեն կամ ամբողջ կազմակերպության 36 տոկոսը:

Սոցմրցումը, հարվածայնությունը բավականաչափ թույլ են ծավալված կոմունիստների մեջ:

Որինակ՝ Կուբալի — Շիխլիքի բջիջի 13 անդամներից ու թեկնածուներից և 25 հարվածային կոլխոզնիկներից միայն մեկն է կոմունիստ:

Ըստ աշխորերի դասելով մեկը հետևյալ պատկերն ունենք. կուսակցության անդամ Հախվերդի Ռահիմովը, վոր բջիջի քարտուղար է, 1933 թվի հունվարի 1-ից մինչև մարտի 1-ը ունի 9 աշխոր, Հուսեյն Ջաքիր Ողլին 25 աշխոր, Նազի Մեկադին ողլին — 10 աշխոր:

Ցեվ այդ այն ժամանակ, երբ անկուսակցական Սատարդին Իսակ ողլին — 46 աշխոր, Ֆարման Շարկ ողլին — 34, Բաբա Ոսազ ողլին — 52 աշխոր ունեն:

Ահա կոմունիստների «ավանգարդային» դերի որինակները: Այդպես չէ անշուշտ բոլոր ռայոններում և բոլոր կոլխոզներում: Ցեմ տեսել եմ լավ կոլխոզների որինակները: Բայց վատն այն է, վոր մի շարք հիմնական ռայոններում և կոլխոզներում մենք խղճուկ պատկեր ունենք, մեր կոլխոզային բջիջները անբավարար վիճակում են:

Այդպիսի պայմաններում, կուսակազմակերպության, կոլխոզային բջիջների այդպիսի դրության դժվար է խոսել կոլխոզներում անկուսակցական ակտիվ համախմբելու մասին, կոլխոզային բջիջների չուրջն ամրապինդ ակտիվ ստեղծելու մասին:

Ռայոնական կուսակազմակերպությունների կողմից չհա
կենդանի հրահանգում, կոնկրետ ղեկավարություն առօրյին
կուսքլիջների, առանձին կոմունիստների նկատմամբ:

Մի շարք կոլխոզային բջիջներում աուդիտորը հատուկ
տեց, որ Լենինն ուղղել է Համկոմկուսի (բ) Կենտկոմի մար
տի 21-ին «Իսկրա» և «Վպերյոդ» կոլխոզային բջիջների աշ
խատանքի մասին կայացրած վորոշումը:

Կենտկոմի այդ վորոշման հիման վրա անհրաժեշտ է
մեզ անհապաղ սկսել դյուղի կուսաշխատանքի վերակառու
ցումը, մեր կոլխոզային բջիջների ամրապնդումը: Մենք
պետք է բարձրացնենք կուսակազմակերպության մարտակա
նությունը, ուժեղացնենք յուրաքանչյուր կոմունիստի պա
տասխանատվությունը, բարձրացնենք բջիջների ղեկավարա
կան մակարդակը, աչքուժացնենք ներկուսակցական կյանքը,
լուրջ ուշադրություն դարձնելով կուսժողովներում քննվող
հարցերի բովանդակությանը, վորակին:

Առանց դրան վոչ մի խոսք չի կարող լինել գարնանացա
նի հաջող նախապատրաստման մասին: Անհրաժեշտ է աչքու
ժացնել, ուժեղացնել դյուղխորհուրդների աշխատանքը,
առուգել նրանց կազմը՝ նրանց շարքերը խորթ տարրերից
մաքրելու համար:

Խնդիրը նրանում է, որ ուժեղացնենք պատակարգային
դիտատորությունը, ուղիղ ոգտագործենք ուժերը, նրանց կա
նոնավոր կերպով զետեղենք գարնանացանի կամպանիայի
վճռական տեղամասերում:

Ընկերներ, այդ կողմից ռայոնական կազմակերպու
թյունների հետ միասին ՄՏԿ քաղբաժինները սովխոզներում
պետք է վճռական դեր խաղան: ՄՏԿ քաղբաժինների աշխա
տանքն ամբողջովին ու լիովին արդարացնում է Համկոմկու
սի (բ) Կենտկոմի ու ԿՎՀ հունվարյան միացյալ պլենումի
վորոշումը՝ քաղբաժինների մասին, ցույց է տալիս այդ
վորոշման ժամանակին և ուղիղ լինելը:

Քաղբաժինների առաջ կանգնած խնդիրներն իրա են
թյան ամբողջ կուսաշխատանքի հիմնական խնդիրներն են

դյուղում, վորովհետև խոսքը վոչ միայն ՄՏԿ և սովխոզ
ների մասին է: Խոսքը, նախ, դյուղական ամբողջ տնտեսու
թյան ղեկավարությունը բարելավելու մասին է, յերկրորդ,
կոլխոզների և լայն մասսաների դաստիարակության խնդիր
ները հարկ յեղած աստիճանին բարձրանցնելու մասին, յեր
րորդ հարցը մեր դյուղական կազմակերպությունների ախալ
ներն ու թերությունները ուղղելու մասին է:

Ընկերներ, այս տարի մենք պետք է դժվարին պայման
ներում տանենք գարնանացանի կամպանիան՝ անցյալ տար
վա վատ աշխատանքի հետևանքով:

Մեր խնդիրներն ելի նրանով են բարդանում, վոր Աղր
բեջանի ռայոններում լավ, աուդիված կուսակցության նը
վիրված բավական թվով աշխատողներ չկան:

Բայց բոլշևիկների համար չկա վոչ մի անհաղթելի դժ
վարություն: Վոչ մի դժվարություն չի կարող վախեցնել
Անդրկովկասի, մասնավորապես Աղրբեջանի կոմունիստնե
րին:

Ընկերներ, դեպի հաղթությունն ունեցած մեր վստա
հությունն ամրապնդվում է մեր կուսակցության հիմնական
դծին նվիրված լինելով, լենինյան կենտկոմի բոլշևիկյան
ղեկավարությամբ՝ առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորու
թյամբ և մեր հաստատուն ցանկությամբ՝ ինչ վոր եղ լինի
կատարելու կուսակցության 1933 թվի բոլոր առաջադրանք
ները և մեղնից վերցնելու 1932 թվի բիծը:

Անդրկովկասի կուսակազմակերպությունների, մասնավո
րապես Աղրբեջանի կուսակազմակերպության խնդիրն է մո
բիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերն ու հնարավորու
թյունները և կուռ շարքերով Անդրկովկասի բոլշևիկյան
շտաբի – կուսակցության Անդրկովկասյան Յերկրային Կոմի
առյի անմիջական ղեկավարությամբ անդադար պայքար մղել
գարնանացանի ցանքը հաջող կատարելու համար:

Խնդիրը նրանում է, որ անշեղ պայքար մղենք բեր
քատվությունը բարձրացնելու համար, բամբակենու վորա
կը բարելավելու համար, Անդրկովկասը Խորհրդային Մի
ության բամբակային յերկրորդ հզոր բազա դարձնելու հա
մար:

Համկոմկուսի (բ) կենտկոմի ու ընկ. Ստալինի դեմ Ամբրիկոսյան դեկավարությունն ունեցած վատահավատությունը մենք կարող ենք արդարացնել միմիայն 1933 թվի տնտեսական բոլոր պլանների, կուսակցության ու կառավարության կողմից մեր վրա դրված բոլոր խնդիրների կատարումով, կուսակցության հեղինական գծի համար մղվող պայքարի միայն պրակտիկ արդյունքով: (Ծափահարություններ):

ՀՈՆՈՒՆ ԲԱՄԲԱԿԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՄԱՆ ՄԵՋ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ

(Ռայհողբաժվարների 1933 թվի օգոստոսի 8-ին հանրապետական խորհրդակցությունում արտասանած ճառը)

ԲԱՄԲԱԿԱՑԻՆ ՊԼԱՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ, յերկրորդ որն է, վոր դուք քննարկում եք մի չարք հարցեր, վորոնք մասամբ վերաբերվում են 1933 թվի առաջին կիսամյակում գյուղական տնտեսության ասպարիզում կատարած մեր աշխատանքի նախնական հանրագումարներին, մասամբ էլ յերկրորդ կիսամյակի հարցերին, այն է բամբակը քաղելու և մթերելու, աշնանային ցանքսային կամպանիայի և 1934 թվի բամբակային կամպանիային նախապատրաստվելու հարցերին:

Կիսամյա աշխատանքի հանրագումարը քննարկելիս անհրաժեշտ է չեշտել յերեսան հանել թույլ տված մեր բոլոր թերությունները, վորպեսզի մեր առաջ դրված խնդիրները լուծելիս նրանցից միանգամայն խուսափենք: Ուստի առանձին ընկերների, գլխավորապես հանրապետական գործիչների այն տրամադրությունը, վոր հանգում է առաջին կիսամյակին իրենց աշխատանքի արդյունքներով իրենց հանգստացնելուն, 1932 թվի տարբերման տարվա համեմատական ցուցանիշների վրա հենվելուն, կամ յեռամսյակ հաշիվների, մարզերի ու յերկրների համեմատական ցուցանիշների վրա հենվելուն — միանգամայն ճիշտ չէ, անթույլատրելի ու անընդունելի յե մեր պայմաններում, մանավանդ տվյալ ետապում:

ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ ՄՂԱՑ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՎՀՁ ՄԻ ՀԱՆԳԱՏԱՑՈՒՄ

Ադրբեջանում 1933 թվի գյուղատնտեսական առաջադրութ յունների կատարման ընթացքում մենք ձեզ հետ իրավունք չունենք մինչև իսկ բավարարանալու սկզբնական առաջադրութ յունների կատարումով, նկատի ունենալով հսկա ճեղքվածքն ու մեր անցյալ տարվա պարտքը, մանավանդ բամբակի նկատմամբ: Այդ հարցերի նկատմամբ պլանը մեզ համար ձեզ հետ միասին վորպես ղեկավարութ յուն հանդիսանալով՝ պետք է մոտավոր կողմնորոշում դառնա բամբակային ֆրոնտում լայն պայքար ծավալելու մեր Միութ յան բամբակային անկախութ յան համար:

Հետևաբար, 1933 թվին բամբակային կամպանիան անցկացնելու նկատմամբ այս կամ այն առաջադրութ յունների քանակական կատարումով մենք չենք կարող բավականանալ:

Ճիշտ է, այս տարի գյուղատնտեսական կամպանիայի մի շարք ցուցանիշների նկատմամբ մենք անցյալ տարվանից շատ ավելի լավ ենք: Ճիշտ է, վոր այս տարի Ադրբեջանի բոլշևիկները բամբակի համար անցյալ տարվանից ավելի լավ են պայքարում: Ճիշտ է, վոր մենք ահագին բնկում ունենք մեր կոլխոզային մասսայի և աշխատավոր մենատնտեսների տրամադրութ յուններում: Ճիշտ է, վոր մենք ունենք գյուղատնտեսական ֆրոնտում աշխատող այնպիսի ընկերներ, վորոնք արժանի չեն դովասանքի: Այդպիսի ընկերներ կան և ձեր մեջ — հողբաժիններում աշխատողների շրջանում, վորոնք վոչ թե վախից, այլ խղճի մտոք կռվում են կուսակցութ յան ու կառավարութ յան առաջադրութ յունները կատարելու համար:

Որինակ կարող է ծառայել Կարագոնլվի հողբաժնի վարիչ ընկ. Աբդուլլաևը: Այդ բանի մեջ չես համոզվեցի ռայոնում նրա աշխատանքն անձամբ ստուգելիս: Մենք ընկ. Ագբրայի հետ անցանք Կարագոնլուի ռայոնը հուլիսի սկզբին, ճիշտ առավոտյան ժամը վեցին, ամենևին չնախազգուշացնելով ռայոնական աշխատողներից և վոչ մեկին: Ընկ. Աբդուլլաևն արդեն վոտքի վրա էր և հուզված, վոր մի քանի կոլխոզներում բամբակը վատ է մշակվում: Ընկ. Աբդուլլաևն այդ որը հիվանդ եր ու ջերմ ուներ, իսկ այդ պես վարվել չի կարող վոչ ոք և վոչ ամեն դեպքում:

Ուրիշ որինակ — Կասում-Իսմայլովի ռայոնի հողբաժնի վարիչը: Ընայելով այդ ռայոնում գյուղ ունեցող բոլոր թերութ յուններին, այդ ընկերը կուսակցական կազմակերպութ յան, քաղաքժնի հետ միասին ու ղեկավարութ յամբ կարողացել է բամբակի մշակման ու խնամքի գործն այնպես դնել, վոր նրանց մոտ այսոր բամբակը լավ գրութ յան մեջ է: Կարելի չե մի շարք այլ կենդանի որինակներ մեջ բերել, թե մեր ռայկոմները, քաղբաժինները ռայգործկոմները ու հողբաժինները ինչպես իրոք բոլշևիկորեն պայքարում են բամբակի համար, բայց այդ բոլորը չի ասում, վոր մենք այսոր կարող ենք հանգստանալ և ուրիշներին հանգստացնել՝ հենվելով ավելի վատ որինակների ու համեմատական ցուցանիշների վրա, նկատի ունենալով իմ վերևն ասածը 1932 թ. մեր ձեղքվածքների մասին յեվ վոր գլխավորն է, նկատի ունենալով մեր կուսակցութ յան առաջնորդ ընկ. Ստալինի հանճարեղ ցուցմունքն այն մասին, թե՝

«Մենք հետ ենք մնացել կապիտալիստական յերկրներից 50–100 տարով: Այդ տարածութ յունը մենք պետք է անցնենք 10 տարում»:

Ահա համապատասխան վորակական ցուցանիշներով ամրացված տեմպերը, վորոնցով մենք պիտի ղեկավարենք այս կամ այն կամպանիան անցկացնելու առաջարկում և տվյալ դեպքում Ադրբեջանի գյուղական տնտեսութ յան նկատմամբ կուսակցութ յան և կառավարութ յան առաջադրութ յունները կատարելու առաջարկում:

Ուստի մեր ամեն մի ձեռք բերած հաջողութ յունը պետք է ամրացվի և յելակետ ծառայի հետագա առաջխաղացման համար յեռանդը, խանդավառութ յունը կբարձնապատակելու, յեռապատակելու համար, վորպեսզի մոտ ժամանակներս Ադրբեջանի գյուղատնտեսութ յունը դառնա առաջավոր սոցիալիստական գյուղատնտեսութ յուն:

Այս տեսակետով պետք է մոտենալ 1933 թվի նախնական հանրագումարներին և հենց այդ տեսակետով մոտենալով մենք այսոր բոլշևիկորեն պիտի հայտարարենք,

վոր մեր կխամյա աշխատանքի հանրագումարում ունենք մի շարք աններելի սխալներ, թերություններ, վոր մոտ ժամանակներս մեր ձեռքով պետք է համակչռվեն, նրանց փոխարենը պետք է հաստատվի:

Առաջին կխամյակին գյուղական տնտեսության ապարիզում մեր ունեցած թերություններն ակնառու կերպով ցույց տալու համար — կվերցնեմ մի օրինակ, այն է, թե մեզ մոտ ինչպես է անցել ու մինչև այսոր ընդունում բամբակի աշխատանքը՝ սկսելով ցանքային կամպանիայի նախապատրաստական աշխատանքից, հենց ցանքից, մանավանդ մշակումից ու վուռդելուց:

Ամենից առաջ մենք լիովին կյանքի մեջ չենք անցկացրել հենց մեր նշած միջոցառումները վոչ ըստ ժամկետների, վոչ ըստ քանակության և մանավանդ ըստ վորակի: Ձեղնից վոչ մեկը չի կարող ասել, վոր ինքը պահպանել է ցանքային կամպանիայի նախապատրաստական աշխատանքների ժամկետները, քանակապես կատարել է ցանքային բոլոր անհրաժեշտ միջոցառումները, վորակապես կատարել է ցանքային նախապատրաստական միջոցառումների բոլոր ցուցանիշները: Ճիշ պարզ է՞, արդյոք, վոր միմիայն այդ մոմենտների կատարումով մենք կարճ բացնելինք բերքատվությունը 20—25 տոկոսի սահմաններում: Այս մեր առաջին ու էական թերությունն է, մեր հանցանքը, վոր մենք իրավունք չունենք մոռանալու և վոր, ինչ էլ վոր լինի, մենք պետք է համակչռենք, փոխարենը հատուցենք ցանքի, առաջիկա բերքահավաքի ու թերման կամպանիայի ժամանակ:

ԼԻՈՎԻՆ ԿԱՏԱՐԵԼ ԸՆԿ. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՈՒ ՄՈԼՈՏՈՎԻ ԴԻՐԵԿՏԻՎԸ

Ընկերներ, մենք ձեզ հետ պետք է վոչ միայն կատարելինք պլանով նշված բոլոր միջոցառումները բամբակի մշակման վերաբերմամբ, այլև լիովին անվերապահորեն կյանքի մեջ անցկացնենք այն պահանջները, վոր բամբակի նկատմամբ հայտնի հեռագրային դիրեկտիվում մեր առաջ են դրել մեր կուսակցության ու համաշխարհային

պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինը և ընկ. Մոլոտովը:

Այդ հեռագիրը չէ՞ վոր դործողության կենդանի կոնկրետ ծրագիրը և բամբակային ֆրոնտում: Այսոր անհրաժեշտ եմ համարում ձեզ հետ կատ առ կետ և մի անգամ էս վերանայել այդ հեռագիրը, վորովհետև մենք չենք կարող հանդստանալ այնքան ժամանակ, քանի այդ բոլոր պահանջները 100 տոկոսով չենք անցկացրել կյանքի մեջ:

Ահա թե ինչ է ասվում այդ հեռագրի առաջին կետում:

— «Ապահովել պատշաճ կերպով հերկը, քանի վոր անցյալ տարի բամբակի անբավարար բերքի կարևորագույն պատճառներից մեկը ցածր վորակի հերկն եր»:

Արդյոք մենք ձեզ հետ այսոր կարո՞ղ ենք ասել, վոր 1933 թ. հերկի վորակը մենք լիովին ապահովել ենք այնպես, ինչպես այդ պահանջվում է հեռագրի մեջ բերված առաջին կետում: Վոչ, չենք կարող ասել: Մենք հողի մեծ կտորներ անհերկ ենք թողել, հերկը հարկ չեղած խոշտությամբ չենք արել, թիվեր ենք թողել և այլն և այլն:

Հետո հեռագրում ասված է.

«Նախապղպաչացրեք բամբակի ոլայններում մասսայական քոչվորությունը դեպի ամառային արոտատեղինները բամբակենու չհասուն մշակման ժամանակ, վորն անցյալ տարի շատ դեպքերում հասցրել է այն բանին, վոր բամբակենին մնացած կոլխոզնիկների ուժերով վատասորեն անհնար է չեղել մշակելու»:

Արդյոք, մենք ապահովո՞ղ ենք այդ կետի կատարումը, ամեն պայմաններ ստեղծո՞ղ ենք նրա համար, վոր կանդնեցնենք մասսայական քոչվորությունը: Արդյոք, մենք կարո՞ղ ենք ասել, վոր մնացած քոչվորներին ամեն կերպով ապահովել ենք բոլոր անհրաժեշտ բաներով, վոր նրանք կարողանան արդյունավետ կերպով աշխատել բամբակային դաշտերում: Վոչ, ընկերներ, չենք ապահովել և չեթե վորևե բան արել ենք, այն էլ շատ քիչ, շատ ան նշան բան: Այդ բանում առանձնապես հանցավոր են մեր կենտրոնական ժողկոմատները՝ բացառությամբ առժողկոմատի, վորը մյուս ժողկոմատների համեմատությամբ ավելի լավ է աշխատել այդ ուղղությամբ:

Ցերբորդը, վոր ասված է այդ հեռագրում.

«Սպահովեցեք տրակտորային պարկի հարկ չեղած չափով աշխատանքը: Բազուն տեխնիկական այնպիսի միջոցներ ունի, վոր թույլ են տալիս տրակտորներին նորոգման, նրանց ոգտագործելու գործն ավելի լավ դնել, քան վորևե բամբակային այլ ռայոնում, վորը բավականաչափ ինդուստրիալ բազա չունի, այն ինչ իրոք տրակտորային պարկի ոգտագործման նկատմամբ դուք ավելի ցածր եք բամբակային մյուս ռայոններից»:

Արդյոք, մենք ամբողջ բեռնավորումով ոգտագործե՞լ ենք մեր տրակտորային ամբողջ պարկը: Վոչ, վոչ միայն մենք չենք ոգտագործել մեր պարկը լիովին բեռնավորումով, այլ և մեր պարկը չի կատարել այն նվազագույն աոաջադրությունները, վորոնք ըստ մեր նախագծումների դրված էին նրա վրա:

Այսոր միանգամայն անհասկանալի ու ոտարոտի չէ թվում, յերբ Ադր. Տրակտորակենտրոնի առանձին ղեկավար ընկերները հիանում ու հրճվում են, վոր այս տարի տրակտորային պարկի աշխատանքի համար լրենք պարզև են տորային պարկի աշխատանքի համար լրենք պարզև են տորային պարկի աշխատանքի համար լրենք պարզև են տ

րել յեվ վատ ենք արել: Ճիշտ է, յեգիպտական բամբակի կացութիւնն այսօր ավելի լավ է ամերիկականից, բայց այդ չի նշանակում, որ մենք ձեզ հետ իրագործել ենք այն բոլոր միջոցառումները, որ պետք էին յեգիպտական բամբակի համար և յեթե մենք ձեզ հետ ամեն ինչ կատարելինք, ինչ անհրաժեշտ եր յեգիպտական բամբակի համար, ապա վստահաբար կարելի յեր ասել, թե մենք վոչ միայն կատարել ենք յեգիպտական բամբակի պլանը, այլ և յեգիպտական բամբակի նկատմամբ կատարելագես չտեսնված բերքատվութիւն կունենայինք:

Ինչ այդ հեռագրի 2-րդ մասին է վերաբերում,—բամբակի չափի մասին, որ պետք է այս տարի մենք հանձնենք և նկատի ունեցել, որ այդ անձեռնմխելի, քննարկութեան կամ վիճարանութեան վոչ յենթակա հրաման է և ինչ էլ լինի, 134 հազար տոնն հնդավոր բամբակը, այդ թվից 13·500 տոնն յեգիպտական բամբակը, մենք ձեզ հետ պետք է հանձնենք:

Այդ հեռագրի վեցերորդ կետն ասում է.

«Ստուգեցեք և ուժեղացրեք ՄՏԿ ապարատը տեղամասերի կազմակերպը»:

Մենք արդյոք ձեզ հետ ստուգել ենք ՄՏԿ կազմը՝ դեպի կոմիտեից սկսած մինչև առանձին տրակտորիստները և արդյոք մենք ուժեղացրել ենք ՄՏԿ, մանավանդ ապրատեղամասերի կազմը: Վոչ, ընկերներ, մենք ինչ բան արել ենք, բայց մենք այսօր չենք կարող ասել, որ մեր ՄՏԿ, ապրատեղամասերի տրակտորիստների ամբողջ կազմը, բրիգադիրները, կոլխոզների գեկավար մասը, նախագահների ու վարչութեան անդամների կազմը մենք լրիվին ստուգել, ուժեղացրել ենք: Այնպես որ մենք այսօր չենք կարող բավականանալ այդ տեսակետում կատարված աշխատանքով: Մենք ձեզ հետ աշխատանքի միայն այն մասն ենք արել, որ պետք եր անել: Այսուհետև մեր խնդիրն է ձեզ հետ — մանավանդ Ապրարատորկենտրոնի գեկավարութեան հետ, հասնել նրանից, որ մեր ամեն ժամանակներն ուժեղացվի ՄՏԿ, ապրատեղամասերի, տրակտորիստների, բրիգադիրների և այլ կազմը, քան որում այդ խնդիրը կիրատեսի թե վոչ թե մի ոքում, վոչ թե մի չարքում, վոչ թե կամպանիական կար-

պով, այլ սիստեմատիկաբար Տրակտորկենտրոնի, Հողժողկոմատի ու բոլոր շահագրգռված կազմակերպութիւնների, գլխավորապես մեր ռայկոմների քաղբաժինների ու հողբաժինների ամբողջ ղեկավարութեան ամենօրյա աշխատանքով:

Հեռագրի յոթերորդ կետն ասում է.

«Ձեր հանրապետութեան բամբակային սովխոզները ներկա տարում վորոշ հաջողութեան հասել են լիովին կատարելով բամբակը հանձնելու պլանը: Անհրաժեշտ է ձեռք բերված հաջողութիւնները զարկ տալ՝ կարա-Ջուղայի, Միլի սովխոզները դարձնելով բամբակային գործի տեխնիկայի իսկական որինակներ, մասնավորապես յեգիպտական բամբակեղու լավագույն որինակներ ստեղծելու նկատմամբ: Դրա համար ապահովել հարկ յեղած ոգնութիւնը մեքենագետներով, փորձված տրակտեսավար կոմունիստներով և նորմալ պայմաններ աշխատանքի համար»:

Այդ ո՞ք կարող ենք ասել, որ այսօր մեր սովխոզները համապատասխանում են այն պահանջներին, որ մեր առաջ են դնում ընկ. ընկ. Ստալինն ու Մոլոտովը: Իհարկե, չի կարելի:

Այդ հարցի վրա աշխատել է կուսակցութեան Ցեկրկային կոմիտեի հատուկ հանձնաժողովը և այդ հանձնաժողովի ղեկավարման համեմատ Ազրկոմկուսի (բ) կենտկոմն ու Ազժողկոմատը նշել եյին մի շարք կոնկրետ միջոցառումներ:

Այդ միջոցառումները վերջերս ստուգելուց յերևում է, որ սովխոզների, մանավանդ Ազսովխոզթրեստի ղեկավարութեյունը չի կատարել կուսակցութեյան ու կառավարութեյան մի շարք առաջադրութեյունները և յերբ Ազսովխոզթրեստի առանձին ղեկավար ընկերները բամբականանալով Սոյուզսովխոզթրեստից ստացած հեռագրով, վորտեղ ասված է վոր պես թե Ադրբեջանի բամբակային սովխոզները բամբակային մյուս սովխոզներից առաջ են, այդ միանգամայն ուղիղ չէ և մինչև իսկ վնասակար է մեր սովխոզների հետագա առողջացման համար և այդ արգելակ է հանդիսանում մեր սովխոզները սերմնաբուծական տնտեսութեյունների որինակները դարձնելու գործում, ինչպես ասված է ընկ. ընկ. Ստալինի

ու Մոլոտովի հետագրում: Այդ չպետք է մոռանան մանավանդ մեր սովխոզների ղեկավար ընկերները:

Ահա, ընկերներ, այն հանգամանքը, որով մենք պետք է գնահատենք մեր կատարած աշխատանքը և որչ թե պետք է վնասակար համեմատություններ անենք անցյալ տարվա վատ որնիակների հետ կամ հետամնաց ռայոնների վատ ու անպետք աշխատանքի հետ:

ԴՈՒՐՍ ՎՌՆԴԵԼ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԿՈՆԿՐԵՏ ՈՒ ՈՊԵՐԱՏԻՎ ԿԵՐՊՈՎ ՂԵԿԱՎԱՐԵԼ

Այս տեսակետով մոտենալով մեր աշխատանքի գնահատականին, այսօր մենք ամենքս և գլխավորապես Անդրհողժող կոմատը, Անդրտրակտորկենտրոնը, Անդազոտխոպկը, Անդը Ջրտնտեսությունը, մանավանդ վնասատուների դեմ պայքարող Անդրբենջանի ընկերությունը պետք է բոլշևիկորեն ասենք, որ մեր կիսամյա աշխատանքում կան անթիվ պակասություններ, անթիվ թերություններ, յերբեմն անթուլատրելի անթիվ զանցառություններ, որ մենք ամենքս միասին հենց մոտ ժամանակներս պետք է արմատախիլ անենք մեր պրակտիկայից:

Մեր աշխատանքը 1933 թվի բամբակային կամպանիայում այդպես և գնահատել այս տարվա հուլիսի 14-ին մեր կուսակցության Ցենտրային կոմիտեն: Ամփոփող հետ համաձայն կրկին անգամ լիովին կարդալ ձեզ կուսակցության Ցենտրային կոմիտեյի այդ վորոշումը.—

«1· Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը նշում է, վոր չնայելով մշակման — բաղհանի կամպանիայի կազմակերպության նկատմամբ Անդրյերկոմի կողմից շատ անգամ կոնկրետ դիրեկտիվներ ու ցուցմունքներ են յեղել, մի շարք ռայոններում մինչև այժմ չկա իսկական բոլշևիկյան պայքար և մասսաները մոբիլիզացիայի չեն յենթարկվել բամբակենու մշակման կամպանիայի բոլոր պրոցեսները ժամանակին կատարելու շուրջը:

2· Շնորհիվ հանգստացման տարրերի ներկայության, մի շարք ռայոններում դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի դեմ վճռական պայքարի բացակայության, աշխատանքային կարգապահության թուլացման (տղամարդկանց մասսայորեն մշակման գործին չգնալը, գործի ուշ դուրս գալը և դաշտային աշխատանքներից շուտ վերադառնալը, աշխատանքի ցածր արտադրողականությունը, անասունների խնամքը), մշակության վորակին լուրջ ուշադրություն չդարձնելը — բամբակային այնպիսի կարեվորագույն ռայոնների, ինչպիսիք են Սալյանի, Բարդայի, Ղազախի, Կարադոնղվի, Բելասուվարի, Սաբիր-Աբադի, Այի-Բայրամլվի, Գյոգչայի, Ղուրդուղուլու, Բորչալվի, Ղամարլվի ռայոնների բամբակենու մշակման տեմպերն ու վորակը շարունակում են անբավարար մնալ:

3· Բամբակի մշակման գործում այդպիսի կացությունը միանգամայն անթույլատրելի և անհանդուրժելի համարելով՝ Անդրյերկոմը պարտավորեցնում է հանրապետությունների կենտկոմներին, կուսակցության ռայկոմներին, ՄՏԿ ու սովխոզների բաղրաժիններին անհապաղ մրցակման կամպանիայի գործում սուր բեկում ստեղծել՝ մի ցոցներ ձեռք առնելով մասնավորապես անհապաղ լիկվիդացիայի յենթարկելու բամբակի մշակման յետամնացությունը մեհատնտեսների սեկտորում: Անդրյերկոմը յերկշաբաթյակ է հայտարարում հուլիսի 15-ից մինչև ոգոստոսի 1-ը՝ լիկվիդացիայի յենթարկելու բամբակենու մշակման բոլոր ցուցանիշների նկատմամբ յեղած յետամնացությունը:

4· Միաժամանակ մշակման կամպանիան մշտապես համապատասխան կերպով անցկացնելով Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի և հանրապետությունների կենտկոմների դիրեկտիվները պարտավորեցնում են ռայկոմներին և ՄՏԿ բաղրաժիններին գործադրել բոլոր անհրաժեշտ միջոցները, վոր ժամանակին ապահովվի բամբակի վոռոգումը:

5· Համկոմկուսի (բ) Անդրյերկոմը միանգամայն անթույլատրելի յե համարում, յերբ մի շարք ռայոններում ռայոնական կազմակերպությունները գյուղատնտեսական վնասատուների դեմ տարված պայքարը միայն վնասատուների դեմ պայքարող ընկերության որգանների գործն են համարում և պարտավորեցնում է կուսակցության ռայոնա-

կան կոմիտեներին, ՄՏԿ ու սովխոզների բաղաժիններին, ու կոլխոզների վարչություններին մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերն ու միջոցները ոգնելու վնասատուների դեմ պայքարող ընկերություն որգաններին ամենակարճ ժամանակում գյուղատնտեսության վնասատուներին թե չեբեվան հանելու և թե նրանց լիկվիդացիայի ենթարկելու նկատմամբ:

6· Անդրյերկոմը պարտավորեցնում է հանրապետությունների կենտկոմներին, կուսակցության ոայկոմներին, ՄՏԿ ու սովխոզների բաղաժիններին հուլիսի 25–ից մինչև սգոստոսի 25–ը մասսայական ստուգում կազմակերպել պարզելու բամբակի մշակման նկատմամբ կատարված աշխատանքի բանական ու վորակական ցուցանիշները և վորոշելու բամբակի կացություն ամեն մի ոայոնում ու կոլխոզում:

Հարվածային չերկշաբաթյակ անց կացնելու նկատմամբ ոայոնական կազմակերպություններին ոգնելու և նրանց ղեկավարելու համար, այլ և մասսայական ստուգում կազմակերպելու համար Անդրյերկոմն առաջարկում է հանրապետությունների կենտկոմներին տեղերն ուղարկել հանրապետական ղեկավար աշխատողներ»:

Ահա թե ինչի վրա պետք է աչխատել, ինչի մասին պիտի մտածել և վոչ թե հանդստանալ:

Ցեթե 1933 թվի առաջին կիսամյակում բամբակի համար տարվող աչխատանքում այդքան չատ պակասություններ, թերություններ կան, ապա ավելի չատ թերություններ պակասություններ կան 1933 թվի գյուղատնտեսական կամպանիայի ասպարիզում մեր ունեցած աչխատանքի մյուս ցուցանիշների վերաբերմամբ և այդ թերությունների հետևանքներն այսոր իրենց ցույց են տալիս մեր մթերումների դործում:

Ինչո՞ւ չե այդ բոլորը անդի ունենում: Ինչո՞ւ, չնայած այն բանին, վոր ժամանակին մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից տրված են ուղղակի կոնկրետ հրահանդներ, դործն այդպես վատ և դուրս չեկել առաջին կիսամյակում: Սմենից առաջ նրա համար, վոր մեր ընկերներն անուչադիր, չերբեմն էլ կազյոնի ու բյուրոկրատական վերաբերմունք են ցույց տալիս կուսակցության և կառավարության այդ ուղղակի հրահանդներին, հանցավոր, խայտառակ կերպով են արձադանքում այդ հրահանդներին:

Ահա ձեզ մի ոայդործկոմի որինակ՝ Ադրբեջանի ղեկավար որգաններից բղխող հրահանդները կատարելու վերաբերյալ:

Գիլի ոայդործկոմի 1933 թվի ապրիլի 23–ի արձանագրությունից:

ԼՍԵՅԻՆ· — կառավարական մի չարք հեռադրերի մասին:

ՎՈՐՈՇԵՅԻՆ· — Ադրժողկոմխորհի և Ադրկոմկուսի (բ) կենտկոմի № 38 հեռադիրը, Ադրժողկոմխորհի № 1059 հեռադիրը, Ադրկոմկուսի (բ) կենտկոմի և Ադրժողկոմխորհի № 113/3 հեռադիրը, Ադրկոմկուսի (բ) կենտկոմի չեվ Ադրժողկոմխորհի № 1097 հեռադիրը և Ադրժողկոմատի հեռադիրը — ընդունել ի դիտություն և ի ղեկավարություն, իսկ վերջինի վերաբերմամբ առաջարկել ցանքկոմին և Ռայհողբաժնին ուժեղացնել հացահատիկային կուլտուրաների ցանքսի տեմպերը:

Ի՞նչ է ցույց տալիս այս անկեղծասային փաստը: Այն, վոր Գիլի ոայոնի ընկերներն իրենց աչխատանքում անդիտանում են ղեկավարության մեջ գործառնության կոնկրետության մասին մեր կուսակցության առաջնորդ ընկ· Ստալինի արած ցուցմունքները:

Դա ցույց է տալիս, վոր ընկերները գործին մոտենում են չինովնիկորեն, բյուրոկրատորեն և վոչ թե այնպես, ինչպես բոլշևիկը պետք է մոտենա իր կուսակցության յուրաքանչյուր առանձին հրահանդին:

Իսկ մի՞թե այդպիսի որինակներ քիչ են մեր ոայոններում և վոչ միայն ոայոններում, այլև մեր ժողկոմատներում: Միթե մենք տասնյակ փաստեր չունենք, վոր այս տեղից ուղարկված հրահանդներն առանց կարդացվելու կըց վում են գործին, յերբ կուսակցության և կառավարության մի չարք կարևորագույն վորոչումներ չեն հասցրվում մինչև կոլխոզները, մինչև առանձին կոլխոզնիկներն ու մեն նատնտեսությունները: Միթե քիչ դեպքեր կան, յերբ ժա

մանակին փոխանակ մասսայական – բացատրական, ազիտա ցիոն աշխատանք տանելու, կոլխոզային մասսաների և աշխատավոր մենատնտեսների շարքերում այս կամ այն դեկրետները, Խորհրդային պետության այս կամ այն որոշումն արմատացնելուն և պետությանը պարտադիր մատակարարումներին վերաբերվող պարտադիրները ժամանակին հանձնելուն — դրանք ամիսներով ընկած են լինում գյուղխորհուրդներում և ռայգործկոմներում, իսկ հետո մթերման մոմենտի ժամանակ վարչական վաղվողոններն են սկսվում և հետևանքը —անթիվ սխալներ, դժգոհություններ ու վնաս կոլխոզային և աշխատավոր մենատնտեսական մասսաների կողմից:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԵԼ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Գյուղատնտեսական ասպարիզում մեր կխամյա աշխատանքը, բացի մատնանշած թերություններից ու պակասություններից, վոր յեղել են այս կամ այն առաջադրության կատարելու ընթացքում, ցույց է տվել մեզ այն անբաժանելի դրությունը, վոր կա Ադրբեջանի հողային որդան ներում, սկսած Հողժողկոմատից մինչև հաղրաժիններ: Մոտերքս անձամբ թռուցիկ կերպով ստուգել եմ Հողժողկոմատի ու Տրակտորոկենտրոնի ապարատները և դտել, վոր մի շարք նախագծեր ու պլանային յենթադրություններ, վոր Հողժողկոմատն ու Տրակտորոկենտրոնն են ներկայացնում՝ դիրեկտիվային և խորհրդային զեկավար որգանների քննության — իրենց հիմքում ունալ տվյալներ չունեն: Սկզբից մինչև վերջը նրանք արդյունք են գրասեն յակային յենթադրությունների և մոչ թե ռայոններում, մանավանդ կոլխոզներում և առանձին մենատնտեսություն ներում յեղած իրերի փաստական դրության ուսյալ իրակա նության արտահայտությանը:

Մինչև այժմ դեռ ևս փոքր ի շատե կանոնավորված հաշվեառում, հաշվեվողություն և կատարման ստուգում չկա Ադրբեջանի հողորգաններում, թե այստեղ Բագվում և թե գլխավորապես ռայոններում ու կոլխոզներում: Ա-

ռանձնապես այդ բանը յերևան է գալիս գյուղատնտեսական արտադրանքները մթերելու ընթացքում, հացի, յուղի պարտադիր մատակարարման, խոտամթերման գործում և այլն:

Մենք հաշվեառման բացակայության չնորհիվ, կուսակցության և կառավարության հրահանգների մի շարք ծռումներ ունենք մթերողական կամպանիաներում, դեխավորապես հացամթերման և յուղամթերման գործում՝ դերատուրքավորում մի տեղում, թերատուրքավորում մյուս տեղերում և այլն և այլն:

Հաշվեառման բացակայությունը կուլակին, դողին, խարեբային հնարավորություն է տալիս լայն գործնեություն ծավալել մթերողական կամպանիան վիժեցնելու մի կողմից և մյուս կողմից էլ գործնեություն ծավալել դողության, հափշտակման, պետական, հասարակական սեփականության հափշտակելու, չարչելու ուղղությամբ:

Իսկ ո՞վ պետք է դնե հաշվեառման գործը: Ո՞վ է պատասխանատու հաշվեառման համար բոլոր մշակույթների, բոլոր սեկտորների վերաբերմամբ ռայոններում, կոլխոզներում և գյուղերում: Ամենից առաջ պատասխանատու յե ռայոնական հողրաժինը, պատասխանատու յե Հողժողկոմատը, Ադրտրակտորոկենտրոնը և մեր մյուս գյուղատնտեսական կազմակերպությունները: Մինչև այժմ հաշվեառման գործի չհարթելը օբյեկտիվ ողնություն է խորհրդային իշխանության և կոլխոզային շինարարության թշնամիների, հակահեղափոխական, ավազակային գործնեության:

Հաշվեվողության բացակայությունը, վորի համար ամենից առաջ պատասխանատու յեն ռայոնական հողրաժինը, Ադրտրակտորոկենտրոնը և մյուս գյուղատնտեսական կազմակերպությունները, մեզ զրկում է գյուղական տնտեսության, մանավանդ գյուղատնտեսական մթերումների ապարիզում ուղիղ պլանավորելու, ուղիղ կարգավորելու այս կամ այն միջոցառումները, ուղիղ կիրառելու հնարավորություններից:

Մյուս կողմից էլ այդ հաշվեվողության բացակայությունը — կուլակին, դատարկապորտին, խարեբային, գո-

պին և խորհրդային իշխանության ու կոլխոզային շինարարության մյուս թշնամիներին հնարավորություն է տալիս դուրացնելու լավագույն հարվածային – կոլխոզնիկների աշխատանքը, խանգարելու կոլխոզային հիմնական մասսայի կողմից լավագույն աշխատանք ցույց տալու հետաքրքրվածությունը, ղրկում է կոլխոզներում աշխատանքի սոցիալիստական ձևերը կազմակերպելու հնարավորությունից՝ այն է, հարվածայնության, սոցմրցության և այլն, վորովհետև չի կարելի աշխատել կուրորեն, ճշտիվ չիմանալով կատարված աշխատանքի մասին, աշխատել բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, բարելավել աշխատանքի վորակը և այլն:

Չի կարելի առանց հաշվեառման, առանց հաշվետվության տնտեսություն ղեկավարել: Ի՞նչ է առաջվում մեզնում, հաշվեառման և հաշվետվության բացակայության հետևանքով, թեկուզ հացահատիկային ցանքսերի տարածության վերաբերմամբ: Ասյոր մենք 4–5 տեսակ թվեր ունենք այն է — պլանային տարածություն — մեկ, ցանքսի հանրագումարի մասին ռայհողբաժնի տված տեղեկությունները — յերկու, դործիքային չափումից առացած արդյունք—յերեք, հացահատիկ հանձնելու վերաբերմամբ պարտավորությունների հանձնման հանրագումարը, — չորս յեվ վերեվ բերված չորս տվյալներն իրերի փաստական դրությանը չեն համապատասխանելու մասին առանձին կոլխոզների ու մեքենատեսությունների կողմից, առանձին ռայոններում և դյուղերում տրված այսորվա մասսայական դիմումները — հինգ:

Ահա, ընկերներ, իրերի այդպիսի դրությամբ զարմանալի չե, վոր մենք տեղերում մթերման կողմից վոչ միայն ծուռումներ ունենք, այլ և դողության, կոլխոզային բարեքի չհայլման, հափշտակման դեպքեր, վորովհետև չկա հաշվեառում, չկա հաշվետվություն. բավականաչափ պարզ պատկերացում չունենք կուսակցության և յերկրի կողմից մեզ հանձնված տնտեսության մասին:

Չի կարելի ընկերները, տասնյակ հազարավոր կոլխոզնիկների ու աշխատավոր մենատնտես դյուղացիների վիճակը ղեկավարել առանց ճշտիվ իմանալու ամբողջ տնտեսությունն իր բոլոր մանրամասնություններով: Այստեղից

բղխում և առաջին անհետաձգելի պարտադիր խնդիրը, վոր կանգնած է Հողժողկոմատի ու նրա սիստեմի գլխավորապես ռայոնական հողբաժինների առաջ, դա ամենամոտ ժամանակներում մեր աշխատանքի բոլոր ասպարեզներում ճիշտ հաշվեառում և ճիշտ հաշվետվություն դնելու դործն է:

Կատարումն ստուգելու հարցը: Կատարման ստուգումը մեր աշխատանքի հաջողության կարևորագույն պայմանն է: Կարելի յե հիանալի պլան, դեղեցիկ դիրեկտիվներ, շատ լավ հրահանգներ կազմել և ունենալ: Բայց յերբեք չի ստուգվում, թե դրանք ինչպես են մտցվում կյանքի մեջ, — սկսած Հողժողկոմատի ապարատից և վերջացրած առանձին կոլխոզներով, կոլխոզնիկներով ու մենատնտեսություններով, — ապա այդպիսի դեղեցիկ հրահանգները դրոշանոց արժեք են ներկայացնում: Իսկ ընկերներ, այդպիսի ստուգում կա՞ Հողժողկոմատի և առհասարակ Ադրբեջանի հողորդանների սիստեմում: Դժբախտաբար չկա: Այդ ուղղությամբ կարելի յե տասնյակ օրինակներ ու փաստեր բերել: Բայց յես կբավականանամ միայն մի փաստով: Մեր ռայոններից մեկում, Սալյանի ռայոնում, Սեյդանլվի գյուղխորհրդի բամբակային արտերը նայելիս, մենք ընկ. Ադրբայի հետ դտանք, վոր բամբակը վոչ մի ան դամ չի մշակվել և ամբողջապես ծածկվել է մոլախոտերով: Գալով Սալյան, ամենից առաջ յես այնտեղ ընկ. Ռասուլ Զադեյից խնդրեցի տեղեկություններ մշակման ընթացքի մասին գյուղխորհուրդների և կոլխոզների վերաբերմամբ առանձին-առանձին: Ցեվ ինչ եք կարծում, տեղեկությունների համաձայն, այդ գյուղխորհուրդում մշակումը լիովին յերեք անգամ կատարվել է և մինչև անգամ 4-րդի 50 տոկոսն ել է կատարվել: Մեր առաջարկությամբ անմիջապես այնտեղ հանձնաժողով է ուղարկվում, վորն ստուգելով հաստատում է, թե ռայկոմի տված տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում յեվ վոր բամբակն այնտեղ մշակված չե:

Մի՞կն է արդյոք այս դեպքը: Արդյոք ռայոններից ստացած մեր տեղեկությունները բոլորը համապատասխանում են իրերի իսկական դրությունը: Արդյոք կա՞րող եք դուք ձեզ վրա պատասխանատվություն վերցնել, ասել, վոր

դուք՝ հողբաժինների վարիչներդ ստուգում եք այն բոլոր տեղեկությունները, որոնք ստորագրում և ուղարկում եք այս տեղ, կամ թե դուք կոլխոզներից ստանալով կնիք եք դնում և ուղարկում այստեղ: Սխալից շատ և մեծ մասամբ ձեզ-նից ստացված տեղեկությունները վոչ այլ ինչ են, եթե վոչ կնիք դրած դոկումենտ,—վոչ վոքի կողմից չստուգված, կոլխոզների տված տեղեկությունների դեմքը:

Այդ պատճառով եթե մենք ուզում ենք խոսասիել մեր աշխատանքում տեղած թերություններից, մանավանդ բամանակը մշակելու և խնամելու գործում տեղած թերություններից, ապա անհապաղ պետք է ժողկոմատի ամբողջ սիստեմում, սկսած նրա կենտրոնական ապարատից, մինչեվ ստանձին կոլխոզները, կարգավորել և պատշաճ բարձրության վրա դնել կատարման ստուգման գործը: Առանց դրան մենք չենք կարող յերաշխավորված լինել այն անթիվ անսպասելություններից, վոր կարող են մեզ շատ վնաս բերել:

Պետք է գործն այնպես դնել, վոր նախընթաց որվա իրականացրած կարգադրության վստահական կատարումը ստուգված լինի:

ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈԼԽՈՉՆԵՐԻ ԿԱՉՍԱԿԵՐՊՉԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՆԴՍԱՆ ՀԱՄԱՐ, ՉՈՐԱՆԱԼ ՄԵՆԱՏՆԵՏԵՄԻՆ

Գյուղատնտեսության սոսյալիզմում կես տարվա տարած մեր վատ աշխատանքը, սխալներն ու թերությունները, բացի բոլոր տասնյակներից և մի չարք տուրիզ պատճառներից, դեմ են առնում մեր կոլխոզների կազմակերպչական դրությանը: Ինչպես ցույց են տալիս մի չարք վստահ, վստահորեն մի չարք ռայոններում վոչ թե կոլխոզներ կան, այլ հողագործական ընկերություններ, թեև ձեվականորեն նրանք համարվում են արտելներ: Մինչեվ այսոր մեր կոլխոզների մեծ մասը ձեվականորեն անասունները համայնացնելով, վստահորեն այդ չեն համայնացրել: Ձեվականորեն գյուղատնտեսական ինվենտարը համայնացնելով, վստահորեն այդպիսին չեն համայնացրել: Մեր կոլխոզների մեծ մասը համայնացրված կոլխոզային դամեր չունեն, համայնացրած կոլխոզային սրահներ, համայնացրած կոլխոզային ամբարներ չունեն, հետևաբար աշխատող անասունը, գյուղատնտեսական ինվենտարն ու սերմեղենը դանվում են առանձին կոլխոզնիկների տներում: Այստեղից էլ մեր կոլխոզների աշխատանքի ամբողջ վորակը, այստեղից էլ ամբողջ կուլտուրային նենդություններն աշխատող անասուններին, գյուղատնտեսական ինվենտարի և սերմեղենի նկատմամբ:

Մենք պետք է ինչ կերպ էլ լինի, մնացած կես տարում այնպես անենք, վոր համայնական դամեր, համայնական սրբահներ ստեղծենք կոլխոզային ինվենտարի համար, համայնական կոլխոզային ամբարներ ստեղծենք սերմեղենը և ապահովագրական ֆոնդերը պահելու համար, վորպեսի նպատակով կարելի յե տգտագործել տեղերում յեղած կուլակների շենքերը:

Ահա այն բոլոր հանգուցյային մոմենտները, վորոնց վրա մենք անհապաղ պետք է հրավիրենք Հողժողկոմատի բոլոր աշխատողների, նրա սիստեմի, գլխավորապես հողբաժինների ուշադրությունը: Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հիվանդոտ տրամադրությունների վրա, վոր կա ռայոնական և հողբաժինների աշխատողների շարքերում և վորն արտահայտվում է կոլխոզներում աշխատանքի ամբողջ պատասխանատվությունը ՄՏԿ-ների վրա դնելու, կամ այն հիվանդոտ տարաձայնությունները, վոր կան հողբաժինների և ՄՏԿ-ների միջև: Դա ուրիշ ձևով վերցրած հիշեցնում է ռայկոմների առանձին աշխատողների կողմից դեպի ՄՏԿ-ների քաղբաժինների վերաբերմամբ ցույց տված տրամադրությունը, վորի մասին քանիցս դրել վել է մեր կենտրոնական թերթերում և վորին մենք հանդիպեցինք նույնպես և Ադրբեջանում:

Ընկերներ, վոր ՄՏԿ-ները, մանավանդ ներկա ետապում մեր կոլխոզների դեկավարության մեջ կազմակերպչատնտեսական և քաղաքական կենտրոններ են հանդիսանում, այդ մասին պետք չկա խոսելու, պետք է ամեն կերպ ոգնել մեր ՄՏԿ-ներին, մեր քաղբաժիններին, այդ դերը, այդ ֆունկցիաները կատարելու: Սակայն ՄՏԿ-ների աշխատանքը, մեր քաղբաժինների աշխատանքը, վոչ մի չա-

վով ձեզ չի ապահովում կոլխոզներում աշխատանքը կանոնավոր դնելու, հաշվառումը և հաշվետվությունը կանոնավոր դնելու, կոլխոզների վարկավորումը դնելու, կոլխոզների կողմից բոլոր պլանային առաջադրությունները ժամանակին կատարելու, կոլխոզների կողմից բոլոր պարտավորություններն ու պետության առաջ կատարելու պատասխանատվությունից — դրանում վոչ մի կասկած լինել չի կարող: Դրա հետ միասին առանձին պատասխանատվություն եք կրում դուք, վաղվա կոլխոզնիկ, այսօրվա աշխատավոր մենատրն ու տեսչական կազմակերպման համար: Չի կարելի չհեղափակել, վոր այսօրվա մենատրեսը, ինքն իրեն վաղը կոլխոզնիկ դառնա, չեթե սիստեմատիկորեն, ամենօրյա կազմակերպչա-քաղաքական աշխատանք չտարվի նրանց հետ: Այդ կողմից գլխավոր հիմնական պատասխանատվությունը ձեզ վրա է ընկնում:

Այսպիսով կուսակցության ռայկոմի քարտուղարության, ՄՏԿ-ների քաղաքականների ղեկավարության, ՄՏԿ-ների հետ միասին պետք է ամբողջ ուժերը դործադրել, վոր ուշադրությունը դարձնել այն բանի վրա, վոր չտարակերպով վերացվեն մեր կոլխոզում չեղած բոլոր թերությունները, մեր կոլխոզներում որինակելի աշխատանք ստեղծվի այս տարվա մենատրեսների կազմակերպման նախապատրաստման ղեկավարության վրա, այնպես, վոր նրանք խրատման կապես վաղը կարողանային գիտակից կոլխոզնիկներ դառնալ: Դուք իրավունք չունեք պատասխանատվությունից խուսափելու, այլ ընդհակառակը, ամենից առաջ պատասխանատու եք այն բոլոր թերությունների ու պակասությունների համար, վոր մենք ունենք առաջին կիսամյակի մեր աշխատանքում, դյուղատնտեսական մի[illegible]ցառումները կենսագործելու ասպարիզում:

ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԸ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԿՆԳՈՒՂԱԿԵՐՆԵՐԻ ԴԵՄ

Մի քանի խոսք բամբակաբաղի և բամբակի մրերման կամպանիայի մասին:

Ինչպես վերև մատնանշեցինք, մենք այս տարվա բամբակային կամպանիայում անթիվ սխարներ ենք գործել, վորոնց հետևանքն անպայման յերևում է այսորվա բամբակի դրության մեջ: Սակայն չնայած այս բոլորին, այս տարվա մեր բամբակը, վոր ունենք Ադրբեջանում, մեր բոլոր ընկերների ու մասնագետների և գլխավորապես ռայոնական ղեկավարների ու հենց իրենց, կոլխոզնիկների տված դնահատականով, վոչ միայն չի կարելի համեմատել անցյալ տարվա տրտալված բամբակի, այլ և 1931 թվի լավ դույն բամբակի հետ:

Այսոր Ադրբեջանում բամբակն այնպիսի տեսք ունի, վոր մենք բոլոր հնարավորություններն ունենք, վոչ միայն 134·000 տոննի պլանը կատարելու, այլև գերակատարելու, այդ թվում առանձնապես յեղիպտական բամբակի պլանը, այն է՝ 13,500 տոնն: Յեղիպտական բամբակի դրությունը շատ ավելի լավ է, քան ամերիկականը: Յեվ չեթե մեր հիշած թերությունները չլինեին և չեթե ճշտով կատարված լինեին ընկ· ընկ· Սոսլինի և Մոլոտովի տված հրահանգները, ապա մենք այս տարի Ադրբեջանում բամբակի բերքատվության անսպասելի ցուցանիշներ կստանայինք: Բամբակի դրությունն այսոր այնպես է, վոր 134·000 տոննի պլանը կատարելն ամբողջապես և լիովին կախված է մեզանից, նրանից, թե մնացած ժամանակամիջոցում ինչպես կդեկավարենք մի շարքան դործ, գլխավորապես և առանձնապես կնգուղակերների դեմ պայքար մղելու դործը: Ուստի մեզ հարկավոր է, ինչքան կարելի չի շուտ, ամենակարճ ժամանակամիջոցում ամփոփել մշակման կամպանիան, տեղի ունեցող թերությունները վերհատուցել ավելի լավ վորակի աշխատանքով:

Յերկրորդ — հենց այժմ ձեռքով մասսայական պայքար կազմակերպենք կնգուղակերների դեմ (վորոշվեցավ մի քանի տեղերում, արդեն սկսել են կնգուղակերների 3-րդ դեներացիան): Այն հրահանգում, վոր մոտերքս մենք տվել ենք կնգուղակերների դեմ պայքար մղելու վերաբերյալ, մատնանշել ենք, վոր թույլ չունենք, ուստի և հույս ունենալ մոտիկ ժամանակներս թույլ տալու վրա, չի կարելի: Պետք է կոլխոզներում և մանավանդ մենատրեսություններում կնգուղակերների դեմ մղվող ամբողջ պայքարը բացառապես ձեռքով տանել, պետք է աշխատել, վոր

մեր բոլոր կոլխոզային յերկտասարդության դպրոցները, ռայոնների մեր բոլոր տեխնիկումները, բոլոր պիոներական և կոմյերիտմոլոդեժնական կազմակերպությունները լիովին, ամբողջ հարյուր տոկոսով դուրս գային ձեռքով պայքարելու կնգուղակերների դեմ, կնգուղակերներ հավաքելու։ Գոնե յեվրոչ տեղերում պետք լինի ժամանակավոր կերպով այս կամ այն աշխատանքը դադարեցնել։ Պետք է, որ այս որվանից մեր Հողժողկոմատը, Տրակտորակենտրոնը և վնասատուների դեմ պայքարող ընկերությունն իրենց բոլոր ուժերը, բոլոր միջոցները բացատապես դեպի ռայոններն ուղղեն կնգուղակերների դեմ պայքար մղելու համար։

Մեր ռայկոմները, ՄՏԿ-ի քաղբաժինները, իրենց ամբողջ կազմով պետք է դուրս գան պայքար մղելու կնգուղակերների դեմ։

Մեր մամուլի կողմից բամբակային կամպանիան հաջող կերպով կատարելուն ոգնելու ուրիշ ձեվ չեմ յերևակայում, քան այն, որ լավագույն կերպով կազմակերպի ամբողջ կոլխոզային մասսան, բոլոր մենատնտես աշխատավոր գյուղացիներին, ամբողջ կուսակցական և խորհրդային հասարակայնությունը կնգուղակերների դեմ պայքար մղելու։ Այդ բանը կարելի յե վոչ այնքան հրամաններով, վոչ այնքան վարչական միջոցառումներով, վորքան մամուլի և մեր ռայոնական կուսկոմիտեների ու քաղբաժինների կողմից տարված լայն, ծավալուն, բացատրական, մասսայական աշխատանքով։ Մի խոսքով կոլխոզնիկներին ու աշխատավոր մենատնտեսներին պարզաբանելով, բացատրելով կնգուղակերների տված վնասը կարելի կլինի այնպես անել, որ բոլորը հարյուր տոկոսով դուրս գան պայքար մղելու կնգուղակերների դեմ։

Մասսայական բացատրական աշխատանքը ծավալելու հետ միասին անհրաժեշտ է հատկապես շտապ կերպով մի շարք միջոցառումներ մշակել, վորոնք նյութապես շահագրգռեին պայքար մղելու կնգուղակերների դեմ, մի որում հավաքելու նորմա սահմանել, դա հավասարեցնելով կոլխոզային աշխատանքի կարևորագույն ճյուղերում յեղած աշխատորին։

Պետք է նկատի ունենալ, վոր կնգուղակերներն ամենավտանգավոր, ամենավնասակար միջատներն են հանդիսանում բամբակի 10-ից սկսած մինչև սեպտեմբերի 10-15-ը։ Այդ պատճառով էլ պայքարը կնգուղակերների դեմ չի կարելի 2-3 որվա համպանիա դարձնել։ Առաջիկա յերկու տասնորյակները պետք է բացատապես ոգտագործվեն կնգուղակերների դեմ պայքարելու, նրա թրթուրները հավաքելու ուղղությամբ։

Ընկերներ, հասարակ հաշիվը ցույց է տալիս, թե ինչ քանակությամբ բամբակ մենք կարող ենք կորցնել կնգուղակերների ճիրաններից։ Ամեն մի կնգուղակեր մինչև թվով 10-12 կնգուղ է վոչնչացնում և այն էլ չոկում է ամենահյութեղ ամենամեծ կնգուղները։ Յեթե ամեն մեկը, վոր կալում է կնգուղակերների դեմ, որեկան 300 թրթուր հավաքի, ապա հետևաբար հենց դրանով նա 3000-ից մինչև 3600 կնգուղ կազատի։ Յուրաքանչյուր կնգուղ մինչև թվով 3 դրամ բամբակ է տալիս։ Հետևաբար մի մարդը կարող է մի որում 9-11 հազար դրամ կամ 9-11 կիլոգրամ բամբակ ազատել։ Յեթե մենք կարողանանք բամբակի դաշտերը կնգուղակերների դեմ պայքար մղելու համար հիսուն հազար հոգի դուրս բերենք և բացատրական աշխատանքը, կազմակերպչական աշխատանքը կանոնավոր դնելու հետևանքով, ապա դա որական կտա կնգուղակերներից ազատած 450-550 տոննն բամբակ։ Իսկ յեթե դա բազմապատկենք 10 որվա բարեխիղճ, տքնիլ պայքարով, վոր մղված կլինի կնգուղակերների դեմ, դա արդեն կտա 4500-5500 տոննն կնգուղակերներից ազատած բամբակ, վոր մեր պլանի 4—5 տոկոսն է կազմում։

Ահա, ընկերներ, կնգուղակերների դեմ պայքար մղելու այն տնտեսական և քաղաքական նշանակությունը, վորի համար պետք է մոբիլիզացիայի յենթարկվի ռայոնի, գյուղի և կոլխոզի ամբողջ հասարակայնությունը։

Վոչ մի կասկած չկա, վոր այդ հարցում մենք կուբակային, հակահեղափոխական տարրերի կատաղի դիմադրությանը կհանդիպինք։ Այդ պատճառով կնգուղակերների դեմ մղվող պայքարը պետք է սկզբունքային, դասակարգային բարձրության վրա դնել և բոլոր կոլխոզնիկներին ու աշխատավոր մենատնտեսների հեղափոխական զգաստությունը մոբիլիզացիայի յենթարկել։

ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐԲԻՑ ՎՈՉ ՄԻ ԳՐԱՄ ԿՈՐՈՒՍՏ

Դրա հետ մխամին բամբակաքաղին պետք է պատրաստվել, որ վոչ մի գրամ կորուստ չունենանք, վոչ բամբակաքաղի ժամանակ և վոչ էլ բամբակը մթերման կետերին ու գործարաններին հանձնելու ժամանակ: Դրա համար Հողժողկոմատը, Աղբրաքարտոկենտրոնը և առանձնապես Ազդագոտի խլտպոկը պետք է հենց այս տարվանից այդ գործն այնպես կազմակերպեն և տարբերություն անցյալ տարիների, որ վոչ մի գրամ կորուստ չտանք: Բերքահավաքի և մթերման կամպանիայի խնդիրները վոչ միայն Հողժողկոմատի, Տրակտորոկենտրոնի և Ջազտոխլոպոկի գործն է, այլ և Աղրբեջանի ամբողջ կուսակցական կազմակերպությունների և բոլոր խորհրդային որգանների գործը:

Ամենից առաջ Հողժողկոմատի, Տրակտորոկենտրոնի յեվ Ազդագոտխլոպոկի հետ բերքահավաքի մթերման կամպանիայի լավագույն դրվածքի համար պատասխանատու յեն յեվ Ազերիթիֆկակը, և Ազտորգը, և Զոգոտպերնոն, այսինքն մա տակարարող կազմակերպությունները: Նրանցից, թե վորքան ճիշտ, վորքան կանոնավոր, վորքան լավ կդրվի մատակարարման գործը, կախված կլինի բերքահավաքի յեվ մթերման կամպանիայի հաջողությունը, դրանից կախված կլինի 134,000 տոնն բամբակի պլանը կատարելու հաջողությունը: Ցեվ պատահական չե այդ պատճառով, վոր ձեր խորհրդակցության մասնակցում են այդ կազմակերպությունների ղեկավարները:

Բերքահավաքի և մթերողական կամպանիայի համար պատասխանատու յեն թե Լուսժողկոմատը, թե Աղերնեչրը ու ռադիո հաղորդման Ադրկոմիտեն և թե Ադրկինոն: Բերքահավաքի և մթերման ժամանակ կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների կուլտուրական սպասարկման դրվածքից և կախված լինելու պլանի իրականացման հաջողությունը:

Հետևաբար թող նշած կազմակերպությունների ղեկավարները դրա համապատասխան վերակառուցեն իրենց բոլոր աշխատանքները:

Բերքահավաքի և մթերման կամպանիայի ժամանակ վրճռական նշանակություն կունենա բերքահավաքի և մթերման

ների ղեկավարության գործառնականությունը: Իսկ դա դեմ է առնում մեր կապի աշխատանքներին, մեր ճանապարհների դրության, մեր ավտոտրանսպորտի դրության: Թող մեր տնտեսության այդ ճյուղերը ղեկավարող ընկերներն իմանան, վոր նրանք լինելին պատասխանատու յեն բերքահավաքի, բամբակի մթերման և փոխադրման կամպանիայի գործի գործառնական դրվածքի համար:

Ֆինանսավորման հարցը վճռական դեր պիտի խաղա: Թող մեր ֆինանսիստ ընկերները գործն այնպես դնեն, վոր բամբակ հանձնողների հաշիվները մեկնաբանելու գործում վոչ մի ընդմիջում չլինի: Պետք է մթերման կետերում, բամբակային գործարաններում ամբողջ աշխատանքն այնպես դնել, վոր բամբակ հանձնողն ամենաշատը 2–3 ժամից ավելի չսպասի դնման կետերում և բամբակի գործարան ներում:

Դրանից կախված կլինի կոլտնտեսականների և մենատնտես աշխատավորների համերաշխ չհապաղդրված աշխատանքը, բամբակը քաղելու և մթերելու առաջարկում:

Ընկերներ, յեթե մենք կարողանանք բամբակաքաղի նախապատրաստման գործը և նրա կենսագործումն ապահովել և պլիսավորապես մթերումներ նախապատրաստել, ինչպես հարկավոր է, ապա համարձակ կերպով կարելի կլինի ասել, վոր մենք կկարողանանք առաջադիմություն նվաճել մեր Միության բոլոր բամբակային ռայոնների չարքում՝ այս տարի բամբակային պլանը թե ժամանակին և թե քանակական ու վորակական ցուցանիշներով կատարելու գործում:

Ուստի ամենամոտիկ 10–որյակում մենք պետք է վերևից մինչև ներքև վերանայենք մեր հողային որգանների բոլոր ողակները, նրանց աշխատանքը վերակառուցենք այդ առանձնակյունով և այնպես, վոր մենք կարողանանք մրցության վրա հնչել մեր Միության ցանկացած առաջավոր բամբակային հանրապետության:

Այսպես ուրեմն, ընկերներ, պայքար հնդուդակների դեմ, պայքար բամբակի բերքահավաքի ու մթերման տրնտեսկելի նախապատրաստման համար: Ավելի քիչ խոսք, ավելի շատ գործ: Համարձակ և համերաշխ չարքերով—դեպի առաջ նուվթյան նվաճում, 1933 թվի բամբակային պլանը կատարելու ապայրիդում:

ՄՐՑՈՒՆԱՐԵՆ, ՍՏԱԼԻՆՅԱՆ ՁԵՎՈՎ ՀՂԹԱՆԱԿԵՆՔ ԲՈՒՐՔԱԿԱՐԱՆՑԻ ՅԵՎ ՄԹԵՐՄԱՆ ՓՐՈՆՏԻՄ

(Ադրկոմկուսի (բ) կենտկոմում 1933 թ. սեպտեմբերի 16-ին արած զեկուցումը)

Ընկերներ, դուք գիտեք, որ յերկրորդ հնգամյակի առաջին տարում սոցիալիզմի կառուցման վճռական խնդիրներն իրագործելիս՝ մեզ վրա մի լուրջ, միևնույն ժամանակ և պատվավոր պատասխանատվություն է ընկնում մեր սոցիալիստական շինարարության կարևորագույն տեղամասերից մեկում, այն է՝ նավթի ու բամբակի տեղամասում։

Մենք ձեզ հետ միասին պարտավոր ենք ապահովել, որ մեր գործարանները, մեր ֆաբրիկները, մեր տրանսպորտն աշխատեն առանց ընդմիջումների։ Մենք ձեզ հետ միասին պարտավոր ենք մեր տրակտորների ու ավտոմոբիլների անընդհատ աշխատանքն ապահովել, վերջապես պարտավոր ենք հում նյութերով մեր տեքստիլ արդյունաբերությունն ապահովել։

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՈՇՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ

Մեզնից յուրաքանչյուրը մեր աշխատանքի գնահատականին մոտենալիս՝ պետք է յելնի այդ խնդիրներից, յեվ վոչ միայն տեղական ռայոնական կամ հանրապետական նը կատառումներով։ Յուրաքանչյուրը պետք է իր կատարած աշխատանքի գնահատականը տա սոցիալիզմի կառուցման խնդիրների բարձունքից։

Միմիայն այդ պայմաններում մենք կկարողանանք ուղիղ գնահատել մեր կատարած աշխատանքը, զգաստությամբ վերլուծել մեր սխալները, բոլշևիկորեն քննադատել ու այդ սխալները վերացնելու ուղիղ, գործնական ուղիները նշել։ Յուրաքանչյուր այլ տեսակի մոտեցում մեզ կարող է մոլորեցնել տեղայնության, գործամոլության մեջ, վորոնց հետևից մեզ դժվար կլինի տեսնել, թե ինչպիսի հոյակապ, մեծ քայլերով և հաստատուն ու վստահ առաջ է շարժվում խորհուրդների մեր ամբողջ յերկիրը, վոր իրավամբ համաշխարհային պրոլետարիատի հայրենիք, համաշխարհային կոմունիզմի հենակետ և հանդիսանում։

Այդ խնդիրներից են յելնում պրոլետարիատն ու նրա կուսակցությունը՝ ներկայացնելով մեզ բոլշևիկյան բարձր պահանջներ՝ վորոնք պարտավորեցնում են մեզ կռվել վոչ միայն քանակական եֆֆեկտի, այլ և բարձր վորակական ցուցանիշների համար։

Այստեղից էլ՝ մեր աշխատանքը պետք է ավելի ու ավելի բարձր աստիճանի վրա դրվի։

Մեր կուսակցության կենտկոմի և Կվշ-ի հունվարյան պլենումը յերկրորդ հնգամյակի ժողովրդական տնտեսության սոցիալիստական զարգացման ուղիները նշելով՝ ամբողջ վճռականությամբ ընդգծել է.

«Գլխավոր ուշադրությունը պետք է կենտրոնացնել վոչ թե արտադրանքի բանակական աճման վրա, այլ արդյունաբերության արտադրանքի վորակը բարելավելուն և աշխատանքի արտադրողականության աճման վրա, վոչ թե ցանքսային տարածության ընդլայնման, այլ հողագործության բերքատվության աճման և գյուղական տնտեսության մեջ աշխատանքի վորակի բարելավման վրա» (ընդգծումներն մեն են. Դ. Բ.)։

Ահա, ընկերներ, մեր աշխատանքի դրույթը վոչ միայն տնտեսական ֆրոնտում, այլ և բոլոր բնագավառներում, —լուսավորության, առողջապահության և այլ բնագավառներում։

Վորակական ցուցանիշներին ուժ տալու այդ գրույթի ամբողջական և լիովին վերաբերում է և կուսմասսայական ու կազմակերպչական աշխատանքին։

Ինչպես ընկ. Ռուբենի հայտարարած օրակարգից է յերևում, ներկա պլենումի խնդիրն է հանդիսանում ստուգել մեր ութ ամսվա աշխատանքը, թե ինչպես են կատարված կուսակցության և կառավարության առաջադրությունները գյուղական տնտեսության ու արդյունաբերության բնագավառներում:

Ներկա պլենումում մենք ձեզ հետ միասին կքննենք աշնան ցանքսային կամպանիայի հարցերը, 1934 թվի բամբակային կամպանիայի նախապատրաստական միջոցառումները ու մեր կոլխոզների հետագա կազմակերպչա-տնտեսական ու քաղաքական ամրապնդման հարցերը:

Այդ ստուգման հիման վրա՝ մենք ձեզ հետ միասին պետք է ընթացիկ տարվա մնացած ժամանակի համար կոնկրետ միջոցառումներ մշակենք, այնպես որ ոչ միայն ապահովենք կուսակցության կողմից մեր առաջ դրված բոլոր պահանջների կատարումը, այլ և գերակատարումը:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ՅԵՎ ԱՆՐՈՂՔ ՔՆՆԱԴԱՏԵԼ ՄԵՐ ՍԽԱԼՆԵՐԸ

Մեզ համար ամենից առաջ անհրաժեշտ է հաշվի առնել և անողոք քննադատության յենթարկել մեր՝ այս ութ ամսում կատարած սխալները: Ինչպես տեսնում եք, յես ել չեմ խոսում 1932 թվի սխալների մասին, որովհետև մենք այլևս չպիտի խոսենք 1932 թ. սխալների մասին: Ձեզ հետ միասին արդեն աշխատում ենք բավական ժամանակ, որ պետք ա՛ժամ արդեն խոսենք մեր կատարած սեփական սխալների մասին: 1932 թվին արդեն վազուց ենք անցել:

Մեր կատարած աշխատանքների նախնական հանրագումարը տալով, չթագցնելով մեր ունեցած աշխատանքների վորոշ հաջողությունները՝ մենք պետք է դրսեվորենք յեվ ընդգծենք ներկա պլենումում մեր աշխատանքի բոլոր թերությունները, պակասությունները ու դրանց բոլշևիկյան ինքնաքննադատության յենթարկենք: Այդ թերությունները քիչ չեն, անհաշիվ են դրանք. յեթե այդ թերությունները չլինեյին, ապա մենք ձեզ հետ միասին ավելի մեծ արդյունք ներ կունենայինք, քան ունենք:

Յեթե այդ թերությունները չլինեյին, ապա Ադրբեջանում ավելի բարձր տեմպեր կունենայինք, ինչպես մեր Խորհրդային Միության մի շարք առաջավոր մարզերում, ԱՍՏ Հանրապետության վորոշ ռայոններում, վորոնք առաջադրությունների կատարման համար մղվող բոլշևիկյան պայքարի որինակներ են ցույց տալիս:

Առաջավոր մարզերի ու ռայոնների աշխատանքն այնպես է դրված, վոր մի կամպանիա մյուսին է լծորդվում, մեկը խթանում է մյուսին, մեկն աջակցում է մյուսին, այսինքն՝ բոլոր կամպանիաներն օրգանապես կապված են մեկը մյուսին: Մի շարք առաջավոր մարզեր վոչ միայն հաջողությամբ ավարտել են հացամթերումները, այլ և արդեն վերջացրել են աշնան ցանքսային կամպանիան —Թաթարիան, Մոսկվայի մարզը, Իվանովոկի մարզը և մյուսները: Հետևաբար՝ այդ մարզերը կարողացել են իրենց աշխատանքում յերկրորդ հնգամյակի մեծ խնդիրների մակարդակի բարձրության վրա դնել, կարողացել են այնպես կազմակերպել իրենց ամբողջ աշխատանքը, վոր մի կամպանիան մյուսին, այլ ընդհակառակը, փոխադարձաբար իրար լրացնեն:

Առաջավոր մարզերի ու ռայոնների աշխատանքից մենք տեսնում ենք, թե բոլշևիկները ինչպես են կարողանում պայքարել կուսակցության գլխավոր գծի համար, համարձակ ու վճռահաբար աշխատելով կյանքի մեջ մարմնացնել յերկրորդ հնգամյակի այն հիմնական քաղաքական խնդիրը, վոր 17-րդ կուսկոնֆերանսն է դրել.

«Կոնֆերանսը դնում է, վոր յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն է հանդիսանում կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի վերջնական վերացումը, կատարյալ վոչնչացումն այն պատճառների, վոր դասակարգային տարբերությունն է, շահագործում են ծնում և հաղթահարումն կապիտալիզմի մնացորդների նկատմամբ և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերաճումն անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողների»:

Այդ մեծ խնդրանքն է դրաղված այժմ մեր յերկիրը, մեր Միության ամբողջ պրոլետարիատը, մեր ամբողջ կուսակցությունը: Այդ խնդրի իրացման համար ել առաջավոր մարդերի ու յերկրների միջև սոցիալիստական մրցություն է կատարվում: Իրենց պայքարում՝ դրանից են յելնում մեր գործարանների ու ֆաբրիկների հարվածայինները, մեր սոցիալիստական դաշտերի հարվածայինները: Դրան են ձգտում մեր Միության աղդային հանրապետությունների աշխատավորները, հաղորդությամբ հաղթահարելով ցարական ռեժիմից ժառանգած իրենց տնտեսական և կուլտուրական հետամնացությունը: Խորհրդային Միության առաջավոր մարդերի հետևից գնում են մեր Միության կազմում դրանվող առաջավոր աղդային հանրապետությունները, վճռականորեն կենսագործելով կուսակցության վորոշումը:

«Յերկրորդ հնգամյակում աղգային հանրապետությունների ու մարդերում սոցիալիստական տնտեսության զարգացումը պայմանավորվում է աղգությունների՝ ցարական, գաղութային–կապիտալիստական ռեժիմից ժառանգած տնտեսական ու կուլտուրական հետամնացության վերացումը» (17–րդ կուսկոնֆերանսի վորոշումից):

Այդ տեսակետով մոտենալով մեր աշխատանքի գնահատմանը, մենք, ձեզ հետ միասին, պետք է բոլշևիկորեն ասենք. — Վորքան քիչ բան ենք արել այս ժամանակի միջոցում, վորքան վատ ենք աշխատում յերկրորդ հնգամյակի առաջին տարում. դեռ ինչպիսի հսկայական խնդիրներ ու լարված պայքար կա կանդնած մեր առաջ՝ մեր Միության առաջավոր ռայոնների չարքերը դուրս գալու համար:

Այստեղից՝ վոչ թե հանգստացում ու ինքնաբավականության մեր աշխատանքի մեկ կամ մյուս միջոցառումների կենսագործման առանձին հաջողությունների համար, այլ ինտեմատիկ, ամենորյա սառուցում կատարածի, ուսումնասիրության բոլոր մանրունքների, ուշադրության կենտրոնացում բոլոր, նույնիսկ չնչին թերությունների վրա, այդ թերությունների արագ, գործառնական վերացում՝ «աշխատանքի ընթացքում»: Ահա թե ձեզ հետ միասին՝ մենք ինչով պետք է զեկավարվենք մեր ամենօրյա պրակտիկայում:

Բոլշևիկյան արթնության մոբիլիզացիա մեր աշխատանքի բոլոր տեղամասերում, անողոք պայքար մեռնող կապիտալիստական տարրերի մնացորդների և մեր հանրապետության աշխատավորների առանձին չերտերի խավերի դեմ, նրանց ունեցած աղդեցության դեմ, պրոլետարական դիկտատուրայի հենարանի՝ մեր կոլխոզների, մեր գյուղխորհուրդների որեցոր ամրապնդումը գյուղում, — ահա մեր առաջ, մեր ռայկոմների, մեր քաղաքժինների ռայոնային ու կոլխոզային կուսակազմակերպությունների առաջ դրված խնդիրները: Այս խնդիրները բղխում են 17–րդ կուսկոնֆերանսի վորոշումից, վորտեղ ասվում է.

«Բանվոր դասակարգը սոցիալիզմի նոր հաջողությունները կապահովի միայն պայքար մղելով կապիտալիզմի մնացորդների դեմ, անողոք հակահարված տալով մեռնող կապիտալիստական տարրերի դիմադրությանը, աշխատավորների չարքերում հաղթահարելով բուրժուական, մանր–բուրժուական նախապաշարումներն ու համառ պայքար մղելով նրանց սոցիալիստական վերադաստիարակության համար»:

17–րդ կուսկոնֆերանսի այդ նախադրուչագումներն ել ավելի խոր նշանակություն են ստանում Ադրբեջանի պայմաններում:

Քիչ որինակներ ու փաստեր չի կարելի բերել, թե ինչպես կուսակցության և կառավարության ուղիղ վորոշումները կենսագործելիս՝ տեղերում այդ միջոցառումներն աղավաղում են ու աղճատում:

Հաչտարխան–Բազարի, Կասում–Իմամլիլովի, Աղջաբեդու և մյուս ռայոններում տեղի ունեցող աղավաղումներն ուրիչ կերպ չպետք է վորակել, յեթե վոչ, անտեսել կուսակցության ուղղակի ցուցմունքների և որլեկտիվ աջակցության սոցիալիզմի թշնամիներին: Մենք պետք է ձեզ հետ միասին այդ աղավաղումներն ամենասուր բոլշևիկյան ինքնաքննադատության յենթարկենք և գործնական ուղիներ նշենք՝ այդ թերությունները մեր պրակտիկայից արմատախիլ անելու համար:

Վոչ թե առանձին հաջողություններից հանդստանալ ու հանդստացնել Ադրբեջանի բանվորական և կոլխոզային մասսաներին, այլ անդասակարգ հասարակություն կառուցելու մեծ խնդիրների վրա պետք է դասախարակենք նրանց, չբավանալով, վոր մեզ վրա պարտականություն է ընկած.

«Կոնֆերանսն անհողդողդ համոզված է, վոր բանվոր դասակարգն ու կոլխոզային մասսաները հանձինս կուսակցական, կոմյերիտական, պրոֆեսիոնալ ու խոր հրդային կազմակերպությունների՝ յերկրորդ հնգամյակի իրականացման համար մղվող հաղթական պայքարում բոլշևիկյան կազմակերպիչներ ու ղեկավարներ կդառնան: (17-րդ կուսկոնֆերանսի վորոշումից):

Այստեղից, ընկերներ, մենք ձեզ հետ միասին վոչ թե միայն պատասխանատու յենք սլանը, կամ կամպանիան կատարելու համար: Այս ու այն սլանը կատարելու համար կամ այս ու այն տնտեսական-քաղաքական կամպանիան տանելու համար՝ մենք պետք է դասախարակենք կոլխոզային մասսաները և նրանցից անդասակարգ հասարակության ակտիվ ու դիտակից կառուցողներ ստեղծենք: Հաղթահարենք նրանց եկոնոմիկայում, նրանց կենցաղում, նրանց դիտակցության մեջ մանր-սեփականատիրական մնացորդները: Մենք պարտավոր ենք նրանց սովորեցնել՝ հասարակության չահերն անձնական չահերից բարձր դասելու: — Այդ հեչա խնդիր չէ, բայց իրագործելի է վոչ թե վարչարարությամբ այլ դաստիարակությամբ: Իսկ վորպեսզի դաստիարակենք; մենք ինքներս պետք է յուրացնենք այդ խնդիրները. պետք է ճգրիտ, բացորոշ կերպով հասկանանք մեր տնտեսական-քաղաքական կամպանիաների խմաստն ու նշանակությունը: Մինչդեռ կան այնպիսի ադմինիստրատորներ, վորոնք չեն ըմբռնում սլանի կատարման համար մեր մղած պայքարի դաստիարակչական ահագին դերը, վորոնք յերբեմն այսպես են գործում.—նստում են ձին, չրջում են մի քանի գյուղխորհուրդներ, բղավում են սլանը կատարելու անհրաժեշտության մասին և դրանով էլ վերջացնում են իրենց «աշխատանքը»: Փոխանակ հավաքելու չքավորներին, մենա անտեսներին, կոլխոզային ակտիվը, նստելու նրանց հետ, բացատրելու նրանց, մոբիլիզացիայի յենթարկելու նրանց բոլշևիկյան իսկական պայքարի համար: Հարյուր հազարավոր կոլխոզնիկներ դաստիարակելը հեչա խնդիր չէ, բայց իրագործելի խնդիր է, մի անգամ էլ կրկնում եմ՝ վոչ վար չարարությամբ: Այդ բոլորի համար պետք է վոչ թե հրամայել, այլ ղեկավարել — ղեկավարել ըստ Լենինի, ըստ Ստալինի, ըստ նրանց չկոլայի:

Առանց ճշդրիտ ու վորոշակի հասկանալու, թե ինչ է նշանակում խոսել մթերումը, ինչ է նշանակում վարունգների մթերումը, ինչ է նշանակում այնպիսի «մանրուքի» մթերումը, ինչպիսին է ձիու մաղը, առանց այդ մթերումների նշանակությունը ճշդրիտ, պարզորոշ հասկանալու, դժվար է ձեղնից պահանջել, վոր դուք այդ բանով դաստիարակեք կոլխոզային ու մենատնտես մասսաներին:

Յերբ բոլշևիկը սլանը կատարում է, այդ դեռ չի նշանակում, վոր նա կատարել է իր բոլշևիկյան պարտքը: Ներկայումս սլանը կատարվում է Խորհրդային Միության բոլոր աշխատողների ու աշխատավորների կողմից:

Խնդիրը կայանում է նրանում, վոր գործն այնպես դնել, վոր բոլոր պայմանները ստեղծվեն հետագա առաջխաղացման համար, բոլոր պայմաններն ստեղծվեն հետագա հաջող հաղթություններ և յերկրորդ հնգամյակի խնդիրները կատարելու համար: Պլանը կատարել՝ նշանակում է ակտիվ, անխնա բոլշևիկյան պայքար մղել իրագործելու այն խնդիրները, վոր մեզ առաջադրել է 17-րդ կուսկոնֆերանսը.

«Կոնֆերանսը գտնում է, վոր բնակչության բարձրացման հիմնական ապրանքներով, այդ թվում անհրաժեշտ քանակներով ապահովումը յերկրորդ հնգամյակի վերջին, առաջին հնգամյակի համեմատ, առնվազն պետք է ավելանա յերկու-յերեք անգամ»:

Արդյոք, կարելի՞ է մեզ առաջադրված այսպիսի հերոսական խնդրի հանդեպ բավականանալ ու հանդստանալ պլանային առաջադրանքների կատարումով:

Վոչ, և վոչ մի կերպ: Մեր կատարած աշխատանքը մի այն մի քայլ է, մեր առջև կանգնած կարևորագույն խնդիրների կատարման հանդեպ:

Ճիշտ է, արված քայլը նկատելի չէ, բայց մենք ամենեվին չենք կարող բավականանալ մեր աշխատանքի վերակառուցման այս առաջին, մինչև իսկ նկատելի քայլով:

Մենք ձեզ հետ միասին դործն այնպես պետք է դնենք և կատարյալ աշխատենք մեր առաջնորդ և ուսուցիչ ընկ Ստալինի լոզունգը կենսադործելու համար:

«Առաջ չարժվելու և կոլխոզները վերջնականապես ամրապնդելու համար մենք պետք է յերկրորդ քայլն անենք, մենք պետք է նոր նվաճում ձեռք բերենք:

Ի՞նչի մեջ է կայանում այս յերկրորդ քայլը:

Նրա մեջ, որ կոլխոզնիկներին — նախկին չքավորներին, նախկին միջակներին ավելի բարձրացնենք: Նրա մեջ է կայանում, որ բոլոր կոլխոզնիկներին ունենալոր դարձնենք:

Այո, ընկերներ, ունևոր» (Ստալին):

Դրա համար ամենամոտ ժամանակներս մենք մեր կոլխոզնիկներին պետք է բարձրացնենք Բոլշևիկների Համայնավար Կուսակցության (բ) Անդրյերկրամի, Ադրկոմկուսի (բ) կենտկոմի ու Բոլշևիկների Համայնավար Կուսակցության Ադրբեջանի կենտկոմի մարտական առաջադրանքները և առաջնորդ ընկեր Ստալինի դիրեկտիվները կատարելու համար, Ադրբեջանի նավթային արդյունաբերության պատմության մեջ առաջին անդամ որակյալ նավթահանույթ հասցնելով 51–52 հազար տոննի:

Մի մոռանաք, ընկերներ, որ անցյալ տարի մոտավորապես այս ժամանակները Բոլշևիկների պրոլետարներից անկախ պատճառներով, Բոլշևիկների նավթային արդյունաբերության մեջ բոլոր հնարավորություններն ունենալով՝ Ադրկոմկուսի (բ) կենտկոմի ղեկավարությունը քանիցս կուսակցության կենտկոմի առաջ հարց եր դրել մի միլիոն տոննով իջեցնել նավթահանույթի ծրագիրը: Այս տարի մեր կուսակցության կենտկոմը Բոլշևիկների նավթագործների, Բոլշևիկների բոլշևիկների առաջ խնդիր է դրել 500 հազար տոննով մեծացնելու նավթահանույթի պլանը, որ Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի սահմանած նոր որակյալ նավթահանույթի հետ կազմում է մոտ մի միլիոն տոնն (ձափահարույթյուններ):

Ցնել ի՞նչ եք կարծում, ընկերներ, նավթային Ֆրոնտի բանակին ի՞նչպես վերաբերվեց մեր կուսակցության այդ հրամանին: Նա վոչ միայն առանց առարկության ընդունեց, այլ և այնպիսի հաջողությամբ ու ոեմպերով է իրագործում, վոր նավթահանույթի մեծացրած ծրագիրը տարվա վերջին կատարված ու դերակատարված կլինի (ձափահարույթյուններ):

Ահա, ընկերներ, Բոլշևիկ նավթագործների աշխատանքի մակարդակը, ոեմպերը, վորակը:

Այդ ոեմպերին, այդ մակարդակին պետք է հասցնեն իրենց ռայոնները՝ մեր ռայոնական դեկավարները, ռայկոմները, քաղաժինները ու ռայդործկոմները:

ՄԱՍՍԱՆԵՐԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Ե ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպե՞ս ենք կատարել դյուզտանտեսական պարտակատուվթյունները:

Ինչպես ձեզ հայտնի է, ընկերներ, բացի մեր կուսակցական կենտկոմի և ԿվՀ–ի հունվարյան միացյալ պլենումի վորոշումներից և 1933 թվի դյուզտանտեսական կամպանիայի խնդիրների մասին կուսակցական մի շարք ուրիշ վորոշումներից, մենք ձեզ հետ միասին ընկ. Ստալինից և Մոլոտովից հատուկ դիրեկտիվ ենք ունեցել, վորն իր ժամանակին հրապարակվել և մամուլում, վորի մեջ մատնանշված են յեղել անցյալ տարվա մեր սխալները և կոնկրետ լենինյան ցուցմունքներ տրված, այս տարվա բամբակային պլանը հաջողությամբ կատարելու համար: Առաջնորդվելով ընկ. Ստալինի ցուցմունքներով, մենք վորոշ հետևանքների յենք հասել:

Առաջին անդամ Ադրբեջանի պատմության մեջ, ավելի շատ Ադրբեջանի բամբակարուծության պատմության մեջ, մենք այս տարի լիովին և շատ ավելի խոշորացած ժամկետներում կատարել ենք ցանքսային կամպանիան, այդ կամ-

պանիան 10–12 որ չուտ ենք ավարտել, քան անցյալ տարի Բնորոշ է այն հանգամանքը, որ մեզ մոտ ցանքսային կամ պանիան մի քա այնպես է անցել, որ ցանքսային տարածության պլանային ու կոնտրակտացիոն թվերը յերբեք չեն համապատասխանել ծիլերի դործնական չափումի հետևանքներին: Այս տարի, առաջին անդամն է, որ բամբակի ծիլերի դործնական չափումի հետևանքները ճիշտ և, անշուշտ, բայց այնուամենայնիվ փաստական ցանված տարածություններ ավելացում են տվել պլանային և կոնտրակտացիոն թվերի դեմ:

Այս բանը վկայում է, որ բամբակային տնտեսության պլանային դեկավարության դործի մեջ մենք որոշ պարզություն, որոշակիություն, որոշ հաչվառում ենք մրցրել:

Ընկերներ, մենք չորս քաղհան ենք կատարել, չորս փխրեցում և առաջին անդամ այս տարի անց ենք կացրել յերկու նոսրացում: Քաղհանի ժամկետները 15 որով խըստացրել ենք, իսկ քաղհանի ժամկետների խստացումը բերքատվության բարձրացման համար լուրջ դործոն է հանդիսանում:

Յերրորդ փխրեցումն այս տարի մինչև ոգոստոսի 15–ը կատարված է յեղել 63 տոկոսով, անցյալ տարվա 24 տոկոսի դեմաց, չորրորդ փխրեցումը նույն թվին կատարված է յեղել 24,9 տոկոսով, անցյալ տարվա 3,4 տոկոսի դեմաց:

Վոռոդման կամպանիան այս տարի ավելի կազմակերպված և նվազագույն ժամկետներում և անցկացված, ըստ որում ակոսային վոռոդմամբ ընդդրկվել է 50 հազար հեկտար, անցյալ տարվա 33 հազար հեկտարի դեմաց:

Այս տարի վոռոդման հետ կապված հարցերը քիչ թե շատ հաջողությամբ են անցել: Այդ տեսակետից պետք է պատչաճը հատուցենք մեր արտակարգ լիազոր Ազբրային, Ազբջրանտեսության գծով նրա ամենամոտիկ ողնական բրիգադիային, մեր ջրային սիստեմների բոլոր աչխատողներին ու բանվորներին:

Իսկ Ազբրեջանի ջրային տնտեսությունը լավ դեկավարել — դա նշանակում է հակայական չափով բամբակի համար մղվող պայքարի հաջողություններ վճռել:

Մեծ աչխատանք են կատարել մեր կոլխոզնիկներն ու մենատնտեսները դյուղատնտեսության վնասատուների՝ մարդային թիթեռի, դոմոզի, լարորդի, չոռի և առանձնապես կնդուղակերների դեմ: Այդ բոլոր վնասատուներով վարակված են յեղել 76 հազար հեկտար բամբակային ցանքսեր:

Յեթե հաչվի առնենք այն հանգամանքը, որ վնասատուների դեմ պայքարող ընկերության մեր օրգանները, բացի մոլախի դեմ պայքարելուց, այս տարի յել, ինչպես յերեսում է, վոչնչով չեն զբաղվել, պահանջված իրական ողնություն չեն կարողացել ցույց տալ մեր կոլխոզներին, մեր մենատնտեսներին, ապա այստեղից ինքն ըստ ինքյան պարզ պետք է լինի, թե ռայոնները դյուղատնտեսության վնասատուների դեմ մղվող պայքարում կուսակցական կազմակերպությունների և քաղբաժինների դեկավարությամբ ինչպիսի հակայական աչխատանք են կատարել:

Դյուղատնտեսական վնասատուների դեմ մղվող պայքարում վոչ միայն բոլոր վայրերում բոլոր աչխատունակ կոլխոզնիկներն են 100 տոկոսով ակտիվ մասնակցություն ցույց տվել, այլ և դպրոցականները, կոմյերիտականները, պիոներական կազմակերպությունները են մասսայական մասնակցություն ցույց տվել:

Բամբակենու վնասատուների դեմ, առանձնապես կրնդուղակերի դեմ մղած պայքարը մասսայական բնույթ է կրել, ապեսի դեմ բոլոր կոլխոզնիկների մասսայական լայնորեն ծավալած ֆրոնտային պայքարի դրոշմ է կրել: Յեվ այդ պայքարը հատուցեց, թե ինչ է նշանակում կազմակերպել մասսաներին, թե ինչ է նշանակում մասսաների կազմակերպված ուժը: Դա մի ավելորդ անդամ ևս վկայում է, որ մեր բոլոր կամպանիաները, մասսայական-քաղաքական կամպանիայի վերածելու դեպքում անպայման հաջողությամբ կպսահովվեն:

Բավական է ասել, որ առանձին ռայոններում մենք կնդուղակերներին որոշել ենք միլիոններով և այդ բոլորը ձեռքով:

Կնդուղակերի դեմ մղված պայքարում դեղեցիկ կերպով հատատվել է ընկ. Ստալինի այն խոսքը, թե բոլշևիկների համար անհնարին բերդեր չկան:

Առաջին անգամ այս տարի, ընկերներ, ագրոտեխնիկական կոնֆերանսներ ենք անցկացրել մի շարք ռայոններում՝ Բարդայում, Աղդաշում, Շամխորում, Գյանջայում և այլն:

Ագրոտեխնիկական կոնֆերանսների իդեան ընդօրինակել ենք Մ. Ի. Ալիևի ընկերներից, սկսել ենք այն պատվաստել մեր կոլխոզներում մեր բամբակագործների միջավայրում:

Մի շարք ռայոններում և կոլխոզներում պատվաստվում և ավագների խորհրդի կազմակերպումն ու կետմանով մշակման արմատավորումը, որը հսկայական առավելություն ունի թորխով մշակելու համեմատությամբ, որն ուղղակի հողը քշփորում է, մոլախոտի ցողունները վերևից կարում է թողնելով արմատները, որի հետևանքով մոլախոտերն ավելի շատ են աճում:

Ընկերներ, մեր բամբակային սոցիալիստական դաշտերում ծնունդ և առել բրիգադը—իզդատվեց Մուստաֆա Մամեդովի ագրոնարյադի դաշտիարը:

Մուստաֆա Մամեդովի և բամբակի նրա նմանների—Ադրբեջանի սոցիալիստական դաշտերի հարվածականների խորքերից բնական կերպով առաջ քաշվեցը դեղեցիկ կերպով հատատուն և հանդիսանում դիտական սոցիալիզմի հիմնադիրներից մեկի հանճարեղ նախագուշակությունն այն մասին, թե՝

«Արտադրության համայնացումը կապահովի հասարակության բոլոր անդամների վոչ միայն նյութական, լիովին բավարար և մշտապես բարելավվող դոյությունը, այլև լիրաչխավորում և նաև նրանց ազատ զարգացումն ու նրանց ֆիզիկական ու հոգևկան ձիրքերի հայտնաբերումը» (Ենգելս):

Մուստաֆա Մամեդովի և բամբակային դաշտերի մի շարք առաջավոր հարվածականների յերևան գալը, որոնք բնրքաուության բարձրացման յուղատուն յեղանակները, բամբակային կամպանիայի կազմակերպման ղեկավարն մեթողներն են դտել, վկայում է այն մասին, որ իսկապես հասել է այն ժամանակաշրջանը, յերբ արտադրության համայնացումը վոչ միայն նյութական դրության բարելավում է, այլև ստեղծում է բոլոր այն պայմանները, որ-

րոնք ապահովում են առանձին ու հարյուրավոր Մամեդովների ֆիզիկական ու մտավոր ձիրքերի յերևան գալը, վոր առաջներում դարերով ճնշված ու մոռացված են յեղել:

Մենք ձեզ հետ միասին յերջանիկ ենք նրանով, վոր կենդանի վկաներ ու անմիջական մասնակիցներ ենք հանդիսանում այն նոր հասարակության շինարարության դրծին, վորի ժամանակ, ինչպես Ենգելսն է ասում՝

«Անձնական դոյության համար մղվող պայքարը կվերջանա, միայն այն ժամանակ կենդանական թափա վորությունից վերջնականապես կատանձնանա մարդը բառիս ճիշտ իմաստով, դոյության կենդանական պայմաններից կանցնի իսկական մարդկայինի:

Այն ժամանակ կյանքի բոլոր պայմաններում, վորոնք առնդծվել են մարդկանց կողմից և մինչև հիմա ճնշել են նրան, կենթարկվեն մարդկանց ու նրանց հսկողության և առաջինը նրանք կհանդիսանան բնության դիտակից և իսկական տերերը, վորովհետև իրենց սեփական միացյալ հասարակության մեջ կլինեն տերերը»:

Մենք ունենք առանձին վաստեր ու հարյուրավոր որինակներ մեր կոլխոզներում ու կոլխոզային դաշտերում, մեր կոլխոզային արտադրության մեջ, յերբ մեր կուլտուրության գլխավոր դծի պրակտիկ կենսագործման հիմունքով, յերբ մեր քաղաքաժիններին, գյուղում ունեցած մեր այդ քաղաքական հենակետերի անմիջական ղեկավարությամբ ստեղծվում են նոր կազմակերպիչներ, նոր ղեկավարներ, մեր կուլտուրության նոր դղնակամներ, անդադարակատ հասարակության կառուցելու համար:

Վերափոխվում, վերադաստիարակվում են առաջավոր կոլխոզնիկները և իրենք էլ վերադաստիարակում իրենց հետամնաց ընկերներին, իրենց որինակով և ազդեցությամբ առաջ քաշում հետ մնացող ընկերներին և հասցնում նրանց էլ սոցիալիզմի դիտակից ու առաջավոր կառուցողնեի մակարդակին:

Մեր Սովետական Միության ընդհանուր հսկայական աճով տարվելով, դրավվելով սոցշինարարության առանձին

տեղամասերում առաջնության համար մղվող պայքարով՝ մենք մի րոպե անգամ չպետք է մոռանանք այն բոլոր սրբացեռանները, որ կատարվում են յերկրի կյանքում ու եկոնոմիկայում, առանձնապես մեր գյուղում ու մեր կոլխոզնեբում: Մենք չպետք է մոռանանք այն, թե ինչպես հաստատուն ու համառացած կերպով, չարունակելով ու զարդացնելով Մարքսի ու Լենինի ուսմունքը, մեր սիրելի առաջնորդ ու համաշխարհային պրոլետարիատի ուսուցիչ ընկ. Ստալինը մեզ հաղթանակից հաղթանակ հասցնելով, մեր յերկիրը դեպի այն ազատության թագավորության և տա նում, որի մասին իր ժամանակին ասել է Ենգելսը.

«Միայն այն ժամանակ են մարդիկ ամենագամայն գիտակցաբար ստեղծելու իրենց պատմության, իսկ նրանց կողմից չարժման մեջ տրվող պատմական դրդոնները ավելի ու ավելի մեծ չափով են տալու մարդկանց ցանկալի արդյունքները: Այդ մարդկության թռնիչքն է լինելու անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորությունը»:

Մի քիչ մեր այսորվա դրության, մեր այսորվա մակարդակը փայլուն ապացույց չեն այն բանի, որ մենք հասատուն կերպով քայլում ենք դեպի այդ թագավորությունը: Մենք հաղորդությամբ առաջ ենք տանում միլիոնանոց բանակները, որոնց մեջ յուրաքանչյուր որ ավելի ու ավելի են ստում կադմակերպիչների կադրերն ու մեր կուսակցության ոգնականները — դրանցից քիչ չկան Ադրբեջանի վոլեվ ռայոնի կոլխոզային գյուղում:

Կադմակերպիչների ու դեկավարների կադրեր ստեղծում է հենց ինքը, կոլխոզային հասարակակարգը: Պետք է կարողանալ հայտնաբերել այդ կադրերը, կարողանալ աճեցնել դրանց, պետք է ավելի համարձակ կերպով առաջ քաշել կուսակցական ու անկուսակցական ակտիվիստներին, կոլխոզային գաշտերի հարվածային խղտումներին, վորպես կոլխոզների, գյուղխորհուրդների, կուսբջիջների, ռայոնական կադմակերպությունների դեկավարներ: Մենք այդպիսի կադրեր ունենք: Ահա որինակ՝ Ալի — Բայրամովի ռայոնի Ոգոստոսի 1-ի անվան կոլխոզի Հախազահ—անկուսակցական կուլիևը, որը վորպես նախագահ աշխատում է արդեն կես տարի, յերեք տարի է, ինչ կոլխոզում է, ինքն էլ չքավոր ներից: Այդ նախագահը կուսակցական բջջի (վեց կուսան գամ կա) ողնությամբ կարողացել է ամուր կոլխոզ դարբնել: Այդ կոլխոզում 1932 թվին բամբակի ամբողջ ցանքը փչացել է հեղեղի տակ: Սակայն այդ հարվածը չի յերերել կոլխոզնիկների չարքերը: Կոլխոզը կարողացել է ընթացիկ տարում գերակատարել բամբակացանի պլանը, բավարար կերպով անց է կացրել նախացանքային կամպանիան, ցանքը և առանձնապես մշակման կամպանիան: Այդ դեռ քիչ է. սոցիալիստական բուքսիրի կարգով «Ոգոստոսի մեկին» կոլխոզը մշակել է Հարևան «Մեղանիաթ» կոլխոզի 40 հեկտարը: Կոլխոզնիկների յերկու յերրորդ մասն ունեն մեկական, յերկուական կովեր: Կոլխոզն այս տարի ցանել է 20 հեկտար բանջարանոցային — բոլորչային բույսեր, կոլխոզային կրպակ ունի Սալյանում, որի միջոցով և իրացրել է արդեն 20·000 ռուբլու բանջարեղեն և դեռ մինչև սեզոնի վերջը կիրացնի նաև նուռնաբան գումարի բանջարեղեն:

Քիչ չեն մեր գյուղում նման կադմակերպիչները: Պետք է կարողանալ գտնել նրանց, ընտրել, դաստիարակել, չերջապատել անհրաժեշտ ուշադրությամբ ու ողնությամբ: Դժբախտաբար մենք հաճախ չենք տեսնում դրանց, չենք հայտնաբերում դրանց, չենք աճեցնում, մենք հաճախ մեր քթից դեռ բան չենք տեսնում, մենք հաճախ պատահում ենք մի քանի մարդկանց չուրջը, որոնց անունները գիտենք և չենք ուզում խլնել մասանների մեջ, չենք ուզում և չենք կարողանում գտնել նոր ու թարմ ուժերը այն մասսան, որ րոնք դաստիարակվում են մեր ընդհանուր չարժումով:

Մեր անռնհատությունը վարում ենք պլանային ընկղմությամբ, խստիվ կերպով զուգորդելով սոցիալիստական անռնհատության բոլոր ոդակները ու ճյուղերը:

Դեկավարելով պլանով, կոմնորոշվելով պլանով, մենք ինկատի ունենք սոցիալիզմի մերկհատվոր ակտիվ կատուցող ներն կամքն ու նախաձեռնության կադմակերպումը, որոնք ուժեղ թափով ձգտում են կատարել ու գերակատարել պլանային առաջադրանքները: Պետք է հիշել, որ պլանը — դա գործողության դեկավարություն է, այլ ոչ թե մեռյալ հավատո հանգանակ:

Պետք է միայն, հետ չմնալով սոցիալիզմ կառուցողների բանակի չարժման տեմպերից, կազմակերպել նրանց, համոզվել, համբերությամբ դաստիարակել հետամնացներին, անողոքաբար հալածել թշնամիներին ու պորտաբուծներին և խնամքով պահպանել արտադրվող հարստությունը:

Ընկ. Ստալինը անուեհասարների խորհրդակցության՝ 1933 թվի հունիսի 23-ին հետևյալն է ասել:

«Հիմարություն կլինի մոռանալ, որ արտադրական պլանը — դա թվերի և առաջադրությունների ասոկ մի ցանկ է: Իրոք, արտադրական պլանը — դա միլիոնավոր մարդկանց կենդանի ու պրակտիկ գործունեություն է: Մեր արտադրական պլանի իրական լինելը — դա նոր կյանք կառուցող միլիոնավոր աշխատավորները են»:

Ահա թե ինչ է պլանը մեր հասկացողությամբ, բոլշևիկյան հասկացողությամբ: Ցեմ ավարտվա արդյունքները, որ մենք ունենք, պետք է քննարկել վորպես մեր կոլխոզա յին գաչառների հարյուր և հազարավոր առաջավոր հարվածայինների ստեղծագործության: Իսկ մեր՝ ձեր հետ ունեցած բաժինն այդ գործում — այն է, որ մենք կազմակերպել ենք նրանց ինչպես հարկն է, կարողացել ենք ղեկավարել նրանց: Կարողանալ կազմակերպել, կարողանալ ղեկավարել նոր պայմաններում, նոր պարագայում, կարողանալ ղեկավարել նոր ձևով, կարողանալ ղեկավարել ոպերատիվ և կոնկրետ ձևով — ահա թե ինչ է պահանջվում այժմ ամենից առաջ նրա համար, վորպեսզի ապահովվի պլանի կատարումը:

Մենք այստ, ընկերներս, ցանքասերն և մշակմամբ կամպանիայի վոչ վատ անկացման ջուրհալ, — չնայած նրան, վոր այս տարի վնասատուների դեմ մեր նախնական դեպքերը են եղել, չնայած բեղանավի անբարենպաստ պայմաններին, — վեգետացիայի առաջին շրջանում ունենք բամբակենու ամենալավ վիճակ, վոր միանգամայն ապահովում է բամբակի 134 հազար տոննն, այդ թվում 15 հազար տոնն յեգիպտական, պլանի կատարումը և գերակատարումը:

Ընկ. Ստալինի հետաքրքրում իր ժամանակին ասված եր — 134 հազար տոն, այդ թվում 13 հազար 500 տոնն յեգիպտական: Այդ հետաքրքիրը յենում եր նրանից, վոր մենք բան պլանի պետք է ցանեյինք 22 հազար հեկտար յեգիպտական բամբակ, իսկ այժմ, յերբ մենք ձեզ հետ միասին ցանել ենք վոչ թե 22·000, այլ 25·000 հեկտար, ապա բնական է, վոր յեգիպտական բամբակի տոն քանակը, վոր պարտադիր ենք հանձնելու, ամենայնում և հասնում է 15 հազար տոննի: Մենք վորպես բոլշևիկներ, պետք է հաստատուն խնդիր դնենք, ինչ կերպ էլ լինի հավաքել գաչառի ամբողջ բամբակը (ձայներ — ճիշտ է):

Ցես անհրաժեշտ եմ համարում հատկանշել այն նոր մի քանի խոչտոռակ որինակներ, թե ինչպես են ոգնում մեզ բամբակի համար մղվող պայքարում ստանձին յարգր հեղինակավոր ու գիտական կազմակերպություններ:

Ահա որինակ Պետական Բամբակային ինստիտուտը, մի կազմակերպություն, վոր հատկապես զբաղվում է բամբակի բնբքի պրոբլեմով:

Պետ. Բամբ. ինստիտուտի աշխատողները բամբակի բեր քի առաջին պրոգնոզ տվել են մի ամիս առաջ յեվ վորոշել են միջին թվով 5,7 ցենտներ բերք մի հեկտարից: Դուրս է գալիս, վոր նրանց յուր է հասել, թե առանձին խոտանվոթյուններ կան պլանի յինթացվող իջեցման մասին մինչեվ 112 հազար տոններ. և ահա այդ 5,7 ցենտները հենց տալիս է ճիշտ 112 հազար տոնն (ծիծաղ):

Ցերկոմի բյուրոյում մենք Պետ. Բամբ. ինստիտուտի ընկերների դեմքին մի քիչ ջուր լցրինք: Հենց այդ ժամանակներս տատվել էր ընկ. ընկ. Բոլդրեվի և Ցերնովի հետագրերը 119 հազար տոնն պլանի մասին: Ցեվ ինչ եք կարծում: Ցերևի ինձ նոր պրոգնոզ բերին Պետ. Բամբ. ինստիտուտից — աղյուսակների ամբողջ գորգեր: Ցես նստել եմ հաշվումներ կատարել և իմնչ է դուրս յեկել: Նրանք միջին բերքը Ադրբեջանում հատորել են 6,3 ցենտների մի հեկտարից և այդ էլ տալիս է ճիշտ 119 հազար տոնն (ծիծաղ): Ցեվ դա վրչվում է պրոգնոզ: Ինչպես յերևում է դեռ նրանք չեն էլ լսել այն մասին, վոր պլանը 127,700 տոնն է հատատուվել: Համաստացնում եմ ձեզ վոր այդ դեպքում էլ նը-

բանք նոր սրոգնող կկատմեյին, ամեսպես որ 127,700 տոննա առացվի: Ընկերներ, չե որ այդ կազմակերպության վրա մենք մելիոններ ենք ծախսում: Իսկ նա մեզ վոչ թե ոգնում է, այլ քարշ է գալիս պոչից և դյուզատնտեսական կազմակերպությունների առանձին պատասխանատու աշխատողների մեջ ևս գտնվում են այնպիսիները, վորոնք բռնում են այդ եժան սրոգնողից:

Կա մի ուրիշ կազմակերպություն — Անդրկովկասյան Գիտա-Հետազոտական Բամբակային ինստիտուտը: «Բակ. Բարոչում» դուք կարդացել եք այդ ինստիտուտի այսներից մեկի—Վարունցյանի աշխատության դրական ոսկանը: Ի՞նչ են անում այնտեղ: Այդ Վարուցյանն իր իր ժամանակին գրություն է գրել ընկ. Ռուբենին, ուշադրություն դարձնել «Պրավդայի» այն մասին, վոր մենք համարյա աչքակապությամբ ենք պրաղվում, իսկ «Բակ. Բարոչին» իբրեվ թե ավազում է սխալները, ճնշում ինքնաքննադատությունը և այլն: Ի՞նչ ուներ և գործը: Բանից դուրս է գալիս, վոր այդ Վարունցյանին հար կամար է եղել, վորպեսզի մենք իրագործենք կյանքում նրա վնասատարարական տեսությունը այն ժամին, վոր առաջին նոսրացման ժամանակ ամեն մի վոսում թողնել 3—4 բույս, իսկ չերկրորդի ժամանակ վոչ ավել 1—2-ից: Սա այնպիսի մի աքսյոմ է, վորի համար պետք չե Վարունցյանին Անդրկովկասյան Գիտա-Հետազոտական Բամբակային ինստիտուտի աշխատակից լինել, այլ պիտի մխայն ունենալ ավելի զրուս, հասկանալու համար, վոր չեթե առաջին նոսրացման ժամանակ մխայն մի բույս թողնվի, ապա դա նշանակում է, վոր հետո բամբակ չպիտի ունենալ: Ի՞նչ եք կարծում, ընկերներ: Այնտեղ նստած ցան կացողները, սերոցներ գտնվեցին, վորոնք միացան Վարունցյանին. իսկ չե՞ որ, չեթե լսեինք այդ Վարունցյանին, չե թե գնայինք Անդրկովկ. Գիտա-Հետազոտ. Բամբ. ինստիտուտ

ան հետքերով, ապա որ մենք դաշտերում վոչ թե բամբակ կունենայինք, այլ բամբակից մաքրած դաշտեր:

Իսկ Հողժողկոմատում գտնվող ընկերները վոչ մի մեջց չեն ձեռք առնում: Մենք նրանց քանիցս ասել ենք, թե այդ ավղյան ախորը — Անդր. Գիտ. Հետազոտ. Բամբ. ինստիտուտը պետք է մաքրել ամեն տեսակ «մեր բարյացակամներից»: Ավելի լավ է, արտեղ թող քիչ մարդիկ լինեն, բայց մեղ ոգնող, քան թե շատ, բայց խանգարող:

ՊԻՏԻ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՂԸ ՅԵՎ ՄԹԵՐՈՒՄԸ

Այսպես, ուրեմն, ընկերներ, բամբակ կա: Մեղնից պա հանջվում է մխայն մի բան, — աղնվորեն, բոլշևիկորեն կազմակերպել բերքաքաղն ու մթերման կամպանիան: Ձեռ հայտնում եմ ամենայն վճռականությամբ, վոր բամբակն ապահովում և պլանի իրագործում: Ա՛հա տեղ, վորտեղ պրան չի կատարվի, այնտեղ հավանորեն մենք գործ կունենանք պլանը կատարելու համար պայքար կազմակերպել չկարողանալու հետ: Չե վոր քնորոշ է, վոր այնպիսի ոայոններ, ինչպես Զանգելանն է, արդեն կատարել է բամբակը հանձնելու 24—25 տոկոսը. դա այն Զանգելանն է, վոր 3—4 տարի սև տախտակի վրա էր գտնվում, այն Զանգելանը, վորտեղ կենտրոնի աշխատողներից վոչ վոք աչք չէր դպցնում. չեթե Զանգելանը, վորի մասին վորոշ «տեսատեսիներ» ասում են, թե այնտեղ բամբակ չի բուսնի: Չեթե այդ Զանգելանը բամբակաքաղի 1-ին 15 որում տարեկան պլանի քառորդը տվել է, ապա հարկ չկա խոսելու մյուս ոայոնների մասին:

Նախ քան բամբակաքաղի խնդիրներին անցնելը՝ կանգ առնենք այն բանի վրա, թե մեղնում ինչպես վերջացավ հացի բերքահավաքը: Մինչև սեպտեմբերի 10-ը հացահատի կային բերք հավաքված է 557,817 ցենտներ, տոկոսը՝ տարեկան պլանի 82,2 տոկոսը. իսկ անցյալ տարի մինչև նույն թիվը հավաքված է եղել 405,505 ցենտներ, տոկոսը՝ 78,1 տոկոսը:

Մենք բերքահավաքի կողմից անպատճառ առաջ ենք գնում անցյալ տարվա համեմատությամբ: Չի կարելի տա

տարի չհնձել մեր ՄՏԿ–ների կատարած աշխատանքը՝ հացի հունձի և կալսելու վերաբերմամբ: «Պրավդան» իր առաջնորդողում հատկապես մատնանշում է Ղրիմը, Անդրկովկասն ու Թաթարիան, որպես բնավճարումների պլանը դեռ կատարած ռայոններ: Մեր ՄՏԿ–ները վոչ միայն լավ են աշխատել բարձրակի նկատմամբ, այլ և զգալի արդյունքներ են ունեցել նաև հացահատիկային տնտեսությունում: Նրանք հնձել–հավաքել են 58,502 հեկտար, վոր պլանի 141,2 տոկոսն է կազմում: Բնավճարի նկատմամբ արդեն ավել են վերջին բարձրացրած պլանի 135 տոկոսը և դեռ չարունակվում են ստացումները: Բերքատվության հանձնաժողովի և Աղրբեջանի Ժող. Տնտ. Հաշվեառման վարչության նախնական տվյալներով հացահատիկի ընդհանուր մուտքը համարվում է մոտ 50 տոկոս ավելի, քան անցյալ տարի է ստացվել Աղրբեջանում: Յեթե անցյալ տարի մի հեկտարի միջին բերքատվությունը 6,9 ցենտներ է կազել, ապա այս տարի 9,6 ցենտներ է: Դա անպայման պետք է անդրադառնա գյուղացիական տնտեսության սպառման վրա: Յեթե անցյալ տարի մի տնտեսությանն ընկնում էր 11,64 ցենտներ, ապա այս տարի ընկնում է 15,70 ցենտներ:

Առանձին կոլխոզներից ստացած նախնական տվյալները 1933 թվի բերքը բաշխելու մասին գույց են տալիս, վոր այս տարի կոլխոզային տնտեսությունները չատ ավելի են, քան նախընթաց տարիներում, վոր կոլխոզնիկների նյութական դրությունը քանի գնում ավելի ու ավելի է բարելավվում և վոր Աղրբեջանի կոլխոզնիկները վստահ և արագ քայլերով դեպի ունևոր կյանք են գնում:

Գյանջայի ռայոնում, Սարջար գյուղի կոլխոզում Մուխտար Հյուսեյնովը Աղրսամկուսի (բ) անդամ, իր ընտանիքի չորս աշխատունակ անդամներով 982 աշխոր ունի, վորի համար 4,500 կիլոգրամ հացահատիկ տուրքն է ստացել, այն ժամանակ, յերբ ամբողջ անցյալ 1932 թվի ընթացքում ընդամենը ստացել է 9,060 կիլոգրամ հացահատիկ:

Այդ նույն կոլխոզում հարևանային Սալման Դաշտամիր ողլին իր կնոջ հետ աշխատած 190 աշխորի համար ստացել է արդեն ամանսի կարգով 1·826 կիլոգրամ ցորեն և 53 կիլոգրամ գարի:

Թաուզի ռայոնում «Աշաղա – Կիշլե» կոլխոզում հարևանային Ղարա Ղահրաման ողլին ունի 150 աշխոր և ստացել է արդեն ամանսով 402 կիլոգրամ ցորեն:

Այս փաստերը կարելի յե չարունակել, սակայն իմ կարծիքով բերածն էլ բավական է, վորպեսզի տանենք թե արդեն սկսել են իրականացվել կյանքում ընկ. Ստալինի լոզունգը — մեր կոլխոզները բոլշևիկյան և կոլխոզնիկներին ունևոր դարձնելու մասին:

Գյուղատնտեսության ընդհանուր վերելքն ու ամն Ադրբեջանում, խորհրդային կառավարության խթանող որոնքները գյուղատնտեսական մթերումների նկատմամբ, Համկոմկուսի (բ) Անդրկերկոմի ու Աղրսմկուսի (բ) կենտկոմի ճիշտ ու պրակտիկ ղեկավարության այդ որենքները կյանքում կենսագործելու ընդդրում նշանավոր կերպով ազդում է մեր կողմից գյուղատնտեսական մթերումների կատարելու ընթացքի վրա:

Գյուղատնտեսական մթերումների ընթացքը մինչև սեպտեմբերի 15–ը բնորոշվում է հետևյալ տվյալներով:

Գարատադիր հացահանձնման պլանը ժամկետից առաջ է կատարված. ստացված է 431·515 ցենտներ՝ անցյալ տարվա մինչև նույն ժամանակը կատարված 208,211 ցենտներ հացամթերումների դիմաց, այսինքն յերկու անգամ ավելի: Որջոնիկիձեյի անվան հացահատիկային սովխոզը հանձնել է 60,272 ցենտներ — պլանի 102,1 տոկոսը, անցյալ տարվա մինչև նույն ժամանակը հանձնված 45,790 ցենտների՝ պլանի 91,1 տոկոսի դիմաց ՄՏԿ–ների բնավճարը ստացվել է 57,797 ցենտներ — պլանի 144,5 տոկոսը: Վերջապես ապունամարտ ստացված է 11,954 ցենտներ — պլանի 28,1 տոկոսը, անցյալ տարվա մինչև սեպտեմբերի 15–ը ստացված 7,217 ցենտների, կամ պլանի 24 տոկոսի դիմաց: Մինչև սեպտեմբերի 15–ը ստացված ապունամարտն անցյալ տարվա նույն ժամանակամիջոցում ստացվածի համեմատությամբ կազմում է 131·6 տոկոս:

Մինչև սեպտեմբերի 15–ը խոտ է մթերված 166·793 ցենտներ կամ պլանի 55,6 տոկոսը: Անցյալ տարի մինչև այդ ժամանակ մթերված էր 93,041 ցենտներ կամ պլանի 35,4 տոկոսը: Այս տարվա մթերումը կազմում է անցյալ տար

վա մինչեվ սեպտեմբերի 15–ը մթերած 179,3 տոկոսը: Դարման մթերված է 49,890 ցենտներ — պլանի 63,4 տոկոսը, անցյալ տարվա 14·071 ցենտներ կամ պլանի 6,5 տոկոսը: Այս տարվա մթերածն անցյալ տարվա մինչև սեպտեմբերի 15–ը մթերածի 354,·5 տոկոսն է կազմում: Ծղնոտ մթերված է 7,342 ցենտներ — պլանի 17,8 տոկոս, անցյալ տարվա մինչեվ այդ ժամկետը մթերված 2,612 ցենտների, կամ պլանի 7,8 տոկոսի դիմաց:

Գարնան աճեցրած բոժոժ է մթերված 15·255 ցենտներ — պլանի 76,2 տոկոսը, անցյալ տարվա 15·055 ցենտների կամ 83,3 տոկոսի դիմաց: Այս տարվա մթերածը կազմում է անցյալ տարվա մթերածի 101,7 տոկոսը: Բացի դրանից այս տարի մթերված է ամառն աճեցրած բոժոժ 45,7 ցենտներ կամ նշված պլանի 29,9 տոկոսը:

Մինչև սեպտեմբերի 15–ը հնդավոր բամբակ է մթերված 102,169 ցենտներ կամ տարեկան պլանի 7,9 տոկոսը, անցյալ տարվա 46,214 ցենտների կամ պլանի 3,4 տոկոսի դիմաց:

Ցուղ մթերված է 3,910 ցենտներ— 97,7 տոկոսը, անցյալ տարվա 839 ցենտների, պլանի 74 տոկոսի դիմաց: Ցուղ մթերուհիներն այս տարի կազմում են 466 տոկոս անցյալ տարվա մինչև այդ ժամանակ մթերածի համեմատությամբ: Անբաչ կաթ մթերված է 24,059 ցենտներ — 120,2 տոկոս, անցյալ տարվա 51,741 ցենտների կամ պլանի 49,4 տոկոսի դիմաց:

Ինչպես երևում է բերված տվյալներից մի շարք մթերումների նկատմամբ վոչ մի համեմատության մասին անցյալ տարվա հետ խոսք անգամ լինել չի կարող: Դա չի նշանակում, թե մեզնում այս տարի ամեն ինչ բարեհաջող է: Մենք չպիտի մոռանանք, որ մինչև տյսոր մենք պետք է հացահանձնումների տարեկան պլանը լրիվին կատարած լինեյինք բոլոր տրված պարտավորությունների նկատմամբ, ավարտած լինեյինք հացահատիկային տվիալի ամբողջ ապրանքային հացի հանձնումը, այլև հանձնած լինեյինք բոլոր մնացած տվիալների ավելցուկները, լրիվին ավարտած լինեյինք սերմացուի առանձնացումը և ապահովագրման ֆոնդերի կազմումը, անցյալ տարի բաժանած սերմնարկի վերադարձնելը և 2 տոկոսային համեմման հավաքելը, այլև հիմնականում ավարտել խոտամթերումները:

Այդ ամենը մենք չենք արել: Բացի դրանից, մեզ մոտ վատ է դնում ծխախոտի, բամբակենի և մրգենիի մթերման գործը: Մինչև սեպտեմբերի 15–ը ծխախոտի մթերման պլանը կատարված է 55,2 տոկոսով. թեկուզ դա անցյալ տվյալ մինչև այդ ժամկետը մթերածի համեմատությամբ կազմում է 441,6 տոկոս:

Բանջարեղենի մթերման պլանը կատարված է 40,9 տոկոսով, թեկուզ դա անցյալ տարվա մինչև սեպտ·15–ը մթերածի համեմատությամբ կազմում է 197,2 տոկոս: Վերջապես, պտուղների մթերման պլանը կատարված է 21,6 տոկոսով, թեկուզ անցյալ տարվա մինչև այդ ժամկետը կատարված մթերումների համեմատությամբ դա կազմում է 128,4 տոկոս:

Ամեն վատ և նախաձեռնություն այնպիսի մշակույթների մթերման նկատմամբ, որպիսին են կտավհատը, կենաֆը և բրինձը: Ուստի թող բրինձի, կտավհատի և կենաֆի ռայոնների ընկերները նկատի առնեն, որ իրենք վոչ պակաս պատասխանատվություն են կրելու այդ մշակույթների մթերումը տապալելու համար, քան թե բամբակային ռայոնների ընկերները — բամբակի համար:

Մի շարք կարևորագույն գյուղատնտեսական մթերումների գործում ամոթալի կերպով հետ մնալն արտահայտում է այն, որ դեռևս շատ ընկերներ՝ թե հանրապետական ապարատներում և թե գլխավորապես ռայոններում չեն հասկացել 1933 թ. գյուղատնտեսական կամպանիայի հաջող տարման վճռական նշանակությունը սոցիալիզմի շինարարության համար մղվող պայքարում: Պետք է հիշել, որ 1933 թիվը պետք է լինի դժվարությունների վերջին տարին՝ մեր երկրի՝ բանվոր գյուղացիների և աշխատավորների պահանջները բավարարելու իմաստով: Այստեղից բղխում է 1933 թվի գյուղատնտեսական կամպանիայի ամբողջ նշանակությունը:

Ընկերներ, գյուղատնտեսության բնագավառում դեկավարման թերությունները լենինյան սրանկատությամբ բաց և արել ենք· Ստալինը՝ կենտկոմի և կվՀ հունվարյան միաց-

յալ պլենումում ունեցած ելույթում, որը ծրագրային վո րոշում է ընդունել յերկար եռապլի համար՝ նոր պայմաննե րում, նոր պարադայում դյուղում աշխատելու նկատմամբ:

Առանձնապես սուր է դրել ընկ. Ստալինը կոլխոզային դյուղի ղեկավարման գործում մեր ունեցած թերություննե րի հարցը հավաքագրին կոոպերնիկների համամիութենական առաջին հավաքում ունեցած իր ելույթում:

Բոլոր թերությունները վերացնելու, դյուղական տնտեսությունը ճիշտ և հաջող ղեկավարելու համար կան մեր կուսակցության մի շարք կոնկրետ դիրեկտիվները: Կոլխոզային դյուղի վրա կուսակցական ազդեցությունն ուժեղաց նելու, դասակարգային թշնամու դեմ անխնա պայքար կազ մակերպելու, կոլխոզային դյուղի ղեկավարման գործում մեր ունեցած թերությունները վերացնելու, դյուղում նոր կարգերն ամրապնդելու համար՝ Չամկոմկուսի (բ) կենտկո մի վորոշմամբ ստեղծված են ՄՏԿ և սովխոզների քաղբա ժինները —դյուղում մեր քաղաքական հենակետները:

ՀԱՎԱՍԱՐՎԵԼ ԱՌԱՋԱՎՈՐ ՈԱՅՈՆՆԵՐԻՆ

Կուսակցության և մեր առաջնորդ Ստալինի այդ հիմնական դրույթները կատարելու համար՝ քաղբաժինների աշխատողներ ընտրելու հետ միասին, կուսակցության Յերկրային Կոմիտեն ու Ադրկոմկուսի (բ) կենտկոմն այդ ժամանակվա ընթացքում շատ հարյուրավոր առուղված ու նվիրված կուսակցական ու խորհրդային ղեկավարներ են ուղար կել ռայոնական ու կոլխոզային կազմակերպություններն ուժեղացնելու համար: Քաղբաժինների ու նորոշված ամրա պրնդված ռայկոմների ղեկավարությամբ, իրենց՝ կոլխոզնիկների ու տեղական ռայոնական աշխատողների շարքերից քիչ չեն հիանալի, նվիրված կոլխոզային կարգերի համար մղվող պայքարում ոգնած՝ կոլխոզների ու դյուղական կազմակերպությունների նոր կազմակերպիչներ ու ղեկավարներ առաջ քաշվել:

Բազմից ուղարկված ընկերների ճիշտ մեծամասնությունը, դրանց թվում և մի շարք ժողկոմներ, կենտկոմի ու Բաքվի բյուրոյի անդամներ, իրենց ամենօրյա աշխա

տանքներում հաջողությամբ պլուս են բերում կուսակցության կողմից իրենց վրա դրված խնդիրները:

Մենք քաղբաժինների ու ռայոնական կազմակերպությունների համերաշխ, ընկերական, միատեղ կատարած աշխատանքի քիչ դեղեցիկ որինակներ չունենք, վորոնք արդա րացնում են ընկ. Կազանովիչի խոսքերը.

«Լավ բոլշևիկները, յեթե հարցին ճևականորեն բյուրոկրատորեն չեն մոտենում, միշտ ընդհանուր լեզու կգտնեն, միշտ համաձայնության կգան լուծելու այն բարդ խնդիրները, վորոնք կանդնած են իրենց առաջ»:

Յես, ընկերներ, ի նկատի ունեմ մեր ռայկոմների յեվ քաղբաժինների փոխհարաբերությունները: Այնտեղ, վորտեղ համաձայնեցում, բոլշևիկյան համաձայնեցում կա և վոչ թե ընտանեյականություն, վորտեղ բոլշևիկյան վոխադարձ հսկացում, բոլշևիկյան միատեղ աշխատանք կա, այնտեղ հիանալի յեն հետևանքները: Իսկ այնտեղ, վորտեղ մինչև այժմ դեռ մեր շատ ռայոնական ղեկավարներ, ռայկոմների քարտուղարներ, կուսակցական աշխատողներ ըստ յերևույթին չեն հասկացել, կամ թե ուղղակի վոչինչ հասկանալ չեն ուզում քաղբաժինների նշանակության մասին մեր կուսակցության Կենտկոմի ու ԿՎՀ–ի հունվարյան պլենումի կողմից ընդունած վորոշումները, այնտեղ բանը վատ է գնում (ձայներ.—ճիշտ է): Ավելին կասեմ: Այդտեղ մի քիչ ել մենք ենք մեղավոր, այստեղ, Բաքու նահանգներս: Մեզնում այնպիսի դրություն է ստեղծվել, վոր ՄՏԿ–ների ու սովխոզների քաղբաժիններ կան, իսկ քաղսեկտորներ Մոդրկովկասում՝ առայժմ վոչ: Փաստորեն մենակ ընկ. Ռուբենն է տախտված Ադրբեջանում այդ բանն իր ուսերի վրա կրելու՝ մնացած բոլոր հարցերի հետ միասին: Մենք չունենք այստեղ ամբողջ դործնական, ամենօրյա աշխատանքն ընդհանրացնող, բոլոր քաղղեկույցներից յեղրակացություններ հանող համապատասխան կերպով կոնկրետ ուղիներ ու միջոցառումներ նշող քաղբաժնային որդան: Այդտեղ որյեկտիվ կերպով մերն է մեղքը: Քաղսեկտորի բացակայությունը ղգալի յե: Բայց դա բոլորովին չի նշանակում, թե ռայոններում ընկերները չեն կարողացել համապատասխան պայմաններ ստեղծել: Պետք է ի նկատի ունենալ, վոր

ռայոնների մեծ մասում մենք ռայկոմների բավականաչափ պատրաստված, ղեկավար քարտուղարներ ունենք, որոնք տեղեկ ցանկանան, կարող են համապատասխան կերպով հաճախորդության դալ քաղաքներին հետ: Ահա, օրինակ, Աղդաշի ռայոնը:

Ցնս չեմ ուզում կանգ առնել այդ ռայոնի թերություններ վրա. դրանք շատ են, բայց ահա համաճախորդության դալու ու վերադարձարար իրար հասկանալու, գործին վոչ ձեռական, այլ բոլշևիկյան վերաբերմունք ցույց տալու արդյունք: Աղդաշի ռայոնը տարեց տարի չի կատարել պլանը ու անցյալ տարի սև տախտակի վրա էր գրված: Այն ռայոնը, որը անցյալ տարի բամբակի պլանի միայն 64 տոկոսը կարողացել, այն էլ հունվարի վերջերին, այժմ այդ ռայոնը մինչև տեղեկ արդեն կատարել է տարեկան պլանի 24 տոկոսը: Բամբակի արտերի դրությունն այնպես է, որ տեղեկ ընկ. Խաչումովն ու Մեհտիևը չդուռդանան և չարուն նախկին նույն ձևով աշխատել, ապա հավաղությունն ապահովված է: Աղդաշի ռայոնը, ի զարմանս շատ նախկին դեկավարների՝ կդերակատարի պլանը:

Սհա ձեղ դեպի կուսակցության կենտկոմի վորոշումների ցույց տված վերաբերմունքի, հարցերի լուծման բոլշևիկյան մոտեցման արդյունքն ի տարբերություն այն դրության, վոր ունենք Ատաթայի, Սալյանի, Թաղուլի և մի շարք ուրիշ ռայոններում:

Գյանջայի ռայոնի աշխատանքն ավելի բարձր մակարդակի վրա չի գտնվում: Դա, իհարկե, չի նշանակում, թե դյանջեցիները թերություններ չունեն: Անհաշիվ են նրանց թերությունները: Պլենումի որակարգի յերկրորդ հարցի — արդյունաբերության մասին խոսելիս՝ մենք նրանց խոսիլ կսեղմենք: Սակայն գյուղական տնտեսությունում գյանջեցիները քիչ թերություններ չունեն արդեն, քան Աղդրաշխատանքի ավելի բարձր մակարդակ ուն

Առաջ և չարժվում Սարբեր – Աբադը. այդտեղ դարձյալ իր մեծ ներաիտեիքն ունի քաղաքինը: Ընկ. Ալյոշա Ալիյեվն առաջ բոլորովին չեր խմանում, թե ինչ բան է բամբակը, նրանը հասկնում եր. բայց արագությամբ յուրացրեց բամբակաբուծության տեխնիկան: Նրա որինակը մի անգամ ևս հաստատում է, վոր բոլշևիկների համար անհաղթահարելի դժվարություն չկա:

Առաջ և չարժվում Բարդան, դարձյալ դլխավորապես չնորհիվ քաղաքինի:

Վատ չի աշխատում Գյոկչայը: Վատ չի աշխատում և Կասում-Իսմայլովի ռայոնը: Ճիշտ է, նրանց մոտ անախորժ թյուրիմացություն է պատահել, բայց պետք է ճիշտն ասել, մինչև Գյուլիջինսկու զալը նրանք, վորոնք չեն աշխատում, այժմ ավելի լավ են աշխատում (ձայներ—նիշտ է): Ընկ. Գյուլիջինսկին չատ վազուց չե, վոր այնտեղ է, բայց հենց առաջին որվանից տաք-տաք կպել է գործին:

ԱՌԱՆՁԻՆ ՌԱՅՈՆՆԵՐԻ ՀԵՏ ՄՆԱԼՈՒ ՀԱՆՁԱՎՈՐՆԵՐԸ ՆՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՆ ԵՆ

Մեր առաջավոր ռայոնների աշխատանքների հետ միասին մենք ունենք ռայոններ, վորոնք վոչ միայն չատ ցուցանիշներով խայտառակ կերպով հետ են մնում, այլև իջեցնում են ընդհանուր հանրապետական ցուցանիշները և այդ պիսով անուղղակի հարվածում մեր առաջավոր ռայոնների աշխատանքներին:

Հետ մնացող ռայոնների խայտառակ, վատ աշխատանքի պատճառը պետք է վորոնել այդ ռայոնների ղեկավարների մեջ:

Այդ ընկերները թերագնահատում են կոլխողային արտադրության ուղիղ դրված հաչվառքն ու հաչվետվությունը և որկեսիկ կերպով պայմաններ են ստեղծում կուլակի գանազան խարդախությունների, մթերումների նկատմամբ պետական առաջադրությունների կատարումը տապալելու, պետական միջոցները չտայլելու համար: Որինակ, Լևոնային Ղարաբաղի Մարտունու ռայոնը, վորտեղ գանքային տարածության թյունների հաչվառք չլինելն ոգտագործվեց գոյության չունեցող տարածությունների համար արձանագրություններ կազմելու, վորպես թե նրանք կարկատած են յեղել և փոքր են ստացել պետական ապահովագրական որդաններից: Նման դեպքեր պատահել են և Բելոկանի ռայոնում:

Հաշտարխան – Բազարի ղեկավարները ցույց տվին, թե ինչպես նոր պայմաններում չի կարելի աշխատել առանց ռայոնի պայմանները հաշվի առնելու, առանց ուսումնասիրելու ռայոնի տնտեսությունները, առանց ստուգելու ամեն մի կոլխոզի, ամեն մի կոլխոզնիկի ու աշխատավոր մենատնտեսի վատատական դրությունը: Նրանք կարծում եյին, թե լոկ վարչարարությամբ կարող կլինեն այդ ռայոնում հացամթերումները կատարել և ավելի վատթարը՝ մինչև իսկ չամաչեցին ոգմրգման կանչելու Շամախու, Սղնախի և Լենքորանի ռայոններին: Յեվ ի՞նչ ստացվեց: Հաշտարխան-Բազարցիներն արդեն մի ամիս է, ինչ նստած են 86 տոկոսի վրա, իսկ Շամախու, Սղնախի և Լենքորանի ռայոններն արդեն ավարտել են հացահանձնումը: Այդ դեռ քիչ է: Հացահանձնման առաջին տասնորյակին նրանք ստեղծեցին արհեստական սայլաշարքեր, դերատուրքավորեցին առանձին կոլխոզնիկների, առանձին տնտեսություններ, այնպես վոր մենք ստիպված յեղանք այդ ժամանակի ընթացքում այնտեղ ուղարկել մի քանի հանձնաժողովներ: Բայց մինչև այսոր ուղարկված հանձնաժողովների ցուցմունքները Հաշտարխան-Բազարի ընկերների համար դաս չեն ծառայել:

Վերցրեք «Պրավդա»-ի վերջին համարը. այնտեղ մատնանշված է, վոր այդպիսի արարքների համար հեռացնում են կուսակցությունից, դատի յեն տալիս:

Կարդացեք ընկ. Ջերնովի հրամանը, հանրապետության դատախաղ ընկ. Ակուլովի հրամանը. նրա համար, վոր Ջագոտղերնոյի գնման կետում ռայոնական մի քանի աշխատող ներ րնավճարը հաշվում են պարտադիր մատակարարման հաշվին — նրանց խստորեն ու վճռական կերպով հարվածում են: Իսկ մեզ մոտ կարծում են, թե այդպիսի գործերի համար հանդիմանությամբ կպատուվեն:

Վո՛չ, ընկերներ, այժմ խոսքը հանդիմանության մասին չի լինի. չարամիտ խախտողների համար մենք ավելի սուր խոսակցություն կունենանք:

Աղրկոմկուսի (բ) կենտկոմի վորոշման մեջ նշված եր Լենտային Ղարաբաղի մարզկոմի աշխատանքը: Այնտեղ այն պիտի «չքնաղ» բաներ են թույլատրվել, ինչպես պլանների ինքնակամ իջեցումն և, հետո յել թող եյին վչչում աչքերին այդ իջեցրած պլանները կատարելու և դերակատարելու մասին:

Ընկերներն ել կան, վոր ավելի հեռու յեն գնացել, որինակ նուխեցիները, վորոնք չեն ուզում խոտ մթերել, չեն ցանկանում: Կարյագինցիներն ել չեն ուզում մթերել: «Մենք գրել ենք կենտրոն,—ասում են նրանք, — վոր չենք մթերե լու, դրա համար ել մենք չենք ձեռնարկել մթերումներին»: Ինչպե՞ս գնահատել այդ: Որենքները չկատարողները պետք և նկատվեն վորպես սաբոտաժնիկ, վորպես մեզ համար խորթ տարր:

Իսմայիլլուլի ռայոնում ել գտնվել են իրենց՝ խմատուներ: Նոտամթերման պլանը նրանք կատարել են 135 տոկոսով. իսկ պետության ինչքա՞ն են հանձնել: Մինչև սեպտեմբերի 10–ը դեռ վոչինչ չեն հանձնել:

Կարյագինցիների մասին պետք և ասենք, վոր վատ աշխատողներ չեն. անցյալ տարի յել նրանք վատ չեն աշխատել: Նրանք այժմ ել վատ չեն աշխատում հացի ու բամբակի վերաբերմամբ: Բայց յեթե լավ ես աշխատում, լավ աշխատիր բոլոր ցուցանիշների նկատմամբ: Մի մոռանաք — վատի համար մենք կհարվածենք և սոցիալական ծագումն ել նկատի չենք առնի: (Ծիծաղ):

Մի քանի ընկերներ վոչինչ չեն հասկացել կամ չեն ուզում հասկանալ, թե ինչ և ասել ընկ. Ստալինը կուլակի նոր տակտիկայի մասին, վոր ակնամոթությամբ և դործում, փորձում և խցկվել մեր խորհրդային, կոոպերատիվային, տնտեսական, կոլտնտեսային, տեղ–տեղ և կուսակցական կազմակերպությունների մեջ: Դասակարգային թշնամու դեմ պայքարելու համար փոխանակ մոբիլիզացիայի յենթարկելու բոլշևիկյան հեղափոխական աչալրջությունը, փոխանակ բոլոր տեղամասերում անխնա պայքար ծավալելու կուլակի ու նրա դործակալության դեմ՝ Լաչինի դեկավարները իրենց մոտ են հավաքել մյուս ռայոններից վտարվածներին, մերկացված և բամիցս դատապարտված կաշառակերներին, սրբ

կաներին, դողերին, խարեբաներին և նրանցով լցրել ռայոնի խորհրդային ու տնտեսական առանձին կազմակերպությունները:

Մի քանի ընկերներ ըստ յերևույթին չեն հասկացել յեվ թերևս չեն ուզում հասկանալ հունվարյան պլենումի վորոշումը և ընկ. Ստալինի ցուցմունքն այն մասին, վոր դյուղատնտեսությունը կոլտնտեսներում կազմակերպելը մեղնից պատասխանատվություն չի վերցնում, ընդհակառակը, ուժեղացնում, կրկնապատկում և մեր պատասխանատվությունը կոլտնտեսների դեկավարման նկատմամբ, ամբողջ դյուղական տնտեսության դեկավարելու նկատմամբ և վոր ամենափոքրիկ ինքնահոսն այդ դործում՝ կարող և անուղղելի վնաս հասցնել սոցիալիստական շինարարության ամբողջ դործին: Այդ կողմից մենք պետք և պատասխանատվություն պահանջենք Աղջաբեդու ռայոնի դեկավարներից, վորոնք ցանքսային, մշակման և մանավանդ մթերման կամպանիայի ամբողջ ընթացքն ինքնահոսի յեն թողել: Այդ կողմից առանձնապես աչքի յե ընկնում ռայկոմի քարտուղար Աբրահամը:

Ի դեպ, ընկ. Աբրահամն անցյալ տարի Գյոդչայի ռայոնից դյուղատնտեսական կամպանիայի ստալման համար հեռացվեց և ուղարկվեց Աղջաբեդու ռայոնը, վորտեղ բամբակի տարածությունն ավելի փոքր և, — նրա համար, վոր հնարավորություն տրվի նրան ուղղվելու: Բայց ինչպես յերեվում և, նա այդ մասին չի մտածում: Փոխանակ հաշվի առնելու Գյոդչայի իր սխալները, բոլշևիկորեն կռվելու յեվ պայքար կազմակերպելու այդ ռայոնում դյուղատնտեսական կամպանիան հաջող տանելու համար, նա պանիկա յե դրցում: Յեթե մեզ հաջողվեց Աղջաբեդու ռայոնի բամբակը փրկել և վատահ ենք, վոր այնտեղ բամբակային պլանը կկատարվի, ապա այդ քաղաքական պետ ընկ. Եփենդիյեվի բոլշևիկյան ծառայությունն և, վորն այնտեղ դնալու հենց առաջին որից սկսած՝ դործի անցավ և հաջողությամբ պլատվորից ռայոնի առաջավոր կոլտնտեսականների ակտիվությունը:

Մի քանի ընկերներ հանդատանալով ցանքսային և մշակման կամպանիաների համեմատաբար վոչ վատ արդյունքների՝ ինքնահանդատացման նվիրվեցին բամբակի համար մղված պայքարի ամենավճռական ետապում — հավաքելու

կամպանիայի ժամանակ: Այդ հիվանդությամբ է բռնված Սաբիր-Աբադի ռայոնի կուսակազմակերպությունը և քաղաքժինը, հանձին ընկ. Ալիևի, ստիպված է մեն-մենակ գլխավորել հավաքելու կամպանիան:

Ալի Բայրամլիի, Սաբիր-Աբադի և մանավանդ Սալյանի ռայոնների վորոշ աշխատողների հանդստացման որինակներ հատ ու կենտ չեն: Նրանք տեղի ունեն և մի չարք այլ ռայոններում: Այսոր մենք պետք է նախազդուշացնենք ընկերներին, վոր արմատից կկտրենք հանդստացման, ինքնաբավականության բոլոր տարրերը:

Սալյանի ընկերների անտարբերությունը, անհոգություն են արտահայտվում և ցանքային, մշակման և մթերման կամպանիաների բոլոր պրոցեսներում. դա ցայտուն կերպով արտահայտվել է մանավանդ հացահատիկային բույսերի վերջնական կալման ժամանակ և կնդուղակերի դեմ պայքարելիս: Ինչպես յերևում է, հարկ կլինի, վոր մենք հատկապես զբաղվենք Սալյանի ռայոնի հարցերով և համապատասխան յեղրակացություններ հանելով՝ ամրացնենք նրան:

1933 թվի բամբակային կամպանիայի համար մշած պայքարն ամենավճռական տեղամասերումն է դնվում: Ցեղի կուլակը, դատարկաչքչիկը, դաղն ու խարդախն աշխատում էին տապալել ցանքային, մշակման կամպանիան, ապա նրանք այժմ կրկնակի կերպով կաշխատեն տապալելու բամբակահավաքի ու մթերման կամպանիան:

Առանձին տեղերում կուլակային ագիտացիայի ազդեցության տակ քաղում են չբացված թաց բամբակը, չեն դնում բամբակահավաքի և այլն: Մյուսուսլլի դնման կետին հանձնվել է 14 բարդան հնդավոր բամբակ ցածր վորակի: Ստուդելու ժամանակ մի քանի մեջ կրակ է հայտնաբերվել: Այդ բանի հանցավորները՝ Հեյդար Գանի ողլին և Շեյիդ Խորաֆիլ ողլին մտադիր են յեղել հրդեհ դցել դնման կետում, վորտեղ 110 տոննն հնդավոր բամբակ կար և 30·000 վուքի հացամթերք:

Ցեվ այդպիսի ժամանակ դնման կետում հանդստյան որերը են սարքվում: Մի՞թե կարելի յե այդպիսի բան թուլատրել: Ցրոնտում յեղած ժամանակ կարելի՞ յե դիրքից հեռանալ:

Մի քանի ընկերներ չեն հասկացել, դուցե և չեն ուզում հասկանալ կուսակցության ու կառավարության բամբակեղեն նախազդուշացումները՝ հացահատիկների հավաքումը կազմակերպել առանց վորևե կորուստի և սոցիալիստական բերքը պահպանելու մասին. մենք Ադրբեջանի մի չարք տեղերում բերքի կորստյան ամենահանցավոր դեպքեր ունենք, մանավանդ, Որջոնիկիձեյի անվան հացահատիկային սովխոզում և Ստալինի անվան բամբակային սովխոզում: Այժմ աշխատում է կուսակցության Ցերկրային Կոմիտեյի հատուկ հանձնաժողովը, վոր քննում է Որջոնիկիձեյի անվան սովխոզի կորուստների դործը և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի հատուկ վորոշմամբ մենք առաջարկել ենք դատախազությանը՝ Ստալինի անվան սովխոզի հացահատիկի կորստյան հանցավորներին պատասխանատվության յենթարկել:

Այդ կողմից բնորոշիչ է սովխոզի դեկավար ընկ. Ասադ Կարաևի իսկական – կուլակային թեորիան: Նա հանրապետության դատախազ ընկ. Զաֆարովին ասել է, թե հացահատիկի համար մի անգամ պատասխան կտա, իսկ բամբակի համար իրենց հինդ անգամ պատասխանատվության կենթարկեն, դրա համար էլ ինքն ավելի բամբակով է զբաղված, քան հացահատիկով: Այդպիսի «թեորիայի» հետևանքով մենք Միլլի սովխոզում կորցրել ենք 30–40 հազար վուքի հացահատիկ: Ընկ. Ասադ Կարաև, յես ձեզ պետք է նախազդուշացնեմ. հացահատիկը ձերը չե. Ստալինի անվան սովխոզի այդ հացահատիկը խորհրդային պետության սեփականությունն է: Դուք չեք համարձակվի այդպես վերաբերվել պետական սեփականության հետ. մի մոռանաք ոդոստոսի 7-ի որենքը սոցիալիստական սեփականությունը պահպանելու մասին, մենք թույլ չենք տա ձեզ այդպես վարվելու:

Արդյոք, այդ սովխոզում լա՞վ է դնում բամբակաքաղի նախապատրաստության դործը: Այնտեղ բամբակը վատ չի և դա Ասադ Կարաևի ծառայությունը չէ, այլ Ցերկոմի և Ադրկոմկուսի (բ) կենտկոմի բոլոր միջոցառումների, սովխոզի հարվածայինների ծառայությունը: Հենց սկզբից կուսակցությունը բոլոր ուժերով սեղմել է այդ սովխոզին, կուսակցության Ցերկոմի հատուկ բրիգադն այնտեղ է յեղել ցանքային ու մշակման կամպանիայի ամբողջ ժամանակ,

յերկու անգամ Յերկոմի հանձնաժողովն և յեղել Անդրֆեդ թաղիայի Ժողկոմխորհի նախագահի տեղակալ ընկ. Ջուզելու նախագահությամբ՝ սովխոզի գրությունը հետազոտելու և առուղելու համար:

Միլի սովխոզը բերքահավաքի համար վատ և պատրաստ ված: Ավելի չատ գրույց, ավելի չատ խոսակցություն, քան գործ կա: Ընկ. Ռուբենը հիշում և, թե կարաևն ինչպես եր ուզում տապալել տրակտորի նորոգման նախապատրաստությունը: Սովխոզում կա հղկելու ստանոկ, վորը կարող եր ամենաքիչը 800 տրակտորի սարքավորել և միանգն և Խորհրդային Ադրբեջանում: Մի ուրիշ հողժողկոմի վրդոջմամբ այդ ստանոկը պետք և տրվեր Ադրտրակտորակենտրոնի արհեստանոցին այն պայմանով, վոր առաջին հերթին նա բոլվեն այդ սովխոզի տրակտորները: Իսկ ընկ. Կարաևր հայտարարում և. — «Ջեմ ուզում տալ» և ընկ. Լաստոչկինը նրա կողքին նստած եր ու վոչինչ չեր անում այդ խայտառակության վերջ տալու համար:

Այդ ընկերների դժբախտությունն այն չե, վոր նրանք այս կամ այն սխալն են գործում, այլ այն, վոր նրանք յերբեմն ուզղման չեն յենթարկվում: Ընկ. Ռուբենն լրամացի յե, յերբ ասում և, թե մի քանիսը 6–7 հանդիմանություն ունեն և սկի հազնելն էլ չի: Ցնս կարծում եմ, վոր այդպիսի ընկերների նկատմամբ պետք և այլ միջոց գործ գնել: Պետք և «Բակ. Բարոչի», «Կոմունիստ» թուրք., «Կոմունիստ» հայերեն, «Յենի Յոլ» և ուրիշ թերթերում ամեն որ հրապարակել այն ընկերների ազդանունները, վորոնք խանգարում են Ադրբեջանին՝ Միության մեջ առաջավոր հանրապետություն լինելուն: Հասարակական լայն բնույթ տանք դրան, կուսակցության գոման նախորյակին յերևան բերենք այդ ընկերների դեմքը, վորոնք մեղ խանգարում են, վորոնք կուսաոմոը ղրպանում վիժեցնում են մեր միջոցառումները:

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼ ԲԱՅԲԱԿԱՀԱՎԱՔԻ ԲՈԼՈՐ ԼԾԱԿՆԵՐԸ

Ընկերները, ցանքային, մշակման և գլխավորապես մթերման աշխատանքում մեր ունեցած թերությունների մասին արած այս բոլոր նկատողություններից հետո, անցնենք այն

թերություններին, վոր վարող են մեր բերքահավաքի ու մթերման կամպանիան վիժեցնել:

Համաձայն Միության Ժողկոմխորհի վորոշման, մենք պարտավոր ենք բամբակաքաղն ավարտել այս տարվա դեկտեմբերի մեկից վոչ ուշ, իսկ հնդավոր բամբակի մթերումն ավարտել մինչեվ դեկտեմբերի 15–ը: Այսպիսով բամբակաքաղի համար մնում և ընդամենը 75 որ: Միևնույն ժամանակ պետք և նկատի ունենալ, վոր հոկտեմբերի մեկից ըսկսած՝ անխուսափելի յեն անձրևային որերն, ուստի և 15 որ չպետք հաշվել անձրևային լինելու պատճառով: Այնինչ կանորեն բամբակ քաղելու համար մնում և 50–55 որ: Իսկ այսոր հավաքել ենք ութ տոկոս:

Հետևաբար պլանի հարյուր տոկոսով իրագործումն ապահովելու համար, անհրաժեշտ և որական միջին թվով հավաքել պլանի դրեթե յերկու տոկոսը:

Ահա այն տեմպերը, ժամանակի այն խտացումը, վոր մեր առաջ դնում և Ժողկոմխորհի վորոշումը: Մենք այդ տեմպերին պետք և յենթարկենք բերքահավաքի ու բամբակի մթերման վերաբերվող մեր աշխատանքի ամբողջ վերակառուցումը:

Այդ վորոշման մնացած կետերը մանրամասնորեն արտացոլված են Անդրյերկոմի ոդոստոսի 19–ի և Ադրկոմկուսի (բ) կենտկոմի ու Ադրժողկոմխորհի ոդոստոսի 15–ի վորոշումների մեջ:

Այժմ տեսնենք, թե Անդրյերկոմի վերջին նախազգուշացումից հետո ինչպես են կիրառվում նրա վորոշումները:

Սկսենք մթերող կազմակերպություններից ապարատից: Լյաքելի բամբակի գործարանում մինչեվ սեպտեմբերի 7–ը չի յեղել վոչ մի ապրանքագետ, վոչ ամպ. ընդունող, վոչ արտադրական գործակատար, մեխանիկի ոդնական, խառատ, պլանովիկ – եկոնոմիստ. Ուջարի բամբակի գործարանում չի յեղել չորս հաշվետար աշխատող, Ալի – Բայրամլուի գործարանում — յերկու ընդունող – տեսակավորող և չորս հաշվետար:

Դրա հետ միասին յեղած տեսակավորողների վորակը չափազանց ցածր և: Նրանց մեծ մասը նոր աշխատողներ են, վորոնք վորձ ու հմտություն չունեն բամբակի վորակը

ճշտով վորոշելու համար և դրա հետևանքով՝ ծռումները են կատարվում բամբակը տեսակավորելու գործում:

Տարա և ինվենտար: Թեև ընդհանուր առմամբ մթերատակարարման սխեմայով տարայի կողմից ապահովված է, սակայն հին տարայի վատ դրության ու բարդանների կարկատելու վատ վորակի հետևանքով՝ բամբակը թափվելու պատճառով անխուսափելի են կորուստները:

Ալի – Բայրամլուի գործարանը, վոր յեղիպտական բամբակի վերամշակման հմնական թաղա յի հանդիսանում է, մին չեղ այժմ լիովին ապահովված չե ռեվենդուկով. 90 հաղար մետրից այժմ միայն 15 հաղար մետր է բերված:

Բամբակի գործարանների և գնման կետերի մեծ մասը ապահովված չե բրեզենտով և բամբակի տակ գնելու պետաններով: Որինակ՝ Ալի–Բայրամլուի բամբակի գործարանին պակասում է 83 բրեզենտ և 150 գերան, Ուջարի գործարանին՝ 35 և 300:

Մեծ քանակությամբ հաց մուծելու առնչությամբ բրեզենտի և գերանների կողմից դրության խիստ լարված կլի նի, մանավանդ վոր շատ ծածկերի հատակներ քաշած չեն: Հողժողկոմատի, Ազգտնտլոտկի, մանավանդ բամբակի ռայոնների ընկերները պետք է հաշվի առնեն այդ դրությունն ու անհապաղ տեղում մոբիլիզացիայի յենթարկեն ներքին ռեսուրսները:

Պահեստատեղերը: Գրեթե բոլոր հին, անցյալ տարվա ճաերնիտով ծածկոցները փչացել են, ուստի և դրանց տակ բամբակ պահելը մեծ ռիսկի հետ է կապված: Առայժմ այդ ծածկոցները նորոգելու համար վոչ մի միջոց չի ձեռք առնը վում տեղերում — Ալի – Բայրամլու, Լյաքի, Աղդաշ, Թաուզ, Գևրան: Հողժողկոմատի, Ազգտրակտորկենտրոնի, Ազգտոտնտլոտկի, Սովխոզխլոտկի և գլխավորապես բամբակի ռայոնների ընկերները, ամենից առաջ՝ ռայկոմների քարտուղարները, ռայգործկոմների նախագահները ու նրանց տեղապահները պետք է բոլոր ուժերն ու բոլոր հնարավորությունները մոբիլիզացիայի յենթարկեն բամբակի պահպանությամբ կապմակերպելու համար:

Տրանսպորտը. — Վոչ մի տեղ պետական Սոյուզտրանսի հետ լոկալ պայմանագրեր չեն կնքված: Փոխադրական մի-

ջոցների քացակայությունը սպառնում է հնդամեր բամբակը գնման կետերից փոխադրելու գործը տապալել և բամբակազտիչ գործարանների անընդհատ ու նորմալ աշխատանքը վնասելի առաջ է կանգնեցնում:

Նույն դրության մեջ են գտնվում և յերկաթուղով կատարելիք փոխադրությունները. պարբերաբար վագոններ չտրամադրելու հետևանքով յերկաթուղու վրա գտնվող համաձյա բոլոր մթերման կետերը հնարավորություն չունեն ժամանակին հումքով ապահովելու բամբակազտիչ գործարանները: Մի քանի մթերման կետերում — Մյուսուլի, Աղդաշ, Գյոդչայ—արդեն այժմ մեծ քանակությամբ բամբակ և կուտակվել և յերեթ չտալ մի ջոցներ ձեռք չառնվեն այդ բամբակը փոխադրելու համար, ապա սեզոնի սկզբում բամբակի այրման և վչնացնելու դեպքերն անխուսափելի կդառնան:

Անդրկովկասյան յերկաթուղիների դիրեկցիայի մոտ աշխատող ընկերները, ինչպես և մենք, պետք է Անդրկովկասյան յերկաթուղու քաղաքական նշանությամբ սեղմենք ամեն կերպ, վորպեսզի բամբակի բերքն անընդհատ փոխադրվի և հանձնվի համապատասխան բամբակազտիչ գործարաններին:

Բակի պահպանությունը. — Գնման կետերի և բամբակազտիչ գործարանների մեծամասնության պահպանությունն անբավարար է՝ վորոշ դեպքերում (Լյաքի, Ուջարի) աշխատանքային կարգապահության անկման հետևանքով, իսկ վորոշ դեպքերում բավականաչափ չատ չունենալու հետևանքով:

Զագոտխլոտկի ընկերներից վճռականորեն պետք է պահանջել՝ անհապաղ բոլոր գնման կետերում, բամբակազտիչ գործարաններում վստահելի պահպանություն կազմակերպել, իսկ մեր ռայգործկոմները, ռայկոմները, քաղբաժինները պետք է ոգնեն Զագոտխլոտկին ու գնման կետերի պահպանության համար բավարար հավատարիմ մարդկանց ընտրելու:

Ճանապարհներ, կամուրջներ և լաստանավեր. — Ջնաջած քանիցս արած նախազգուշացումներին, Ազր. Ճանապարհային Տրանսպորտը մինչև այժմ ինչպես հարկն է, աշխատանք չի ծավալել և մինչև այսոր էլ հնդամեր բամբա-

կի անընդհատ փոխադրությունը չի ապահովել խճուղինե-
րով և գետուղիներով, ինչպես և բառերով: Առանձնապես
ուշագրավ է Սամուխի ռայոնը, որտեղ ճանապարհներն ու
կամուրջները նորոգելու վիճակը բացառիկ խայտառակ վի-
ճակում է գտնվում: Ավելի վատթար վիճակում է գրանը-
վում Քուռի վրայով գործող լաստանավերը վերանորոգելու
գործը:

Ընդհանրապես ճանապարհների գործը մեզ մոտ արհամ
ար դրության մեջ է, որը կարող է պատահել բերքահավաքի
և մթերման կամպանիան մի չարք վայրերում տապալենք:
Ընկ. Իսլամ Հաջիևին անձնականապես առաջարկված է յեղել
մինչեվ ամսի տասը ամբողջ աշխատանքն ավարտել: Այժմ
նա պետք է ասի, ա՞րել է արդյոք այդ բանը, թե՞ ոչ:

Հացամատակարարում. Համարյա բոլոր գնման կետերն
ու բամբակագործ գործարանները հատկապես հացի չտեմա-
րաններ չունեն:

Հացի ուղարկելու գործում ուղղակի խայտառակություն-
ներ մեր տեղի ունենում: Մուսալուլի գնման կետում պահե-
լու համար ստացականով 132 տոննա ցորեն է հանձնված, ո-
րը Ազգոպտերնոն ուղարկում է գանազան հասցեներով, մինչ
դեռ այդ միևնույն գնման կետը № 97103 կարդագրով Փո-
թիից պետք է 353 տոննա հաց ստանա: Այդպիսի անտնորինու-
թյունն առաջացնում է հանդիպական փոխադրություններ
և բեռնաթափելու, բեռնելու և այլ ավելորդ վերադրյալ ծախ-
սեր: Այդ բանում հանցավոր են նախ և առաջ Ազգոտխորհր-
դը, հանցավոր է Ազգոպտերնոն, հանցավոր են և մեր ռայ-
կոմները, մեր ռայգործկոմները: Քանիցս մենք նրանց նա-
խազգուշացրել ենք, հատուկ հեռագրեր ենք ուղարկել, որ
պետք ներկայացում բամբակային ռայոններն ուղարկվող
հացահատիկն ընդունելու համար մոբիլիզացիայի յենթար-
կեն բոլոր ազատ չենթերը: Քանիցս նախազգուշացրել ենք Ազ
գոտխորհրդին, Ազգոպտերնոյին, որպեսզի ճիշտ ստուգեն
և փոխադարձ վերհաշիվ կատարեն հանդիպական փոխադրու-
թյունները տեղիք չտալու համար: Մինչեվ ե՞րբ Ազգոտխոր-
հրդը, Ազգոպտերնոյի գլխավորները՝ ընկ. ընկ. Մայչինը և
Հատանովը պետք է խայտառակ վերաբերմունք ցույց տան
արված ցուցմունքներին:

Սեզոնային բանուժ. — Շնորհիվ Ազգոտխորհրդի
ներկայացրած ցածր գնահատականների, վոչ մի բամբակագոր-
ծող գործարան և մթերման կետ չի կարողանում անհրա-
ժեշտ քանակությամբ բեռնակիրներ հավաքագրել: Ընթացիկ
տարում գնահատումը 40 տոկոսով իջեցված և անցյալ տար-
վա համեմատությամբ: Մինչդեռ ռայոններում, այլ – Բայրամ
լիում Ազգոտերնոյի գնման կետում բեռնակիրը մի տոննն
տեղափոխելու, բեռնաթափելու համար յերկու ռուբլի յե
ստանում, իսկ Ազգոտխորհրդի գնման կետում՝ 70 կոպեկ:

Սա վոչ այլ ինչ է, յեթե վոչ Ազգոգտխորհրդի բյու-
րոկրատական – գրասենյակային հնարքով և այն ընկեր-
ներին, վորոնք աշխատավարձի նորմավորմամբ են զբաղ-
վում:

Կուլտուր – կենցաղային սպասարկում. — Չնայած
Լուսժողկոմատի, Ազերնեշրի, Առժողկոմատի և մեր մյուս
ոսկիալ – կուլտուրական կազմակերպությունների կտրուկ
համատեսությունների — բամբակաքաղի և առանձնապես
բամբակի հանձնման կուլտ –կենցաղային սպասարկումը չատ
վատ և դրված:

Տեղերում կան մթերի կամքիր թեյարաններ և առանձին
տեղերում ճաշարաններ, բայց բամբակ հանձնողներին ճա
շերն ապատ վաճառքի գներով են բաց թողնում — Ազգաշում
ճաշը՝ 5 ռ. 50 կոպ., Մուսալուլում՝ յերեք ռուբլի՝ առանց
հացի:

Ազերխատֆակի կոդմից դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ
ծաղր բամբակաքաղի և մթերման կամպանիայի հասցեին:
Տե՛ղ են դրել իրենց վնասները ծածկելու համար:

Բամբակ հանձնողի կուլտ – կենցաղային սպասարկման
մասին, առանձնապես գնման կետերում, մենք կարող ենք մի
այն մի բան ասել, յերևում է, վոր այդ բանի համար ան
միջապես պատասխանատու ընկերներից վոչ վոք, դրանց
թվում և մեր ապխա–մասսայական բաժինը, չի մտածել գնո
ման կետերում և բամբակային դաշտերում կուլտ – կենցա-
ղային աշխատանքն որինակելի կերպով դնելու մասին կու-
սակցության տված դիրեկտիվները կենսագործելու համար:
Գնման կետերի մեծամասնությունը ընթերցարան, ռադիո
չունի, իսկ յեթե վերջիններս էլ կան, ինչպես որինակ Քյուր

գամբրում, Աղդաշում, ապա դրանք էլ անգործության են մատնված՝ կարգավորված չլինելու պատճառով:

Մինչեվ հիմա չի կենսագործված գնման կետերի բանվորների ու ծառայողների մատակարարումը բարելավելու մասին Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի որոշումը 2-ի վորոշումը: Միանգամայն աննախանձելի վիճակում են գտնվում սեզոնային բանվորների բնակարանային պայմանները, որինակ՝ Ալի – Բայրամլույի գործարանում:

Բնավճար. — Ե՛լ ավելի խայտառակ վիճակ ունենք ՄՏԿ-ների կողմից բնավճարները գանձելու հարցում: Տրակտորակենտրոնի ընկերները հավիտյան հույս ունեն, վոր ինչ վոր կողմնակի մարդիկ պետք է նրանց փոխարեն կատարեն այդ գործը, կոլխոզներից լավ ուտելիքը և հանձնեն իրենց, իսկ իրենք դրա համար պարզեվ կստանան:

ՄՏԿ կողմից վոչ մի գնման կետում մինչեվ հիմա տըրված համապատասխան արձանագրությունները չկան և այն բամբակի քանակության մասին, վորը պետք է վորպես բնավճար հատկացնել:

Շամխորում սկսել են բնավճարը հանձնված բամբակի քանակությունից 20 տոկոս պահել և հասցրել են 50 տոկոսի: Սամուխում բնավճարը բոլորովին առայժմ չեն վերցնում, վորովհետեվ Գեղարդի ՄՏԿ հնարավորություն է ունեցել դրան կետերի աշխատողների չհագեցրել հատուկ պայմաններով՝ մինչև հոկտեմբերի մեկը բնավճարը հարյուր տոկոսով ծածկելու դեպքում վորոշ տոկոսային հատկացում խոստանալով, ինչպես և կոլխոզնիկների հետ՝ պարապքերը հարյուր տոկոսով ըստ ծելու համար — գնման կետերի աշխատողներին ամսեկան 70 ռուբլի վճարելով: Այս բոլորը սեղի չէ ունենում առանց կոլխոզնիկների դեմ ուժության չեվ չերբ «Շարք» կոլխոզը բողոքել է գնման կետին, թե ինչը ՄՏԿ-ն անցյալ տարվա համար բոլորովին էլ 1370 ռուբլի պարտք չի, հաշվապահը պատասխանել է. «Դե, գնացեք, այնտեղ պարզեցեք»:

Ի՞նչ են մտածում Տրակտորակենտրոնի ընկերները, նրանցից ո՞վ պետք է ՄՏԿ-ի կատարած աշխատանքի համար բընավճարն իր ժամանակին գանձելու մասին անհանգստանա:

հարկավոր է անհապաղ վերջ տալ այդ խախտումներին և հենց որվա ընթացքում համապատասխան հաշվետվություն կատարել, կոլխոզների վարչությունների հատատված ցուցակներն ունենալ բոլոր գնման կետերում:

ԲԱՄԲԱԿ ՀԱՆՁՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղդաշի գնման կետը և բամբակապտիչ գործարանը մին չեվ հիմա բարդանների համար անցյալ տարի դրամական վերցրած դրամները դեռ չեն վերադարձրել, չնայած վոր բարդաններն իր ժամանակին վերադարձված են յեղել ըստ պատկանելության: Այդ պարտքը բավականին պատկառելի մի գումար է, մոտավորապես 18 հազար ռուբլի: Այդ հանգամանքը բամբակագործարանի հեղինակությունը գցում է կոլխոզների և աշխատավոր մենատնտեսների աչքում, մանավանդ, վոր մինչև հիմա Աղդաշտոխլոպկի և մի շարք այլ պատճառների, վորոնք անմիջականորեն կախված են Զագոտխլոպկից, Զագոտպետնտից և Աղբարակտորակենտրոնից, մենք բամբակագործարանների հետ անցյալ տարվա հացի պարտքի վերաբերյալ հաշվարկում չենք կատարել:

Բամբակաբաղի և մթերման պլանավորումը. — Մինչեվ հիմա դեռ վերջնականապես տեղերում, կոլխոզներում, առանձին կոլխոզնիկների համար պարզ չե բամբակաբաղի և հանձնման վերջնական որացուցային պլանը: Այդ տեսակետից հանգանքն ընկնում է վոչ միայն Աղբարակտորակենտրոնի և ՄՏԿ-ների վրա, այլ և մեր ռայկոմների, ռայգործկոմների և քաղաքժինների վրա: Տեղերը հասցված պլանները մի չարք վայրերում մեխանիկական բնույթ են կրում, այդ պլանները կազմված են վոչ թե բամբակի այսորվա դրությունից համաձայն, այլ ուղղակի նախնական տոուգիչ առաջարկություններին համաձայն: Ցեթե անհապաղ այդ բանը չուղղվի, ապա մենք կարող ենք մեծ քանակությամբ բամբակ կորցնել:

Մենք իր ժամանակին դիրեկտիվ ենք տվել կոլխոզի բոլոր աշխատունակ ուժերը ճիշտ հաշվառելու մասին, վորպես զի ամբողջ բամբակը լիովին և իր ժամանակին հավաքելու

գործն ապահովվի: Բազմաթիվ ռայոններ այդ բանը մինչև հիմա չեն կատարել: Ցեխ լեռե առաջին օրերին չհատունատցած և թաց բամբակ քաղելու դեպքեր են յեղել, որի մասին մենք համապատասխան վորոշում ենք կայացրել, ապա ներկայումս բամբակի մատսատյական կերպով բացվելու ժամանակ, բոլոր աշխատունակ կոլխոզնիկները, առանձնապես տղամարդիկ լիովին դուրս չեն գալիս բամբակաքաղին: Բամբակաքաղի պայմաններում պետք է անողոք պայքար մղել յերկու Ֆրոնտի վրա — ինչպես չհատունացած և թաց բամբակ հավաքելու վորձերի դեմ, այնպես և ժամանակին բոլոր հատունացած բամբակը չհավաքելու վորձերի դեմ:

Բամբակի բերքը տեղերում մնարու դեմ պայքար մղելը խիստ քաղաքական նշանակություն է ստանում: Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշմամբ հավաքած ամբողջ բամբակը պետությանը հանձնելու խթանող համապատասխան մի ջոգատումներ են նախատեսված: Մեզ մնում է միայն այդ վորոշումները լիովին կենսագործել:

Հյուսխաչին Կոլկոսի ընկերների որինակով, վորոնք հրաշալի կերպով կազմակերպել են սոցիալիստական բերքի պահպանման համար մղվող պայքարը, հարկավոր է լայնորեն ծավալել կոմյերիտական և պիոներական կազմակերպությունների աշխատանքը հավելյակների, ցաք ու ցրիվ տալու, կորուստների և բամբակը տեղում պահելու դեմ մղվող պայքարում, բամբակի ամբողջ բերքը լիովին պետության հանձնելու համար մղած պայքարում:

Մենք պետք է բամբակաքաղն այնպես կազմակերպենք, վոր վոչ մի այն բոլոր աշխատունակ բնակչությունը, առանձ նապես տղամարդիկ հարյուր տոկոսով դուրս գան դաշտ բամբակ քաղելու, այլ լայնորեն այդ գործին ներգրավենք դյուղական կոմյերիտական և պիոներական կազմակերպությունները, ինչպես այդ արվել է կնդուղակների դեմ մղած պայքարում, դպրոցական պարապմունքներից ազատ ժամանակ:

Հաջողությամբ կազմակերպելով բամբակաքաղի և մթերման կամպանիան, մենք վոչ մի րոպե չպիտի մոռանանք աշնանացանի խնդիրները և 1934 թվի գարնան համար կատարելիք նախապատրաստական աշխատանքները:

Մենք պետք է անհապաղ հանրապետական ակտիվի մի մասը, դլխավորապես Հողժողկոմատի, Ադրոտրակտորկենտրոնի, Սզղազուտիլոպտրեի բոլոր դեկավար աշխատողներին ուղարկենք անմիջականորեն ռայոնները՝ ռայոնական կազմակերպությունները ոդնելու համար, իսկ ռայոնի ընկերները պետք է անհապաղ չարժվեն դեպի դյուղերը և կոլխոզները, կոլխոզային դաշտերը, գնման կետերը, բամբակապուչ գործարանները:

Այստեղ մի յերկու խոսք պետք է ասեմ բամբակի համար մղվող պայքարում Բազվի կազմակերպությունների աշխատանքի ու պատասխանատվության մասին: Ցեխե մենք այսոր հանրապետական տալով խոսում ենք ցանքսի և մշակման կամպանիայի համեմատաբար հաջողությամբ վարտարելու մասին, սակայն այդ բանից քիչ բաժին չի ընկնում Բազվի բոլշեվիկների նախաձեռնությանը, ոդնությանը և աջակցությանը: Հարկավոր է և այժմ, բամբակի համար մղվող պայքարի վճռական ետապում, նորից կազմակերպել Բազվի բոլշեվիկների այդ ոդնությունն ու այդ աջակցությունը մեր ռայոններին ու կոլխոզային կազմակերպություններին: Առանց հատվածային Ֆրոնտին մնատելու, Բազվի բոլշեվիկները հնարավորություն ունեն հրատկայական ոդնություն ցույց տալու բամբակաքաղի և մթերման կամպանիան հաջողությամբ տանելուն, վորպեսզի պատիվ Բազվի բոլշեվիկների և նրանց հետ միասին Ադրբեջանի կոլխոզնիկները կարողանան կուսակցության կենտկոմին և կառավարությանը ռապորտ տալ բամբակի պլանը կատարելու մասին:

Վորպեսզի մատնանշված բոլոր խնդրությունները վերացվեն, վորպեսզի հաջողությամբ կազմակերպենք և անցկացնենք բամբակաքաղն ու մթերման կամպանիան, 134 հազար տոն բամբակ, այդ թվում և 15 հազար տոն յեդիպատական բամբակի պլանը կատարենք և գերակատարենք, մեզ անհրաժեշտ է դյուղում տարվող մեր աշխատանքը բարձրացնել կուսակցության կողմից մեր առաջ դրված՝ սոցիալիզմի չինարարության խոշոր խնդիրների մակարդակին: Դրա համար անհրաժեշտ է, վոր մենք առանց ավելորդ ջղայնության, նախ և առաջ մենք ինքներս

բարձր կանգնենք անձնական նկատառումներից, անձնական քմահաճույքներից, անձնական հարաբերություններից, անողոք կերպով արմատախիլ անենք, քաղքենիության, դատարկապորտության բոլոր տարրերը, ստեղծենք ամուր, կերկաթե կուսակցական, արտադրական կարգապահություն՝ ռազմական կուսակցական, խորհրդային և պրոֆմիութենական կազմակերպությունների շարքերում, մեր կոլխոզների շարքերում: Առանց նայելու անձնավորության, դուրս քշենք, մերկացնենք թաղնված ոպորտունիստներին, կերկերեսանիներին, դատակարգային թշնամու մեր շարքերում դանվող դործակալներին, կուլակի, լոդբի, դողի, խարդախի, կաշառակերի և մորթեռապրաշի դեմ մղված պայքարում՝ մոբիլիզացիայի կենթարկենք բոլշևիկյան զգաստության ամբողջ դաժանությունը, բանվորական և կոլխոզային մասսաների ամբողջ ցասումը:

Ընկերներ, մեզ, առանձնապես ոչխար մսամեհատում, Ադրբիջանում անհրաժեշտ և լիակատար վճռականությամբ կենսագործել ընկ. Լենինի պատգամը.

> «Հարկավոր է դրա հետ միասին՝ ընթանալով դեպի աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հաշվի առնել կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի առանձնահատկությունները, որոնք մի կողմից պահանջում են վորպեսզի սոցիալիստական մրցության կազմակերպման հիմքերը դրվեն, իսկ մյուս կողմից պահանջում են ստախոդականությունը կերտաել այնպես, վորպեսզի պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգը չարատավորվի պրոլետարական իշխանության կիսեկտմամն վիճակի պրակտիկայով» (Լենին, «Մորհրդային իշխանության հերթական խնդիրները» 15-րդ հատ., երես 210):

Այդ ամենին հասնելու համար, մենք պետք է, վորքան կարելի չե շուտ վերջացնենք դյուղում մեր կուս. աշխատանքի վերակառուցումը կոլխոզային բջիջների մասին՝ կենտկոմի վորոշման հիման վրա, դասավորենք, դլխավորենք կոլխոզային արտադրության մեջ բոլոր պատասխանատու տեղամասերը ստուդված կուսակցական, կոմյերիտական և անկուսակցական առաջավոր կոլխոզնիկներով:

Այդ պայմաններում մենք վոչ միայն կապահովենք բամբակագործի և մթերման կամպանիայի հաջողությունը, այլ և այդ կամքանիան տանելու միջոցով տասնյակ, հարյուրավոր նոր, թարմ, կերիտասարդ կազմակերպիչներ ու ղեկավարներ կդաստիարակենք առաջավոր կոլխոզնիկների ընտն խավերից:

Այդպես ուրեմն, ընկերներ, մարտականորեն, բոլշևիկորեն, ռատիկյան ձևով, — հանուն բամբակագործի և մթերման կամպանիայի: (Ջերկարատև ծափահարություններ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

1. Համկոմկուսի (բ) կենտկոմի և ԿՎՀ հունվարյան պլենումի արդյունքները և Բագվի ու Ադրբեջանի կուսակազմակերպության խնդիրները 3
2. 1933 թ. գարնանային գյուղատնտեսական կամպանիայի խնդիրների մասին 21
3. Կուսբրիգադների խնդիրներն Ադրբեջանի գյուղում գարնանացանը տանելու գործում . . . 44
4. Գարնանային գյուղատնտեսական կամպանիան Ադրբեջանում 73
5. Հանքեն բաժակային հանրապետությունների մրցման մեջ առաջնություն ձեռք բերելուն . . . 95
6. Մարտականորեն, առալինյան ձևով հաղթանակ բաժակաքաղի և սթեռլան ֆրոնտում . 120

Հանձնված է տպագրության — 1933 թ. դեկտ. 23-ին
Ստորագրված է տպագրության — 1934 թ. հունվ. 5-ին
Տպագրական թերթերի քանակը 5¼
Տպագրական նշանների քանակը . . . . . 376·585

Главлит № 7332 ф 90 а Партиздат № 103 Ст. 364 б-б. Зак № 4522. Тир. 3000.
72×105 1/32 Тип. „III Интернационал“ Бакполиграфа БМП. Баку, ул. Сарат. Ефим. 29.

ՀՀ Ազգային գրադարան
NL0280620

19.124

90 4.

M. Ç. BAQIROV

İkinçi pambuq bazası uğrunda

AZƏRNƏŞR
Bakı — 1934